ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱԽՄԲ (ՄԱՆԻՎԱԼ)

ՄԱՆԻՎԱԼ (2010)15

Հայաստանի Հանրապետություն

Առաջընթացի հաշվետվություն, հիմնապատ հանձնատարականների գծով քարտուղարության կողմից իրականացված վերլուծություն[1]

Սեպտեմբերի 28, 2010թ.

[1]Երրորդ փուլի գնահատման արդյունքում ՄԱՆԻՎԱԼ-ին ներկայացված առաջընթացի առաջին հաշվետվություն

Հայաստանի Հանրապետությունը ՄԱՆԻՎԱԼ-ի անդամ է: Սույն հաշվետվությունը հաստատվել է ՄԱՆԻՎԱԼ-ի 33-րդ լիագումար նիստում (Ստրասբուրգ, 2010թ.-ի սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 1-ը): Սույն հաշվետվության քննության և ընդունման վերաբերյալ լրացուցիչ

տեղեկատվությունը ամփոփված է Հանդիպման հաշվետվությունում (ՄԱՆԻՎԱԼ (2010)32, http://www.coe.int/moneyval):

© [2010] Հանցավորության հիմնախնդիրների եվրոպական կոմիտե (ՀՀԵԿ)/ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների հանձնախումբ (ՄԱՆԻՎԱԼ):

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Վերարտադրությունը թույլատրվում է՝ պայմանով, որ նշվի աղբյուրը, եթե այլ բան նախատեսված չէ: Այս հրապարակման որևէ մաս չի կարող առևտրային նպատակներով թարգմանվել, վերարտադրվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ որևէ եղանակով՝ էլեկտրոնային (CD-սկավառակ, ինտերնետ և այլն) կամ մեխանիկական, ներառյալ պատճենահանումը, ձայնագրումը կամ տեղեկատվության պահպանման կամ վերականգնման համակարգը, առանց ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարության, Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության և Եվրոպայի խորհրդի նախօրոք գրավոր թույլտվության (F-67075 Strasbourg կամ dghl.moneyval@coe.int):

Բովանդակություն

1. ՖԱԹՖ-Ի ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 4

1.1. Ներածություն 4

1.2. Հիմնարար հանձնարարականների գծով ՀՀ-ի կողմից ձեռնարկված միջոցառումների մանրամասն ուսումնասիրություն 5

1.3. Հիմնական եզրակացություններ 16

2. ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 17

2.1. Ներկայիս իրավիճակի ընդհանուր նկարագիր և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի նախորդ գնահատումից հետո արձանագրված զարգացումներ 17

2.2. Հիմնարար հանձնարարականներ 27

2.3. Այլ հանձնարարականներ 43

2.4. Առանձին հարցեր 80

2.5. Երրորդ դիրեկտիվին (2005/60/EC) և Իրականացման դիրեկտիվին (2006/70/EC) առնչվող հարցեր 81

2.6. Վիճակագրական տվյալներ 84

3. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 99

3.1. Հավելված 1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի բարելավման ուղղությամբ առաջարկվող միջոցառումների ծրագիր 99

3.2. Հավելված 2. ԵՄ համապատասխան իրավական դրույթներ 123

3.3. Հավելված 3. Հապավումներ 125

Սույն փաստաթուղթը երրորդ փուլի գնահատման արդյունքում երկրի կողմից ՄԱՆԻՎԱԼ-ին ներկայացված առաջընթացի առաջին հաշվետվությունն է: Առաջընթացի հաշվետվությունների վերաբերյալ ՄԱՆԻՎԱԼ-ի 32-րդ լիագումար նիստում ընդունված որոշման համաձայն՝ սույն փաստաթուղթը արտացոլում է հիմնարար հանձնարարականների

(Հ.1, Հ.5, Հ.10, Հ.13, ՀՀ.II և ՀՀ.IV) գծով Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ ըստ ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարության վերլուծության:

Հայաստանի Հանրապետություն

Երրորդ փուլի առաջընթացի առաջին հաշվետվություն

1. ՖԱԹՖ-Ի ՀԻՄՆԱՐԱՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Ներածություն

1. Սույն փաստաթղթի նպատակն է ՄԱՆԻՎԱԼ-ի լիագումար նիստում ներկայացնել Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) առաջընթացի առաջին հաշվետվությունը, որն արտացոլում է երրորդ փուլի փոխադարձ գնահատման հաշվետվությամբ (այսուհետ՝ ՓԳՀ) մի շարք հանձնարարականների գծով բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը:

2. ՀՀ-ում երրորդ փուլի գնահատման այցն իրականացվել է 2009թ.-ի փետրվարի 23-ից մինչև մարտի 3-ը ընկած ժամանակահատվածում, որի արդյունքում կազմված ՓԳՀ-ն քննվել և ընդունվել է ՄԱՆԻՎԱԼ-ի 30-րդ լիագումար նիստում (2009թ.-ի սեպտեմբերի 21-ից 24-ը): Գործող ընթացակարգի համաձայն՝ ՀՀ-ն, առաջնորդվելով Գործընթացի Կանոնակարգի 42-րդ հոդվածով, 2010թ.-ի սեպտեմբերին կայացած լիագումար նիստում ներկայացրել է առաջընթացի իր առաջին հաշվետվությունը:

3. Սույն փաստաթուղթը կազմված է 2010թ.-ի մարտին վերանայված Գործընթացի Կանոնակարգի համաձայն, ինչը պահանջում է հիմնարար հանձնարարականների[1] գծով ձեռք բերված առաջընթացի գրավոր վերլուծություն Քարտուղարության կողմից: Առաջընթացի ամբողջ հաշվետվությունը հաղորդող երկրի և Քարտուղարության (38-40-րդ հոդվածներ) օժանդակությամբ ենթարկվում է լիագումար մարմնի հորիզոնական դիտանցմանը: Գործող ընթացակարգի համաձայն՝ երկրի առաջընթացի հաշվետվության և Քարտուղարության գրավոր վերլուծության ընդունման (նշված փաստաթղթերը ենթակա են հրապարակման) համար պահանջվում է՝ ներկայացված տեղեկատվության և ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ լիագումար մարմնի հավանությունը:

4. ՀՀ-ն Քարտուղարությանը և լիագումար մարմնին է ներկայացրել առաջընթացի վերաբերյալ ամբողջական հաշվետվություն՝ ներառյալ առաջընթացի հաշվետվության տիպային օրինակով սահմանված հիմնավորող փաստաթղթերը: Քարտուղարությունը կազմել է առաջընթացի հաշվետվության նախագիծ, որով նկարագրվել և վերլուծվել է յուրաքանչյուր հիմնարար հանձնարարականի գծով ձեռք բերված առաջընթացը:

[1] Հիմնարար հանձնարարականները սահմանված են ՖԱԹՖ-ի կողմից՝ Հ.1, Հ.5, Հ.10, Հ.13, ՀՀ.II և ՀՀ.IV:

5. Հիմնարար հանձնարարականների գծով ՀՀ-ն ստացել է հետևյալ գնահատականները.

Հ.1 – Փողերի լվացման (այսուհետ՝ ՓԼ) քրեականացում, գնահատականը՝ ՀՀ
ՀՀ.II – Ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ԱՖ) քրեականացում, գնահատականը՝ ՄՀ
Հ.5 – Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն (այսուհետ՝ ՀՊՈՒ), գնահատականը՝ ՄՀ
Հ.13 – Կասկածելի գործարքների մասին հաշվետվություններ (այսուհետ՝ ԿԳՀ), գնահատականը՝ ՀՀ
ՀՀ.IV – Ահաբեկչության վերաբերյալ ԿԳՀ-ներ, գնահատականը՝ ՀՀ

6. Սույն փաստաթղթով ներկայացվում են հիմնարար հանձնարարականների գծով արձանագրված թերությունների վերացման նպատակով ՀՀ-ի կողմից ձեռնարկված միջոցառումների ուսումնասիրությունը և վերլուծությունը (2-րդ գլուխ), ինչպես նաև ուսումնասիրության արդյունքում կատարված հիմնական եզրահանգումների ամփոփումը (3-րդ գլուխ): Սույն փաստաթուղթը հարկ է ընթերցել առաջընթացի հաշվետվության և դրան կից ներկայացված հավելվածների հետմիասին:

7. Հարկ է նշել, որ սույն փաստաթղթով ներկայացված վերլուծությունը վերաբերում է միայն հիմնարար հանձնարարականներին, հետևաբար՝ քննության է ենթարկվում փողերի լվացման և ահաբեկչության (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի համակարգի միայն մի մասը: Հաշվի առնելով այն փաստը, որ առաջընթացի վերլուծության շրջանակներում արդյունավետությունը գնահատվում է միայն հեռակա եղանակով, հնարավորինս հիմնվելով ՀՀ-ի կողմից ներկայացված տեղեկատվության ու վիճակագրության վրա, ուստի սույն վերլուծության միջոցով արդյունավետությունն ամբողջությամբ գնահատել հնարավոր չէ:

1.2. Հիմնարար հանձնարարականների գծով ՀՀ-ի կողմից ձեռնարկված միջոցառումների մանրամասն ուսումնասիրություն

1. ՓԳՀ-ի ընդունումից հետո հիմնական փոփոխություններ

8. ՓԳՀ-ի ընդունումից հետո ՀՀ-ն ձեռնարկել է հանձնարարականների գծով արձանագրված թերությունների վերացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- 2009թ.-ին հաստատվել է Միջոցառումների ծրագիրը,

- Հաստատվել է 2010-2013թթ.-ի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարությունը,
- Մշակվել են թվով 17 օրենքներում ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող փոփոխություններ («Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք (այսուհետ՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք), «ՀՀ քրեական օրենսգիրք» (այսուհետ՝ ՔՕ), «ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք» (այսուհետ՝ ՔԴՕ), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք», «ՀՀ մաքսային օրենսգիրք», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք (այսուհետ՝ ԲԳՕ), «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և իրականացման մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենք, «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենք, «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք, «Փոստային կապի մասին» ՀՀ օրենք): Փոփոխությունների փաթեթը օգոստոս ամսվա վերջին ներկայացվել է ՀՀ կառավարությանը՝ արագացված տարբերակով ընթացք տալու միջնորդությամբ,
- Իրականացվել է երկրում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական վերլուծություն (այսուհետ՝ ՌՌՎ),
- ՖԱԹՖ-ի հղումային փաստաթղթերի և այլ երկրների համանման փորձի հիման վրա մշակվել է ռիսկային ոլորտների, յուրաքանչյուր ոլորտում վերլուծության ենթակա տեղեկատվության և տեղեկատվական վստահելի աղբյուրների վերաբերյալ համապատասխան մեթոդաբանություն: Մեթոդաբանությունը հաստատվել է Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2010թ.-ի մարտի նիստում,
- 2010թ.-ի օգոստոսի 6-ին նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակների և մասնագիտությունների (այսուհետ՝ ՆՈՖԳՏՄ) համար ընդունվել են ռիսկերի վրա հիմնված մոտեցման վերաբերյալ ուղեցույցներ (այսուհետ՝ ՌՎՀՄՈՒ),
- Դատական և իրավապահ մարմինների (այսուհետ՝ ԻՊՄ), ինչպես նաև հաշվետու անձանց համար կազմակերպվել են մի շարք վերապատրաստումներ,
- Երկրի իշխանությունների հավաստմամբ՝ 2009թ.-ի հոկտեմբերից մինչև 2011թ.-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում հարուցվել են թվով 11 ՓԼ քրեական գործեր, ՓԼ մեղադրանքով դատարան են ներկայացվել թվով 3 քրեական գործեր, որոնցից 2-ի գծով կայացվել է մեղադրական, իսկ 1-ի գծով՝ արդարացնող դատավճիռ:

9. ՀՀ-ն ձեռնարկել է նաև հավելյալ միջոցառումներ, որոնք, ինչպես արտացոլված է առաջընթացի հաշվետվությամբ, ուղղված են հիմնարար և այլ հանձնարարականների գծով արձանագրված թերությունների վերացմանը. այնուամենայնիվ, նշված հանձնարարականները սույն հաշվետվության շրջանակներում չեն ընդգրկվում և, հետևաբար, չեն ենթարկվում համապատասխան վերլուծության:

2. Հիմնական հանձնարարականների գծով ձեռնարկված միջոցառումների ուսումնասիրություն

Հանձնարարական 1. ՓԼ քրեականացում (ՓԳՀ-ի գնահատական՝ հիմնականում համապատասխանում է)

10. ՓԳՀ-ում արձանագրված առաջին թերություն *(Դեռևս պարզ չէ, թե արդյոք նախորդող հանցագործության համար կայացված մեղադրական դատավճռի առկայությունը պարտադիր պահանջ է գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելն ապացուցելու համար)*: Երկրի իշխանությունների հավաստմամբ՝ ՀՀ դատախազության կոլեգիան իր՝ 2009թ.-ի հոկտեմբերի 21-ի նիստում անդրադարձել է ՓԼ քրեական հետապնդում իրականացնելուն խոչընդոտող հնարավոր գործոնների առկայության խնդրին՝ ուսումնասիրելով 2004թ.-ից մինչև 2009թ.-ի առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածում ՓԼ դեպքերով քրեական գործերի քննության նկատմամբ դատախազական վերահսկողության վերաբերյալ զեկույցը: Նիստի արձանագրությունը ներկայացված է կից հավելվածով, որտեղ պարզաբանվում են ՓԼ քրեաիրավական նորմի կիրառման վերաբերյալ առկա մեկնաբանությունները: Ի թիվս այլ եզրահանգումների, արձանագրությամբ ներկայացվում է մի շարք տեսաբանների եզրակացություններ առ այն, որ *«190-րդ հոդվածի դիսպոզիցիայում խոսք է գնում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման մասին, իսկ արարքին հանցավոր որակում կարող է տրվել միայն դատարանի՝ օրինական ուժ ստացած դատավճռով: Նման մոտեցումը սխալ է, այն կարելի է դնել միայն տեսական վերլուծությունների հիմքում, սակայն ձեռնպահ մնալ տառացի կիրառությունից»:* Երկրի իշխանությունների հավաստմամբ՝ կայացվել է համապատասխան որոշում, որն ուղղված է գործնական դժվարությունների վերացմանն ու ՓԼ՝ որպես առանձին հանցագործության գծով քննությունների իրականացմանը՝ անկախ նախորդող հանցագործության գծով կայացված մեղադրական դատավճռի առկայությունից:

11. Ողջունելի է Գլխավոր դատախազության այն նախաձեռնությունը, որով վերջինս ուսումնասիրել է կիրառվող մոտեցումը՝ համապատասխանեցնելու այն ՓԼ քրեաիրավական նորմերի պահանջներին: Բացի այդ, առաջընթացի քայլ է համարվում նաև Կոլեգիայի արձանագրություն առ այն, որ ՓԼ գործով մեղադրյալ ճանաչված անձինք կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության՝ առանց նախորդող հանցագործության գծով կայացված մեղադրական դատավճռի անհրաժեշտության:

12. Այնուամենայնիվ, պարզ չէ նիստի արձանագրությունների՝ իրավական ուժ ունենալու հանգամանքը, ավելին՝ նիստի արդյունքները հասցեագրված են ՓԼ քննություն իրականացնող դատախազներին և քննիչներին, այլ ոչ՝ նման գործերով վճիռներ կայացնող դատավորներին:

13. Տրամադրված վիճակագրության համաձայն՝ 2009-2010թթ.-ի ընթացքում թվով 9 անձինք ՓԼ հոդվածով ենթարկվել են քրեական պատասխանատվության, սակայն այս գործերով կայացված դատավճիռները պարզաբանող տվյալներ չեն ներկայացվել: Մասնավորապես, թեև դատախազների և դատավորների միջև առկա է ընդհանուր համաձայնության (ինչը հավաստվում է Կոլեգիայի արձանագրությամբ և վերապատրաստումների արդյունքներով), և անձին ՓԼ՝ որպես առանձին հանցագործության մեջ մեղավոր

ճանաչելու համար գուցեև այլևս չպահանջվի նախորդող հանցագործության գծով կայացված մեղադրական դատավճիռ կամ զուգահեռ ընթացող դատավարություն, այնուամենայնիվ՝ օգտակար կլիներ տեսնել, թե վերջին ժամանակահատվածում իրականացված դատավարությունների ընթացքում դատարաններն արդյո՞ք առաջնորդվել են վերը բերված մեկնաբանությամբ, թե՝ ոչ: Հարցը մնում է բաց՝ մինչ դատական փորձով հաստատվելը:

14. ՓԳՀ-ում արձանագրված երկրորդ թերություն (*ՓԼ քրեական գործերի սակավաթվությունը եկամուտներ առաջացնող հանցագործությունների հատկանիշներով հարուցված քրեական գործերի ընդհանուր թվի համեմատ, ինչպես նաև գույքի՝ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելը հիմնավորելու համար դատարանների կողմից կիրառվող ապացուցման բարձր չափանիշը վկայում են ՓԼ քրեաիրավական նորմի կիրառման արդյունավետության հետ կապված խնդիրների առկայության մասին*): ՀՀ-ն կարողացել է արձանագրել է հստակ առաջընթաց: Տրամադրված վիճակագրությունն արտացոլում է ՓԼ քրեական գործերի (2007թ.՝ 3, 2008թ.՝ 6, 2009թ.՝ 10, 2010թ. սեպտեմբերի դրությամբ՝ 8), դատավարությունների (2007թ.՝ 2, 2008թ.՝ 5, 2009թ.՝ 7, 2010թ. սեպտեմբերի դրությամբ՝ 6) և մեղադրական դատավճիռների (2009թ.՝ 7, 2010թ. հուլիսի դրությամբ՝ 2) թվաքանակի հստակ աճ: Իշխանությունների հավաստմամբ՝ հարուցվել և ներկայումս քննվում են ՓԼ՝ որպես առանձին հանցագործության թվով 2 քրեական գործեր:

15. Ինչ վերաբերում է ՓԼ քրեաիրավական նորմի կիրառման արդյունավետությանը, իշխանությունները հավաստել են, որ դատավորների, դատախազների և քննիչների գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Դատախազության կոլեգիայի կողմից իրականացված ուսումնասիրությունից բացի, ինչպես արդեն իսկ նշվել է, հարկ է հիշատակել նաև Կոլեգիայի կողմից Դատախազության դպրոցի տնօրենին ուղղված հրահանգն առ այն, որ դատախազների պարտադիր որակավորման շրջանակներում անհրաժեշտ է կազմակերպել ՓԼ քրեական գործերի քննման մեթոդաբանության և առանձնահատկությունների վերաբերյալ վերապատրաստումներ և սեմինարներ, իրականացնել նշված հարցերը պարզաբանող ուսուցողական այլ միջոցառումներ, ինչպես նաև դատախազության ստորաբաժանումների և այլ շահագրգիռ անձանց հետ համատեղ կազմել ՓԼ գծով գործնական ուղեցույց: Ցավոք, ի հակադրություն Կոլեգիայի կողմից տրվող այլ հրահանգների, նշված միջոցառումների իրականացման նպատակով կոնկրետ ժամկետներ սահմանված չեն:

16. Այս առումով, իշխանությունները մատնանշեցին նաև Դատական դպրոցի հովանավորության կազմակերպված մի շարք վերապատրաստումները, ինչպես նաև քննիչների, դատախազների և դատավորների համար ՓԼ/ԱՖ գործերով քննություն և դատավարություն իրականացնելու թեմայով 2010թ.-ի սեպտեմբերին Դատախազության դպրոցում կայանալիք սեմինարը: Կոլեգիայի որոշման համաձայն՝ պետք է կազմվի նաև ՓԼ/ԱՖ քննությանը վերաբերող թղթային և էլեկտրոնային նյութերի շտեմարան, ինչը հասանելի կլինի ԻՊՄ-ներին:

17. Որպես ամփոփում նշենք, որ հետևելով ՓԳՀ-ով տրված առաջարկություններին՝ ՀՀ իշխանությունները, իրականացնելով

ՓԼ գործերով քրեական հետապնդում իրականացնելուն խոչընդոտող հանգամանքների ուսումնասիրություններ և վերապատրաստումներ, ձեռնարկել են մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են պարզաբանելու, թե ՓԼ՝ որպես առանձին հանցագործության գծով մեղադրական դատավճիռներ կայացնելու գործում ինչպիսի խոչընդոտներ է ստեղծում գույքի՝ նախորդող կոնկրետ հանցագործության արդյունքում առաջանալն ապացուցելու համար պահանջվող ապացույցների չափանիշը: Բնական է, որ սույն վերլուծության շրջանակներում հնարավոր չէ գնահատել նման վերապատրաստումների որակն ու դրանց ազդեցությունը մասնակիցների և նրանց գործնական աշխատանքի վրա: Նման միջոցառումները պետք է համակողմանիորեն ուղղված լինեն քննիչների, դատախազների ու դատավորների նախնական և ընթացիկ վերապատրաստմանը: ՓԼ քրեաիրավական նորմի մեկնաբանության հետ կապված խնդիրները կլուծվեն դատական փորձով հաստատվելու դեպքում, երբ արձանագրված թերությունները կհամարվեն ամբողջովին վերացված:

<u>Հատուկ հանձնարարական II. ԱՖ քրեականացում (ՓԳՀ-ի գնահատական՝ մասամբ համապատասխանում է)</u>

18. ՓԳՀ-ում <u>արձանագրված առաջին թերություն</u> *(ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի համաձայն՝ ահաբեկիչների կամ ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորումը չի քրեականացվում այն իրավիճակներում, որոնցում գույքը կամ ֆինանսական միջոցները տրամադրվում կամ հավաքագրվում են՝ չունենալով մտադրություն կամ իմացություն, որ գույքը կամ ֆինանսական միջոցներն օգտագործվելու են ահաբեկչական կոնկրետ գործողություն կատարելու համար, ինչպես պահանջվում է ՀՀ.II-ով)*: 217.1-րդ հոդվածի նախագծի համաձայն (ինչը արտացոլված է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին ՀՀ օրենքի նախագծում)՝ *«Ահաբեկչության ֆինանսավորումը ցանկացած եղանակով գույքի ուղղակի կամ անուղղակի տրամադրումն է կամ հավաքագրումը այնպիսի հանցավոր մտադրությամբ, որ այն պետք է օգտագործվի, կամ այնպիսի գիտակցությամբ, որ այն ամբողջովին կամ մասամբ կօգտագործվի ահաբեկչության կատարման համար կամ ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից ...»:* Օրինական ուժ ստանալու դեպքում՝ հոդվածն այս խմբագրությամբ կարող է համապատասխանել հանձնարարականի պահանջներին:

19. ՓԳՀ-ում <u>արձանագրված երկրորդ թերություն</u> *(Հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասում օգտագործված եզրույթների անհամապատասխանության պատճառով («ֆինանսական միջոցներ» և «ահաբեկչության ֆինանսավորման առարկա») պարզ չէ, թե արդյոք ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը կիրառելի է «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայով սահմանված բոլոր «միջոցների» նկատմամբ)*: «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» մասին ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը, որով վերախմբագրվում է ՔՕ-ի 55-րդ հոդվածը, ՔՕ-ի և համապատասխան դրույթների առկայության դեպքում՝ այլ օրենքների նպատակով սահմանում է «գույք» եզրույթը, ինչը համապատասխանում է ՖԱԹՖ-ի մեթոդաբանությամբ տրվող համապատասխան սահմանմանը: Նշված

խնդիրը, կարծես թե, նույնպես լուծվում ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի փոփոխության նախագծով:

20. ՓԳՀ-ում արձանագրված երրորդ թերություն *(ՔՕ-ի 217-րդ հոդվածով («ահաբեկչություն») պահանջվող դիտավորության տարրը մասնակիորեն սահմանափակում է ԱՖ քրեաիրավական նորմի կիրառությունը «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի հավելվածում թվարկված ինը կոնվենցիաներով և արձանագրություններով նախատեսված ահաբեկչական հանցագործությունների մեծ մասի նկատմամբ):* Ահաբեկչության վերաբերող՝ ՔՕ-ի 217-րդ հոդվածը թվարկում է այն արարքների ցանկը, որոնք, որոշակի պայմաններում, համարվում են ահաբեկչություն: Հետևելով ՓԳՀ-ով տրված առաջարկություններին՝ կազմվել է ՔՕ-ի 217-րդ հոդվածի փոփոխության նախագիծ, որտեղ որոշակի արարքների թվարկման նախկին մոտեցման փոխարեն հստակ հղում է կատարված Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) 1999թ.-ի կոնվենցիայինկից փաստաթղթերին:

21. ՓԳՀ-ում արձանագրված չորրորդ թերություն *(ԱՖ քրեաիրավական նորմում օգտագործված՝ «ահաբեկչության» սահմանումը չի պարունակում հղում «միջազգային կազմակերպություններին», ինչը պահանջվում է «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայով):* ՔՕ-ի 217-րդ հոդվածի փոփոխության նախագիծը հստակ հղում է կատարում միջազգային կազմակերպություններին *(«... կամ ճնշում գործադրել միջազգային կազմակերպության կառավարման մարմնի վրա»)*:

22. ՓԳՀ-ում արձանագրված հինգերորդ թերություն *(Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունն նախատեսված չէ):* Ինչպես ՓԼ, այնպես էլ ԱՖ դեպքում քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ֆիզիկական անձինք: ՓԳՀ-ում անդրադարձ էր կատարվել վարչական տուգանքների կիրառման հնարավորությանը. այնուամենայնիվ, առաջարկվել էր փոփոխել օրենսդրությունը՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրման նպատակով:

23. Իշխանությունների հավաստմամբ՝ վերոնշյալ հարցը խորությամբ քննարկվել է Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2010թ.-ի մարտին կայացած նիստում և Գլխավոր դատախազության հետ կազմակերպված լրացուցիչ քննարկումների ընթացքում, որոնց արդյունքում արտահայտված կարծիքների համընկնմամբ՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը հակասում է սահմանադրության դրույթներին (21-րդ հոդված՝ *«Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»*) և ՔՕ-ի (23-րդ հոդված) այն սկզբունքին, որի համաձայն՝ քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ֆիզիկական անձինք: Այնուամենայնիվ, գնահատող խումբն ուսումնասիրել է ներկայացված փաստարկները և եկել այն եզրակացության, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրմանը խոչընդոտող որևէ հիմնարար սկզբունք ՀՀ օրենսդրությունը չի պարունակում:

24. Այս առումով, իշխանությունները մատնանշեցին նաև գոյություն ունեցող վարչական պատժամիջոցները («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ գործող օրենքի 28-րդ հոդված), որոնք ՓԳՀ-ում գնահատվել են

որպես համաչափ և տարհամոզիչ, ինչպես նաև «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծով (30-րդ հոդված) սահմանված վարչական պատժամիջոցները, որոնք, ըստ էության, որևէ փոփոխություն չեն նախատեսում:

25. Որպես ամփոփում նշենք, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրման գծով տրված առաջարկության առումով որևէ քայլ չի իրականացվել կամ նախատեսվել, քանի որ ՀՀ իշխանությունների դիրքորոշմամբ՝ նշվածը հարցը հակասում է ՀՀ սահմանադրության և ՔՕ-ի սկզբունքներին:

<u>Հանձնարարական 5. ՀՊՈՒ՝ ֆինանսական հաստատությունների (այսուհետ՝ ՖՀ) մասով (ՓԳՀ-ի գնահատական՝ մասամբ համապատասխանում է)</u>

26. <u>ՓԳՀ-ում արձանագրված առաջին թերություն</u> *(Առկա են ըստ ներկայացնողի ֆինանսական գործիքների, որոնք որոշ դեպքերում նմանվում են անանուն հաշիվների):* Ինչ վերաբերում է անանուն կամ մտացածին անուններով հաշիվներին, ՓԳՀ-ում կատարվել է անդրադարձ առ այն, որ 2006-2008թթ.-ի ընթացքում թվով 14 բանկերում (ընդհանուր առմամբ՝ առկա են թվով 22 բանկ) իրականացված ստուգումների արդյունքում անանուն հաշիվներ չեն հայտնաբերվել: Թեև առաջընթացի հաշվետվությամբ չի պարզաբանվել մնացած բանկերում առկա վիճակը (որոնք 2008թ.-ի դրությամբ չեն ստուգվել), իշխանությունները հավաստում են, որ ՀՀ-ում գործող բոլոր բանկերում իրականացված ստուգումների արդյունքում նման հաշիվներ որևէ բանկում չեն հայտնաբերվել: Ուստի, բացառվում է նման հաշիվների առկայության/սպասարկման ռիսկը:

27. Ինչ վերաբերում է ըստ ներկայացնողի ֆինանսական գործիքներին, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ արգելվում է բացել, թողարկել, տրամադրել կամ սպասարկել 1) անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ, 2) միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ, 3) ըստ ներկայացնողի արժեթղթեր և վճարային գործիքներ:

28. Իշխանությունները նշեցին նաև, որ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» 148-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով կարող է բացառվել որոշակի տեսակի արժեթղթերի թողարկումը, ինչպիսիք են, օրինակ՝ ըստ ներկայացնողի (օրդերային), անվանական կամ համանման այլ արժեթղթերը: ՓԳՀ-ով առաջարկվել էր «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում» և համապատասխան այլ ենթաօրենսդրական ակտերում սահմանված դրույթներն ուժը կորցրած ճանաչելու կամ փոփոխելու միջոցով արգելել ըստ ներկայացնողի բանկային գրքույկների, ավանդային վկայագրերի և ըստ ներկայացնողի այլ արժեթղթերի շրջանառությունը: Դեռևս պարզ չէ, թե ինչով է պայմանավորված ՀՀ իշխանությունների՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում» սահմանված հայեցողական դրույթը (այն է՝ *«օրենքով կարող է բացառվել»*) պահելու դիրքորոշումը:

29. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանված ուղղակի արգելքը, նախագծի ընդունման դեպքում, անկասկած կփարատի փոխադարձ գնահատմամբ բարձրացված մտահոգությունը:

30. Մեկ անգամ ևս նշելով նախկինում կատարված եզրահանգումը՝ վերոնշյալ գործիքների անանուն և փոխանցելի բնույթը (մինչ նախագծի ընդունումն ու ուժի մեջ մտնելը) դեռևս համարվում է լուրջ խոչընդոտ՝ ՖՀ-ների կողմից ընթացիկ կարգով իրականացվող պատշաճ ուսումնասիրության առումով: Ավելին, այս պահին դեռևս պարզ չէ, թե ինչ հեռանկար և ժամկետներ ունեն գոյություն ունեցող ըստ ներկայացնողի ֆինանսական գործիքների առումով ձեռնարկվելիք հնարավոր միջոցառումներն ու գործընթացները:

31. ՓԳՀ-ում արձանագրված երկրորդ թերություն *(ՖՀ-ներից չի պահանջվում ա) ընդունել ռիսկերի արդյունավետ կառավարման ընթացակարգեր այն իրավիճակների դեպքում, որոնցում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը, և բ) ՀՊՈՒ միջոցառումներն էականության և ռիսկի հիման վրա կիրառել առկա հաճախորդների նկատմամբ և համապատասխան պարբերականությամբ իրականացնել առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրություններ):* «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ հաշվետու անձանցից պահանջվում է օրենքով սահմանված նույնականացման տվյալների հիման վրա ստուգել հաճախորդի ինքնությունը գործարար հարաբերություն հաստատելու կամ միանգամյա գործարք կատարելու ընթացքում, կամ դրանից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի քան յոթնօրյա ժամկետում, եթե արդյունավետորեն կանխարգելված է ռիսկը: Նշվածն ավելի մանրամասնեցված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածով, որոնց համաձայն՝ հաշվետու անձանցից պահանջվում է ներդնել ռիսկերի կառավարման համարժեք գործընթացներ: Նախագծի 15-րդ հոդվածի համաձայն՝ հաշվետու անձինք պարտավոր են նաև պարզել իրական շահառուի առկայությունը, և առկայության դեպքում՝ 15-րդ հոդվածի 1-4-րդ մասերով և 8-րդ մասով սահմանված կարգով նույնականացնել վերջինիս և ստուգել նրա ինքնությունը: Իրավաբանական անձանց դեպքում, նույնականացման պահանջը վերաբերում է պետական գրանցման փաստաթղթի, ինչպես նաև պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկություններին, որոնք առնվազն պետք է ներառեն իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման համարը, գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը և առկայության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկություններ: Ավելին, հաշվետու անձինք պետք է լիարժեք տեղեկատվություն ստանան նաև իրավաբանական անձի մասնակցության և վերահսկողության կառուցվածքի վերաբերյալ: Թեև թույլատրվում է նշված տեղեկատվությունը հավաքագրել յոթնօրյա ժամկետում, այնուամենայնիվ՝ չի բացառվում, որ լիարժեք նույնականացումն իրականացվի նաև ավելի երկար ժամանակահատվածում:

32. Հարկ է նշել, որ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծով տրված իրական շահառուի սահմանումը համապատասխանում է ՖԱԹՖ-ի կողմից առաջարկվող տարբերակին և ներառում է ավելի խիստ սահմանաչափ (առնվազն 20%), քան եվրոպական ստանդարտներն են: Այնուամենայնիվ, պետք է նշել նաև, որ սահմանման մեջ կիրառվող *«կարող է»* բառը կարող է հանգեցնել այս դրույթի հայեցողական կիրառությանը:

33. «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 9-րդ պարբերության համաձայն՝ բոլոր հաշվետու անձինք պարտավոր են անհրաժեշտ պարբերականությամբ և դեպքերում առկա հաճախորդների

նկատմամբ ևս իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով այդ հաճախորդներին հատուկ ռիսկերն ու դրանց էականությունը:

34. ՓԳՀ-ով առաջարկվել է ՖՀ-ների համար մշակել լրացուցիչ ուղեցույց, ինչը կպարզաբանի հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների թարմացման անհրաժեշտ ժամանակահատվածը՝ ապահովելու համար նշված պահանջի համարժեք և արդյունավետ կիրառությունը: Այս առումով, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված ուղղակի պահանջը կոչված է վերացնելու նշված թերությունը: Հաշվետու անձինք կարող են իրենք սահմանել տեղեկությունների թարմացման հաճախականությունը, սակայն հաճախորդի պատշաճ (այդ թվում՝ հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկությունները պետք է թարմացվեն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ ապահովելու համար տեղեկությունների արդիականությունն ու վերաբերելիությունը:

35. Իշխանությունները նշեցին նաև, որ 2010թ.-ի օգոստոսի 10-ին Ֆինանսական դիտարկումների կենտրոնի (այսուհետ՝ ՖԴԿ) կողմից հրապարակվել է շրջաբերական գրություն[2], որի համաձայն՝ հաշվետու անձանց առաջարկվում է առնվազն տարեկան կտրվածքով թարմացնել հաճախորդների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունները: Չուտ խորհրդատվական բնույթ ունեցող այս քայլը, սակայն, չի կարող համարվել բավարար՝ ապահովելու համար բոլոր ՖՀ-ների կողմից հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության թարմացման հետևողական գործընթացը: Այնուամենայնիվ, իշխանությունները նշեցին, որ այս առումով՝ ՖՀ-ների ներքին իրավական ակտերը նույնական են, այսինքն՝ ամենուրեք սահմանված է տեղեկությունների թարմացման տարեկան պարբերականություն:

36. ՓԳՀ-ում արձանագրված երրորդ թերություն *(«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով և հարակից այլ իրավական ակտերով նախատեսված պարտավորությունների ոչ բավարար/ ոչ արդյունավետ կատարումը ՖՀ-ների, հատկապես՝ վարկային կազմակերպությունների և ոչ բանկային այլ ՖՀ-ների կողմից):* Իշխանությունները նշեցին, որ 2009թ.-ի ընթացքում, ՀՀ-ում գործող բոլոր առևտրային բանկերի ներկայացուցիչների համար կազմակերպվել են բանկերի համապատասխանության գործառույթի ընդհանուր արդյունավետության բարձրացման թեմայով մի շարք վերապատրաստումներ և խորհրդատվական հանդիպումներ (հայտնի չէ նշված միջոցառումները կազմակերպող կազմակերպության անվանումը): Այնուհետև՝ 2010թ.-ի ընթացքում, բանկերի, ՖՀ-ների, հաշվապահական և աուդիտորական ընկերությունների, իրավաբանների, անշարժ գույքի գործակալների, խաղատների, վերահսկող և պետական մարմինների համար ՖԴԿ-ի կողմից կազմակերպվել են «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջների արդյունավետ իրականացման թեմայով (առանձին ոլորտներին հատուկ կասկածելիության չափանիշներ, տիպաբանություններ և կասկածելիության հիմքերի բացահայտման մեթոդներ) մի շարք քննարկումներ:

37. Դժվար է հեռակա ուսումնասիրության շրջանակներում գնահատել ՖՀ-ների կողմից իրականացվող ՀՊՈՒ-ի համարժեքության մակարդակը:

[2] Տես ՖԴԿ-ի ինտերնետային կայքը՝
http://www.cba.am/CBA_SITE/downloads/fmc/news/Frequently_asked_questions_1_eng.pdf

Նշվածը կարող է պատշաճ կերպով գնահատվել միայն գործնական այցի շրջանակներում՝ համակողմանի տեղեկատվության ստացման, համապատասխան անձանց և վերահսկող մարմինների հետ հանդիպումների արդյունքում: Միևնույն ժամանակ, վերապատրաստումների կազմակերպումն ինքնին վկայում է դրական զարգացումների մասին, ինչը, անշուշտ, անհրաժեշտ է շարունակել, հատկապես՝ վարկային և ոչ բանկային ՖՀ-ների իրազեկության մակարդակի բարձրացման և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական և ենթաօրենսդրական պահանջների առավել արդյունավետ իրականացման նպատակով:

38. Որպես ամփոփում նշենք, որ բացահայտված թերությունների վերացման և ՓԳՀ-ով տրված առաջարկությունների իրագործման նպատակով ՀՀ-ն մշակել է մի շարք օրենսդրական փոփոխություններ և կազմակերպել մի շարք վերապատրաստումներ ինչպես ՖՀ-ների, այնպես էլ ՆՈՖԳՏՄ-ների համար: Մինչ օրենսդրական նախագծերի ընդունումն ու օրինական ուժ ստանալը, արդեն իսկ կիրառելի միակ նախաձեռնությունը 2010թ.-ին հրապարակված շրջաբերական գրությունն է, որի համաձայն՝ առաջարկվում է տարեկան կտրվածքով թարմացնել հաճախորդների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունները: Օրենսդրական փոփոխությունների և նախատեսվող ուղեցույցների նախագծերի շրջանառությունը (վերապատրաստումների ընթացքում և գրավոր եղանակով) վկայում է այն մասին, որ իշխանություններն իսկապես մտադրված են վերացնել Հ.5-ի գծով բացահայտված թերություններն ու իրագործել դրանց գծով տրված առաջարկությունները: Լիագումար մարմինը նույնպես կոչ է անում ՀՀ-ին ապահովել սահմանման պարտադիր և լիարժեք ընդունումը. առավել խիստ սահմանումը չի ենթադրում արդյունավետ կիրառության:

<u>Հանձնարարական 10. Տեղեկատվության պահպանում (ՓԳՀ-ի գնահատական՝ հիմնականում համապատասխանում է)</u>

39. <u>ՓԳՀ-ում արձանագրված առաջին թերություն</u> *(Չկան ուղենիշներ, որոնցով «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմաններ» հասկացության կապակցությամբ կպարզաբանվեր, թե որ պայմանների նկատմամբ են տարածվում տեղեկությունների պահպանման պահանջները գործարքի՝ պայմանագիր չլինելու դեպքում):* «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածն այլևս չի ներառում *«գործարքի հիմնական պայմաններ»* արտահայտությունը, քանի որ հաշվետու անձանց կողմից տեղեկատվության պահպանման վերաբերյալ հոդվածը վերախմբագրվել է՝ Հ.10-ի պահանջներն առավել ամբողջական կերպով արտացոլելու նպատակով:

40. Թեև բացահայտված թերությունները վերացնելու նպատակով ՀՀ-ն կազմել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ (դեռևս չի ընդունվել և ստացել օրինական ուժ), այնուամենայնիվ, չեն կազմվել ուղեցույցներ, որոնցով *«գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմաններ»* հասկացության կապակցությամբ կպարզաբանվեր, թե որ պայմանների նկատմամբ են տարածվում տեղեկությունների պահպանման պահանջները գործարքի՝ պայմանագիր չլինելու դեպքում:

<u>Հանձնարարական 13. ԿԳՀ (ՓԳՀ-ի գնահատական՝ հիմնականում համապատասխանում է)</u>

41. <u>ՓԳՀ-ում արձանագրված առաջին թերություն</u> *(ՖՀ-ների կողմից տրամադրվող՝ ԿԳՀ-ները սակավաթիվ են)*: ՓԳՀ-ում բարձրացվել էր ՖՀ-ների կողմից ԿԳՀ-ների տրամադրման արդյունավետության հարցը. չնայած կասկածելիության չափանիշների և ԿԳՀ տրամադրելու պարտավորության վերաբերյալ իրազեկության բարձր մակարդակին՝ տրամադրված ԿԳՀ-ների քանակը համարվում է բավականին ցածր: Այս առումով, օրենքով սահմանված պարտավորությունների վերաբերյալ հաշվետու անձանց անձնակազմի պատշաճ իրազեկությունը ապահովելու նպատակով՝ առաջարկվել էր հաշվետու անձանց համար կազմակերպվել լրացուցիչ վերապատրաստումներ, հատկապես՝ կասկածելի գործարքների վերհանման և տրամադրման վերաբերյալ, ներառյալ՝ առկա տիպաբանություններն ու միտումները (հիմնականում՝ ՆՈՖԳՏՄ-ների մասով):

42. Ինչպես արդեն իսկ նշվել է, իշխանությունների հավաստմամբ՝ հաշվետու անձանց համար 2009-2010թթ.-ի ընթացքում կազմակերպվել են մի շարք վերապատրաստումներ և խորհրդատվական հանդիպումներ, որոնց թեմաներն ընդգրկել են նաև ԿԳՀ-ներին վերաբերող խնդիրները: Նշված վերապատրաստումների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն անհրաժեշտ աստիճանի համապարփակ չէ՝ հիմնավոր եզրակացություններ կատարելու համար:

43. Այնուամենայնիվ, դրական է համարվում տրամադրված ԿԳՀ-ների թվաքանակի էական աճը: Եթե գնահատման ժամանակ արձանագրվել են 2007թ.-ի և 2008թ.-ի ընթացքում տրամադրված, համապատասխանաբար, թվով 27 և 37 ԿԳՀ-ներ, ապա 2009թ.- ընթացքում հաղորդվել են թվով 72, իսկ 2010թ.-ի առաջին ութ ամիսների ընթացքում՝ թվով 382 ԿԳՀ-ներ: Մինչդեռ նշվածը կարող է վկայել ԿԳՀ-ների տրամադրման համակարգի արդյունավետության բարձրացման վերաբերյալ, այնուամենայնիվ, դեռևս նկատելի է ԿԳՀ-ների հաղորդման պահանջի անհավասար կիրառությունը բանկերի և ոչ բանկային ՖՀ-ների ու ՆՈՖԳՏՄ-ների միջև: Բացառությամբ մեկ կամ երկու դեպքերի՝ ԿԳՀ-ները տրամադրվում են դեռևս միայն բանկային համակարգի կողմից: ՖԴԿ-ի, հատկապես՝ Վերլուծությունների բաժնի անձնակազմի անբավարար թվաքանակի և դրա հետ կապված՝ արդյունավետության խնդիրների գծով բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը գնահատելիս պետք է հաշվի առնել նաև վերը շարադրված խնդիրը:

44. Դրական աճ է արձանագրվել նաև ՖԴԿ-ի կողմից վերլուծված գործերի/ դրվագների[3] քանակի գծով (ի հակադրություն 2007թ.-ի և 2008թ.-ի, համապատասխանաբար, թվով 35 և 46 գործերի/ դրվագների, 2009թ.-ին վերլուծվել են թվով 111, իսկ 2010թ.-ի առաջին ութ ամիսների ընթացքում՝ թվով 79 գործեր/ դրվագներ), թեև նշված վիճակագրությունը չի սահմանափակվում միայն ԿԳՀ-ների գծով իրականացված վերլուծություններով (ինչպես նշվել է իշխանությունների կողմից ներկայացված մեկնաբանություններում): Իրավապահ մարմիններին հաղորդված

[3] Դրվագը իշխանությունների կողմից սահմանվում է որպես ՖԴԿ-ի կողմից ստացված ազդակների կամ տեղեկությունների (այդ թվում՝ ազգային և միջազգային գործընկերների կողմից ստացված հարցումներ կամ տեղեկացումներ) հիման վրա կատարված նախնական վերլուծություն, որը չի հանգեցնում ՖԴԿ-ի կողմից հավելյալ վերլուծության կամ հետագա քայլերի իրականացման:

գործերի քանակը փոքր-ինչ նվազել է 2009թ.-ին (թվով 9 գործ՝ ի հակադրություն նախորդ տարվա թվով 11 գործերի), սակայն ավելացել է 2010թ.-ին (թվով 13 գործ):

45. Որպես ամփոփում նշենք, որ ՀՀ-ի կողմից ներկայացված հիմքերը վկայում են ԿԳՀ-ների տրամադրման պահանջի կիրառման արդյունավետության բարձրացման մասին, թերևս՝ բանկային համակարգում, ինչը, գուցեև, արդյունք է լրացուցիչ վերապատրաստումների իրականացման: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է ոչ բանկային ՖՀ-ներին և հաշվետու այլ անձանց, ներկայացված վիճակագրությունը չի արտացոլում ԿԳՀ-ների տրամադրման պարտավորության իրականացման գծով ձեռք բերված որևէ շոշափելի առաջընթաց:

<u>Հատուկ հանձնարարական IV. ԿԳՀ (ՓԳՀ-ի գնահատական՝ հիմնականում համապատասխանում է)</u>

46. <u>ՓԳՀ-ում արձանագրված առաջին թերություն</u> *(ուղեցույցների բացակայությունը խոչընդոտում է հաշվետվություն տրամադրելու պարտավորության արդյունավետ կատարումը):* ՓԳՀ-ում բարձրացվել էր նաև ԱՖ-ին վերաբերող ԿԳՀ-ների տրամադրման պարտավորության իրականացման արդյունավետության հարցը և առաջարկվել էր իշխանություններին մշակել միջոցների սառեցման պարտավորության և ԱՖ տիպաբանությունների վերաբերյալ համապատասխան ուղեցույցներ:

47. ԱՖ-ին վերաբերող ԿԳՀ-ների գծով փոփոխություններ չեն արձանագրվել: Ինչ վերաբերում է ՓԳՀ-ով տրված առաջարկության իրագործմանը, իշխանությունների հավաստմամբ՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի հիման վրա ՖԴԿ-ի կողմից մշակվել է միջոցների սառեցման պարտավորության վերաբերյալ պաշտոնական ուղեցույցի նախագիծ, որը հրապարակվելու է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմանը և օրինական ուժ ստանալուն հաջորդիվ: Հաշվի առնելով այն փաստը, որ ուղեցույցի նախագիծը չի տրամադրվել, նշված նախագծի համարժեքության և միջոցների սառեցման պարտավորության համապարփակ ներկայացման վերաբերյալ որևէ մեկնաբանություն կատարել անհնար է: Իշխանությունները հավաստեցին, որ մշակվել են նաև ԱՖ տիպաբանություններ, որոնք ենթակա են հրապարակման առաջիկա 2-3 ամիսների ընթացքում:

48. Վերը նշված միջոցառումները վկայում են ՓԳՀ-ում արձանագրված թերությունների վերացման և առաջարկությունների իրագործման հարցում դեռևս շարունակվող աշխատանքների վերաբերյալ: Կարելի է ենթադրել, որ նախատեսվող օրենսդրական փոփոխությունների օրինական ուժ ստանալու և համապատասխան ուղեցույցների հրապարակման արդյունքում կբարձրանա ԿԳՀ-ների տրամադրման պարտավորության կատարման արդյունավետությունը:

1.3. Հիմնական եզրակացություններ

49. ՓԳՀ-ի ընդունումից հետո, արձանագրված թերությունները վերացնելու և տրված առաջարկություններն իրագործելու նպատակով ՀՀ-ն առաջնորդվել է միջոցառումների իրականացման հստակ ծրագրով:

50. Արդյունքում, մշակվել և ՀՀ կառավարության է ներկայացվել թվով 17 օրենքներում փոփոխությունների իրականացման օրինագիծ (ներառյալ՝ փոփոխություններ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում և ՔՕ-ում), ինչպես նա և մշակվել են համապատասխան ուղեցույցների նախագծեր. նշված միջոցառումները միանշանակ վկայում են իշխանությունների՝ բացահայտված թերությունների վերացմանն ուղղված խիստ հետևողականության մասին: Օրինական ուժ ստանալու դեպքում, նախատեսվող օրենսդրական փոփոխությունները կուղղվեն վերը նկարագրված հանձնարարականների գծով ՓԳՀ-ում արձանագրված գրեթե բոլոր թերությունների վերացմանը: Առաջընթաց չի արձանագրվել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրման առումով, իսկ ՓԼ քրեաիրավական նորմի մեկնաբանության և կիրառության շուրջ բարձրացված խնդիրները դեռևս ենթակա են պարզաբանման դատական փորձի հաստատման արդյունքում: Առաջընթացի հաշվետվությանը կից ներկայացված վիճակագրությունը արդյունավետության հարցում արտացոլում է որոշակի առաջընթաց, սակայն արդյունավետության խնդիրները դեռևս դիտարկվում են ըստ վերը նկարագրվածի:

51. Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով այն փաստը, որ առաջընթացի սույն հաշվետվությունը ներառում է ՓԳՀ-ի ընդունմանը հաջորդող ընդամենը մեկ տարվա ժամանակահատված, կարելի է փաստել, որ հիմնարար հանձնարարականների գծով բացահայտված թերությունների հիմնական մասը վերացնելու ուղղությամբ ՀՀ-ն արձանագրել է բավարար առաջընթաց: Ինչպես նշվել է սույն հաշվետվությամբ, լրացուցիչ քայլեր են անհրաժեշտ դեռևս մի շարք ուղղություններով: Այսպիսով, խրախուսելի են Միջոցառումների ծրագրի իրականացմանն ուղղված ՀՀ-ի հետագա քայլերը, հատկապես՝ օրենսդրական փոփոխությունների վերոնշյալ փաթեթը ողջամիտ ժամկետում ընդունելու առումով: Փաթեթի ընդունման դեպքում (պայմանով, որ համապատասխան փոփոխությունները կհամապատասխանեն ՖԱԹՖ-ի ստանդարտներին) ՀՀ իշխանությունները պետք է ապահովեն կանխարգելիչ ընդհանուր իրավական համակարգի (հարակից համապատասխան օրենքներ, որոշումներ, հրահանգներ, կարգադրություններ և այլն) համախմբվածությունը, ներդաշնակությունը և կիրառությունը:

52. Որպես ամփոփում նշենք, որ առաջընթացի սույն հաշվետվության վերլուծության շրջանակներում տեղի ունեցած քննարկումների արդյունքում լիագումար մարմինը բավարար համարեց ներկայացված տեղեկատվությունն ու իրականացվող առաջընթացը և, այսպիսով, հաստատեց առաջընթացի սույն հաշվետվությունը և հիմնարար հանձնարարականների գծով ձեռք բերված առաջընթացի վերլուծությունը: Գործընթացի կանոնակարգի 41-րդ հոդվածի համաձայն՝ առաջընթացի հաշվետվությունը ենթակա է թարմացման գնահատման այցին հաջորդող յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ (այսինքն՝ 2012թ.-ի սեպտեմբերին), բացառությամբ այն դեպքի, երբ լիագումար մարմինը հաստատում է առաջընթացի հաշվետվության թարմացման ավելի վաղ ժամկետ:

2. ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Ներկայիս իրավիճակի ընդհանուր նկարագիր և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի նախորդ գնահատումից հետո արձանագրված զարգացումներ

1. Առաջարկությունների իրագործման միջոցառումների ծրագիր

2009թ.-ի սեպտեմբերի 22-ին ՓԳՀ-ի ընդունումից հետո ՀՀ-ն ձեռնամուխ եղավ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունների իրագործմանը:

ՓԳՀ-ի անգլերեն տարբերակը թարգմանվել է հայերեն, ապա՝ հայերեն տարբերակի հետ մեկտեղ հրապարակվել ՖԴԿ-ի ինտերնետային կայքում (www.cba.am/FinancialMonitoringCenter): Պատշաճ տեղեկացման արդյունքում ՓԳՀ-ն հասանելի դարձավ հանրային և մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար: Ստանձնելով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հարցերով Միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղարության դերը՝ ՖԴԿ-ն առանձնացրեց ՓԳՀ-ում արձանագրված բոլոր առաջարկությունները՝ դասակարգելով դրանք երկու հիմնական խմբերի՝ ա) առաջարկություններ, որոնք պահանջում են օրենսդրական/կարգավորման փոփոխություններ և լրացումներ, բ) առաջարկություններ, որոնք պահանջում են գործնական փորձի բարելավում/արդյունավետության բարձրացում: Նշված դասակարգման հիման վրա կազմվեցին միջոցառումների համապատասխան ծրագրեր՝ ներառելով արձանագրված առաջարկությունները, յուրաքանչյուրի գծով պահանջվող քայլերը, իրականացման նախատեսվող ժամկետները, ինչպես նաև յուրաքանչյուր քայլի իրականացման և համակարգման գծով պատասխանատու գերատեսչությունները: Միջոցառումների ծրագրերը քննարկվեցին Միջգերատեսչական հանձնաժողովի ներքո գործող աշխատանքային խմբում և համաձայնեցմանը հաջորդիվ՝ հաստատվեցին Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2009թ.-ի հոկտեմբերի 16-ի նիստում:

Միջոցառումների ծրագրերի ներքո իրականացված աշխատանքները ընդհանուր առմամբ ուղղված էին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական համակարգում փոփոխությունների և լրացումների իրականացմանը, արդյունավետության բարձրացմանը, ազգային և միջազգային համագործակցության բարելավմանը, ինչպես նաև կարողությունների զարգացմանը: Ստորև հակիրճ նկարագրվում են իրականացված հիմնական աշխատանքները:

ա. <u>Օրենսդրական/կարգավորման բարեփոխումներ</u>

<u>ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության փոփոխությունների փաթեթ</u>

Ինչպես արդեն իսկ նշվել է, Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ընդունված և հաստատված միջոցառումների ծրագրերից մեկը ներառում է օրենսդրական/կարգավորման բարեփոխումների մանրամասն նկարագրություն: Միջոցառումների ծրագրերը հստակորեն տարանջատում են օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակներում նախատեսվող փոփոխությունները:

Օրենսդրական փոփոխություններ պահանջող առաջարկությունները ներկայացվեցին Միջգերատեսչական հանձնաժողովի ներքո գործող և համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբին, որի կողմից կարճ ժամանակահատվածում առաջարկվեցին օրենսդրական համապատասխան փոփոխություններ: Այս հիմքով, ՖԴԿ-ն կազմեց թվով 17 օրենքներում փոփոխությունների իրականացման փաթեթ, որը ներառում է.

- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք,
- «ՀՀ քրեական օրենսգիրք»,
- «ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք»,
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենք,
- «ՀՀ մաքսային օրենսգիրք»,
- «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք,
- «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք,
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք,
- «Նոտարիատի մասին» ՀՀ օրենք,
- «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք,
- «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք,
- «Ծահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենք,
- «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք,
- «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենք,
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք,
- «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք,
- «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք:

Հարկ է նշել, որ հաշվի առնելով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունների զգալի ծավալն ու խորը բնույթը, նպատակահարմար համարվել բոլորովին նոր օրենքի նախագծի առաջարկությունը, որն ամբողջությամբ կփոխարինի գործող օրենքը:

Օրենսդրական նախագծերի փաթեթը ներկայացվել է Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2010թ.-ի մարտի 26-ի նիստի քննարկմանը: Հանձնաժողովը համաձայնեց օրենսդրական փաթեթի պարունակությանը և որոշեց պաշտոնապես շրջանառել այն համապատասխան գերատեսչությունների և ինքնակարգավորվող կազմակերպությունների (այսուհետ՝ ԻԿԿ) շրջանում: ՖԴԿ-ն կազմակերպեց օրենսդրական փաթեթի շրջանառությունը, որի

արդյունքում ստացվեցին որոշակի առաջարկություններ և դիտողություններ: Զուգահեռաբար, համապարփակ և բազմակողմ տեխնիկական օժանդակության շրջանակներում, Արժույթի միջազգային հիմնադրամը (այսուհետ՝ ԱՄՀ) ձեռնամուխ եղավ օրենսդրական փոփոխությունների դիտանցմանը և դրանց վերաբերյալ դիտողությունների ներկայացմանը: Արդյունքում, ամփոփելով ստացված դիտողություններն ու կարծիքները, ՖԴԿ-ն բարեփոխեց օրենսդրական փոփոխությունները: Հաստատված իրավական գործընթացի համաձայն՝ օրենսդրական փոփոխությունների փաթեթը ներկայացվեց ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ) իրավական փորձաքննության: Փորձաքննության դրական եզրակացության հիման վրա, 2010թ.-ի օգոստոսի վերջին փաթեթը ներկայացվեց նաև ՀՀ կառավարության՝ արագացված կարգով ընթացք տալու միջնորդությամբ: Ակնկալվում է, որ Կառավարությունն իր հաջորդ նիստում կհաստատի օրենսդրական փոփոխությունների փաթեթը և կհասցեագրի այն ՀՀ ազգային ժողովին՝ արագացված կարգով քննարկման և ընդունման գործընթացների իրականացման միջնորդությամբ:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարություն

Ներպետական մակարդակով շահագրգիռ կողմերի աջակցության շնորհիվ կազմվեց և Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2010թ.-ի մարտի 26-ի նիստում հաստատվեց 2010-2013թթ.-ի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ազգային ռազմավարությունը: Ազգային ռազմավարությամբ սահմանվեցին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի թիրախային տեսլականն ու հիմնասյուները, ռազմավարական խնդիրները, ակնկալվող արդյունքները, պատասխանատու գերատեսչություններն ու իրականացման նախատեսվող ժամկետները:

Ուղեցույցներ ՆՈՖԳՏՄ-ների համար

Հետևելով ՓԳՀ-ով տրված առաջարկությանը՝ ՖԴԿ-ն մշակեց հետևյալ ՌՎՀՄՈՒ-ները, որոնք հիմնված են ՆՈՖԳՏՄ-ների մոտ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ՖԱԹՖ-ի տիպային ուղեցույցների վրա:

- «Անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ռիսկերի գնահատմանն ու կանխարգելմանն ուղղված նվազագույն պահանջների վերաբերյալ ուղեցույց» (այսուհետ՝ Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ),
- «Շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների կողմից փողերի լվացման ևահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի գնահատմանն ու կանխարգելմանն ուղղված նվազագույն պահանջների վերաբերյալ ուղեցույց» (այսուհետ՝ Խաղային ոլորտի ՌՎՀՄՈՒ),
- «Փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի գնահատմանը և կանխարգելմանն ուղղված նվազագույն պահանջների վերաբերյալ ուղեցույց» (այսուհետ՝ Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ),
- «Ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ

պայքարի ոլորտում ռիսկերի գնահատմանը և կանխարգելմանն ուղղված նվազագույն պահանջների վերաբերյալ ուղեցույց» (այսուհետ՝ Ռիել տորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ):

ՌՎՀՄՈՒ-ների նախագծերը ներկայացվել են տարբեր գերատեսչությունների (Ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ ՀՀ ՖՆ), ՀՀ ԱՆ, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և ԻԿԿ-ների կարծիքին (Փաստաբանների պալատ, Հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա, Խաղային բիզնեսի ասոցիացիա): Ստացված առաջարկությունների հիմնական մասն ընդունելուց հետո ուղեցույցների նախագծերը հաստատվեցին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի՝ 2010թ.-ի օգոստոսի 6-ի որոշմամբ և հետագայում՝ հրապարակվեցին ՖԴԿ-ի ինտերնետային կայքում: Ուղեցույցներն անմիջական ճանապարհով, ինչպես նաև վերահսկող մարմինների միջոցով տրամադրվեցին ՆՈՖԳՏՄ-ներին:

բ. <u>Արդյունավետության բարձրացման միջոցառումներ</u>

<u>ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական վերլուծություն</u>

Հետևելով ՓԳՀ-ով տրված առաջարկություններին, ՀՀ իշխանությունները նախաձեռնեցին իրականացնել երկրում առկա ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական վերլուծություն, որի նպատակն է.

- Բացահայտել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի արդյունավետությունը խաթարող և ՓԼ/ԱՖ տեսանկյունից խոցելի համարվող ոլորտները, ռիսկերն ու սպառնալիքները,
- Ուղղորդել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջները դեպի ՓԼ/ԱՖ տեսանկյունից առավել խոցելի համարվող ոլորտները:

ՌՌՎ-ի իրականացման նպատակով ՖԴԿ-ն մշակեց հատուկ մեթոդաբանություն, ինչը, հիմնված լինելով ինչպես ՖԱԹՖ-ի հղումային փաստաթղթերի, այնպես էլ այլ երկրների կողմից իրականացված համանման վերլուծությունների վրա, սահմանում է ռիսկերի վերլուծության ոլորտները, յուրաքանչյուր ոլորտի գծով վերլուծության ենթակա անհրաժեշտ տեղեկատվությունը, վստահելի տեղեկատվության ձեռք բերման աղբյուրները և վերլուծության իրականացման գործիքները: Մեթոդաբանությունը քննարկվեց և հաստատվեց Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2010թ.-ի մարտի 26-ի նիստում: Այն ներառում է ՓԼ/ԱՖ ռիսկերի վերլուծության հետևյալ վեց ոլորտները.

- ՓԼ հիմքում ընկած ամենատարածված նախորդող հանցագործություններ,
- Իրավական ռիսկեր (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի իրավական համակարգի անկատարություններ),
- Ինստիտուցիոնալ ռիսկ (ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հարցերով լիազորված գերատեսչությունների մասնագիտական և գործառնական սահմանափակումներ),
- Ֆինանսական համակարգում առկա ռիսկեր,
- Նախատեսված ՆՈՖԳՏՄ-ների ոլորտում առկա ռիսկեր,
- Տնտեսական ենթակառուցվածքների, աշխարհագրական տեղաբաշխվածության և ժողովրդագրական միջավայրի հետ կապված ռիսկեր:

Իրավապահ մարմիններից, ՖՀ-ներից և ՆՈՖԳՏՄ-ներից հավաքագրված տեղեկատվությունը վերլուծվել և արտացոլվել է «ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկի ռազմավարական վերլուծության իրականացման ամփոփում» փաստաթղթում, ինչը հրապարակվել է ՖԴԿ-ի ինտերնետային կայքում: Ընդհանուր առմամբ, վերլուծության արդյունքները, ինչպես ոլորտային կառուցվածքով, այնպես էլ բաշխվածությամբ, համապատասխանում էին ՓԼ/ԱՖ ռիսկերի վերաբերյալ իշխանությունների պատկերացումներին և գիտելիքներին: Վերլուծությանը պետք է հաջորդեն բացահայտված ռիսկերի զսպման ու կանխարգելմանն ուղղված կոնկրետ քայլերը, որոնք պետք է մշակվեն և իրականացվեն Միջգերատեսչական հանձնաժողովի հովանու ներքո:

Առաջընթաց քննությունների, քրեական հետապնդման և դատավարության ոլորտում

ՓԳՀ-ի ընդունումից հետո արձանագրվել է էական առաջընթաց ֆինանսական հետախուզության և քրեական հետապնդման ոլորտներում: Առաջընթացը հաջողվել է ի շնորհիվ բարձր ատյանների կողմից ֆինանսական հետախուզության դերի կարևորման: Մասնավորապես, Դատախազության կոլեգիայի՝ 2009թ. հոկտեմբերի 21-ի նիստում կայացված որոշման և հաստատված համապատասխան հանձնարարականի համաձայն՝ քրեական հետախուզություն իրականացնող բոլոր մարմինները հրահանգավորվել են բարձրացնել ՓԼ քննությունների արդյունավետությունը և կանխարգելիչ միջոցների կիրառությունը, ինչպես նաև հետախուզել նախորդող հանցագործությունների արդյունքում ստացված միջոցների հետագահոսքը և անհրաժեշտության դեպքում՝ հարուցել ՓԼ քրեական գործեր:

Բարձր ատյանների կողմից խնդրին ցուցաբերած լուրջ մոտեցումն իր ազդեցությունն ունեցավ քրեական հետապնդման ոլորտի վիճակագրության կտրուկ աճի վրա: Մասնավորապես, 2009թ.-ի հոկտեմբերից մինչև 2010թ.-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում արդյունավետությունն արտահայտվեց հետևյալ թվերով.

- Հարուցվել են թվով 11 քրեական գործեր,
- ՓԼ քննության նպատակով (որպես կանխարգելիչ միջոց) կալանքի տակ է առնվել/առգրավվել է 195.932 եվրոյին համարժեք գույք,
- Թվով 3 քրեական գործեր փոխանցվել են դատարան,
- ՓԼ գործերով կայացվել են թվով 2 մեղադրական և 1 արդարացնող դատավճիռներ,
- ՓԼ դատավճիռների հիման վրա բռնագրավվել է 1.138.085 եվրոյին համարժեք գույք:

2. Համագործակցություն՝ ներպետական մակարդակով

ա. *Բազմակողմ համագործակցություն*

Միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում խրախուսվել է բազմակողմ համագործակցությունը: ՓԳՀ-ի հաստատումից հետո տեղի են ունեցել Հանձնաժողովի երկու նիստեր՝ 2009թ.-ի հոկտեմբերի 16-ին և 2010թ.-ի մարտի 26-ին: Այս նիստերի ժամանակ Հանձնաժողովի քննարկման հիմնական առարկաեն հանդիսացել միջոցառումների ծրագրերը, ՓԳՀ-ով տրված առաջարկությունների իրագործման արդյունքները, ՌՌՎ-ի իրականացման մեթոդաբանությունը, ազգային ՓԼ/ԱՖ դեմ պայքարի

համակարգի գործունեության տարեկան արդյունքները և Հանձնաժողովի կողմից կայացված նախկին որոշումների կատարողականը:

բ. <u>Երկկողմ համագործակցության վիճակագրություն</u>

Բազմակողմ համագործակցությունից բացի, ազգային իշխանությունները համագործակցել են նաև երկկողմ ձևաչափով: Նման համագործակցության շրջանակներում միջնորդի դեր է ստանձնել հիմնականում ՖԴԿ-ն՝ որպես ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի համակարգող օղակ: Իրավապահ մարմինների հետ համագործակցությունն իրականացվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և համապատասխան գերատեսչությունների (Դատախազություն, Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն (այսուհետ՝ ԱԱԾ) և Պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՊԵԿ)) հետ կնքված փոխըմբռնման հուշագրերի (այսուհետ՝ ՓՀ) շրջանակներում:

2009թ.-ի հոկտեմբերից մինչև 2010թ.-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում ԻՊՄ-ների հետ փոխանակված տեղեկատվությունն ունեցել է հետևյալ վիճակագրական պատկերը.

Հարցման ուղղությունը	Դատախազություն	Ոստիկանություն	ԱԱԾ	ՊԵԿ
ՖԴԿ-ի կողմից ստացված հարցումներ	22	7	15	7
ՖԴԿ-ի կողմից ուղարկված հարցումներ	0	5	1	6

Ստացված և ուղարկված բոլոր հարցումները ժամանակին պատասխանվել են:

Միևնույն ժամանակահատվածում ՖԴԿ-ն թվով 9 տեղեկացում (ֆինանսական տեղեկատվության բացահայտում) է ուղարկել ԱԱԾ-ին (ընդհանուրից՝ թվով 5-ի պատճենը ուղարկվել է նաև Դատախազությանը) և թվով 10 տեղեկացում՝ ՊԵԿ-ին (ընդհանուրից՝ թվով 8-ի պատճենը ուղարկվել է նաև Դատախազությանը): Նշված տեղեկացումների հիման վրա՝ հարուցվել են թվով 3 ՓԼ քրեական գործեր: Թվով 4 մեղադրական դատավճիռ է կայացվել ՖԴԿ-ի սեփական նախաձեռնությամբ և ԻՊՄ-ներից ստացված հարցումների հիման վրա տրամադրված տեղեկությունների օգտագործմամբ իրականացված քննությունների արդյունքում:

ՖՀ-ների և ՆՈՖԳՏՄ-ների շրջանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների համապատասխանության ապահովմանն օժանդակություն ցուցաբերելու նպատակով ՖԴԿ-ն համագործակցել է նաև վերահսկող մարմինների հետ: Մասնավորապես, 2009թ.-ի հոկտեմբերից մինչև 2010թ.-ի սեպտեմբերն

ընկած ժամանակահատվածում հնարավոր համապատասխանությունների վերաբերյալ վերահսկող մարմինների հետ փոխանակած տեղեկատվությունը ունեցել է հետևյալ վիճակագրական պատկերը.

Հարցման ուղղությունը	Ֆինանսական վերահսկողության վարչություն (այսուհետ՝ ՖՎՎ)	ՀՀ ԱՆ (նոտարների գծով)	ՀՀ ՖՆ (խաղատների, շահումով խաղ կազմակերպող անձանց և աուդիտորների գծով)	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց գծով)
ՖԴԿ-ն տրամադրել է վերահսկողական նպատակներին անհրաժեշտ տեղեկատվություն	7	21	4	2

Համապատասխան գերատեսչությունների կողմից ձեռնարկված վերահսկողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հարցաշարում:

3. Համագործակցություն՝ միջազգային մակարդակով

Տարբեր աշխատանքների ու ծրագրերի գծով նախաձեռնություն/մասնակցություն ցուցաբերելու միջոցով ՀՀ-ն հաշվետու ժամանակահատվածում շարունակել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային ասպարեզում իր ակտիվ ներգրավվածությունը: Նման աշխատանքն արդյունավետորեն արտահայտվել է միջազգային մի շարք կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում:

Եվրոպայի խորհուրդ

ՀՀ-ի պատվիրակությունը մասնակցել է ՄԱՆԻՎԱԼ-ի 31-րդ և 32-րդ լիագումար նիստերին: ՀՀ-ի ներկայացուցիչները ֆինանսական ոլորտի գնահատողի կարգավիճակով մասնակցել են Բոսնիայի և Հերցեգովինայի, ինչպես նաև Սերբիայի՝ երրորդ փուլի փոխադարձ գնահատման աշխատանքներին: ՀՀ-ի ներկայացուցիչներն իրենց մասնակցությունն են ունեցել նաև չորրորդ փուլի փոխադարձ գնահատման գործընթացներին. Կիպրոսի գնահատմանը մասնակցել է իրավական ոլորտի գնահատող, իսկ Սան Մարինոյի գնահատմանը՝ ֆինանսական ոլորտի գնահատող:

ՄԱՆԻՎԱԼ-ի 31-րդ և Կողմերի խորհրդաժողովի (Վարշավայի կոնվենցիա) 2-րդ լիագումար նիստերի ժամանակ ՀՀ-ի ներկայացուցիչները ընտրվել են որպես նշված կառույցների բյուրոյի անդամ:

Էգմոնտխումբ

Որպես Էգմոնտ խմբի անդամ՝ ՖԴԿ-ն շարունակել է Էգմոնտի անվտանգ տեղեկատվական համակարգով տեղեկատվության փոխանակումը արտահամանյան ֆինանսական հետախուզության մարմինների

(այսուհետ՝ ՖՀՄ) հետ, ինչն ունեցել է հետևյալ վիճակագրական պատկերը (2009թ.-ի հոկտեմբերից մինչև 2010թ.-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատված).

Հարցման ուղղությունը	**ՖՀՄ ՌԴ**	**ՖՀՄ Վենեսուելա**	**ՖՀՄ Բելգիա**	**ՖՀՄ Ֆրանսիա**	**ՖՀՄ ԱՄՆ**	**ՖՀՄ Գերմանիա**	**ՖՀՄ Հունաստան**
ՖԴԿ-ի կողմից ստացված հարցումներ	8	3	2	1	1	1	1
	ՖՀՄ Էստոնիա	**ՖՀՄ Բահրեյն**	**ՖՀՄ Ալբանիա**	**ՖՀՄ Բոսնիա Հերցեգովինա**	**ՖՀՄ Նիգերիա**	**Ընդամենը**	
	1	1	1	1	1	22	
Հարցման ուղղությունը	**ՖՀՄ ՌԴ**	**ՖՀՄ Լատվիա**	**ՖՀՄ Վրաստան**	**ՖՀՄ Մեծ Բրիտանիա**	**ՖՀՄ ԱՄՆ**	**ՖՀՄ Կանադա**	**ՖՀՄ ԲԿԿ**
ՖԴԿ-ի կողմից ուղարկված հարցումներ	6	3	3	1	1	1	1
	ՖՀՄ Լիտվա	**ՖՀՄ Հունգարիա**	**ՖՀՄ Չեխիա**	**ՖՀՄ Ղրղզստան**	**ՖՀՄ Շվեյցարիա**	**Ընդամենը**	
	1	1	1	1	1	21	

Ստացված բոլոր հարցումները ժամանակին պատասխանվել են:

ՖԴԿ-ի պատվիրակությունները մասնակցել են նաև Էգմոնտ խմբի լիագումար նիստերին և աշխատանքային խմբերի հանդիպումներին: Այդ նիստերի ընթացքում.

- ՖԴԿ-ն ղեկավարել է Էգմոնտ խմբի անդամ ՖՀՄ-ների միջև տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագիրը,
- ՖԴԿ-ն, հանդիսանալով Իրանի և Տաջիկստանի ՖՀՄ-ների՝ Էգմոնտ խմբին անդամակցելու հովանավոր երկիր, ներկայացրել է այս ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը,
- ՖԴԿ-ի ղեկավարի տեղակալն ընտրվել է Էգմոնտ խմբի Գործառնական հարցերով աշխատանքային խմբի փոխնախագահ:

Կազմակերպչական աշխատանքների համակարգման հարցերով պատասխանատու ժամանակավոր հանձնաժողովի միջոցով ՖԴԿ-ն շարունակել է Էգմոնտ խմբի՝ 2011թ.-ի լիագումար նիստը ՀՀ-ում անցկացնելու ուղղությամբ իրականացվող նախապատրաստական աշխատանքները:

Էգմոնտ խմբի հովանու ներքո՝ ՖԴԿ-ն ՓՀ-ներ է կնքել Ռումինիայի, Սան Մարինոյի, Լեհաստանի, Հարավաֆրիկյան Հանրապետության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Բերմուդայի, Ավստրալիայի և Կանադայի հետ: Բացի այդ, ՓՀ-ների կնքման նախնական համաձայնություններ են ձեռք բերվել Չինաստանի, Թայլանդի և Սաուդյան Արաբիայի հետ:

Եվրասիական խումբ (այսուհետ՝ ԵԱԽ)

Որպես ԵԱԽ-ի դիտորդ՝ ՀՀ-ի պատվիրակությունները մասնակցել են միջազգային այս կառույցի 11-րդ և 12-րդ լիագումար նիստերին և աշխատանքային խմբերի հանդիպումներին: Միջազգային այս կառույցի 12-րդ լիագումար նիստի ժամանակ ՀՀ-ի պատվիրակությունը ներկայացրել է գործերի կառավարման ավտոմատացված համակարգերի և

տվյալների պատկերման տեխնոլոգիաների ներդրման իր փորձը և հայտնել իր պատրաստակամությունը՝ օժանդակել Եվրասիական խմբում ընդգրկված այլ ՖՀՄ-ներին համանման տեխնոլոգիաների ներդրման գործում:

ԱՄՀ-ի տեխնիկական օժանդակության ծրագիր

ԱՄՀ-ը մեկնարկել է ՀՀ-ի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի զարգացմանն ուղղված տեխնիկական օժանդակության համապարփակ ծրագրի իրագործումը: Տեխնիկական օժանդակության ծրագրի ներքո թվով 3 առաքելություններ են այցելել ՀՀ, համապատասխանաբար՝ 2010թ.-ի ապրիլին, հուլիսին և սեպտեմբերին: Այցերի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ուսումնասիրվել է ազգային ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարությունը և տրվել են համապատասխան դիտողություններ: Ձեռք է բերվել համաձայնություն ռազմավարության հետագա վերանայումների դեպքում ԱՄՀ-ի դիտողությունները հաշվի առնելու ուղղությամբ,
- Ապրիլին կատարած այցի ժամանակ ՆՈՖԳՏՄ-ների համար կազմակերպվել է քննարկում, որի ընթացքում ԱՄՀ-ի մասնագետները ներկայացրել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում ՆՈՖԳՏՄ-ների ներգրավման լավագույն փորձը և օրենսդրական պահանջներին համապատասխանության մեխանիզմները: ԱՄՀ-ի մասնագետները մասնակցել են նաև ՆՈՖԳՏՄ-ների համար ՖԴԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստմանը,
- ԱՄՀ-ը ուսումնասիրել է նաև օրենսդրական փոփոխությունների և լրացումների փաթեթը և ներկայացրել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ, որոնք խորությամբ քննարկվել են ազգային իշխանությունների հետ և համապատասխանաբար՝ ներառվել օրենսդրական նախագծերի փաթեթում,
- Խաղային և անշարժ գույքի ոլորտների վերահսկող մարմինների համար մշակվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով ստուգումների անցկացման ուղեցույցներ, որոնք նախատեսվում է հաստատել 2010թ.-ի տարեվերջին:

ԱՄՆ-ի տեխնիկական օժանդակության ծրագիր

ՀՀ-ի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի զարգացմանն ուղղված ԱՄՆ-ի տեխնիկական օժանդակության ծրագրի ներքո իրականացվել/իրականացվում են հետևյալ ծրագրերը.

- Անգլերենից հայերեն է թարգմանվել ՖԱԹՖ-ի մեթոդաբանությունը, ապա՝ հրապարակվել ՖԴԿ-ի ինտերնետային կայքում և տրամադրվել շահագրգիռ բոլոր անձանց,
- Մշակվել, փորձարկվել և շահագործման է հանձնվել ՖԴԿ-ի գործերի կառավարման ավտոմատացված համակարգը և տվյալների պատկերման ծրագրային համակարգը,
- Մշակվել է միասնական տեղեկատվական տիրույթի նախագծման և գործարկման վերաբերյալ միջոցառումների ծրագիր: Ծրագրի նպատակն է միասնական էլեկտրոնային միջավայրում միավորել ՓԼ/ԱՖ քննությանը անհրաժեշտ վարչական, առևտրային և քրեական բնույթի տեղեկատվական շտեմարանները, որոնք հասանելի կդառնան ՖԴԿ-ի ընթացիկ աշխատանքների համար,

- ԱՄՆ-ի ֆինանսավորմամբ՝ իրականացվել են վերապատրաստումների ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանում: Մասնավորապես, ԱՄՆ-ի ֆինանսավորմամբ վերապատրաստումներ են կազմակերպվել մի շարք ՆՈՖԳՏՄ-ների համար, ինչպես նաև 2010թ.-ի հուլիսին ապահովվել է ՀՀ-ի մասնագետների գործնական վերապատրաստումը Բուլղարիա ՖՀՄ-ում,
- ԱՄՆ-ի մասնագետները ցուցաբերել են օժանդակություն խաղային ոլորտի օրենսդրությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ստանդարտներին համապատասխանեցնելու և այդ պահանջների համապատասխանության հարցում գործնական կարողությունների զարգացման ուղղությամբ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) տեխնիկական օժանդակության ծրագիր

ՎԶԵԲ-ի օժանդակությամբ՝ մշակվել և քննության թեսթերում ընդգրկվել են հաշվետու անձանց (ՖՀ-ներ և ՆՈՖԳՏՄ-ներ) ներքին դիտարկումների պատասխանատուների որակավորման քննության մոդուլներ:

4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում

2010թ.-ի մարտին ՖԴԿ-ի ներկայացուցիչները մասնակցել են ԱՆ-ի կողմից կազմակերպված՝ Նոտարիատի խորհրդաժողովին, որի ընթացքում ՖԴԿ-ի, ԱՆ-ի և նոտարների մասնակցությամբ տեղի են ունեցել մանրամասն ներկայացումներ և քննարկումներ՝ ուղղված նոտարական գործունեության ընթացքում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների կիրառման արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ-ում գործող բոլոր բանկերի մասնակցությամբ 2009թ.-ի սեպտեմբերից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում կազմակերպվել են առանձին վերապատրաստումներ և խորհրդատվական քննարկումներ՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր բանկում առկա ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով մասնագիտական պատրաստվածությունն ու խորհրդատվության կարիքները:

Հաշվետու անձանց մեծամասնության համար 2010թ.-ի ապրիլից մինչև օգոստոսն ընկած ժամանակահատվածում ՖԴԿ-ի կողմից կազմակերպվել են մի շարք քննարկումներ՝ ուղղված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների իրականացման արդյունավետության բարձրացմանը: Նման քննարկումներ են կազմակերպվել ներքոնշյալ հաշվետու անձանց համար (մասնակիցների ցանկն ընդգրկել է ներքին դիտարկումների պատասխանատուներին և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործառույթի հետառնչվող այլ աշխատակիցներին).

- Բանկեր և համապատասխան վերահսկող մարմնի ներկայացուցիչներ (ՖՎՎ),
- Վարկային կազմակերպություններ և համապատասխան վերահսկող մարմնի ներկայացուցիչներ (ՖՎՎ),
- Ապահովագրական և ներդրումային ընկերություններ և համապատասխան վերահսկող մարմնի ներկայացուցիչներ (ՖՎՎ),
- Փաստաբաններ, իրավական ծառայություններ մատուցող ընկերություններ և Փաստաբանների պալատ,

- Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,
- Ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք և Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե,
- Խաղատներ, շահումով խաղ կազմակերպող անձինք և համապատասխան վերահսկող մարմիններ (ՀՀ ՖՆ),
- ՊԵԿ:

Նշված հանդիպումների հակիրճ նկարագրությունը հրապարակված է ՖԴԿ-ի ինտերնետային կայքում:

Իրավապահ մարմինների համար 2010թ.-ի սեպտեմբերին Դատախազության դպրոցում նախատեսվում է համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի օժանդակությամբ կազմակերպվել ևս մեկ վերապատրաստում, որին մասնակցելու են ՖԴԿ-ի ներկայացուցիչները, հատուկ հարցերով քննիչները, տարբեր ԻՊՄ-ների՝ ֆինանսական հետախուզությամբ զբաղվող քննիչներ, ինչպես նաև դատախազներ և դատավորներ: Վերապատրաստման թեման ներառելու է արդյունավետ ֆինանսական հետախուզություն իրականացնելու մեթոդները (ապացույցների հավաքագրում, կանխարգելիչ միջոցների ձեռնարկում և այլն), միջազգային փորձի վերլուծությունը, քրեական հետապնդումը և ՓԼ/ԱՖ գործերի դատական հանգուցալուծումը:

2.2. Հիմնարար հանձնարարականներ

Նկարագրեք ՖԱԹՖ-ի հիմնարար հանձնարարականների (Հ.1, Հ.5, Հ.10, Հ.13, ՀՀ.II և ՀՀ.IV) և Առաջարկվող միջոցառումների ծրագրի (Հավելված 1) գծով ձեռք բերված առաջընթացը:

Հ.1 (ՓԼ քրեականացում)	
Գնահատական՝ հիմնականում համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Իրականացնել պատշաճ նախաձեռնություններ (օրինակ՝ իրազեկության բարձրացում կամ ուսուցում) ՓԼ գործերի քննության, քրեական հետապնդման և դատական գործընթացին մասնակից բոլոր իրավասու մարմինների համար, որպեսզի. (1) պարզվի, թե ինչ խոչընդոտներ կան ՓԼ քրեական հետապնդման ճանապարհին, օրինակ՝ թե ՓԼ՝ որպես առանձին հանցագործության համար մեղադրական դատավճիռ ստանալուն որքանով է խոչընդոտում գույքի՝ նախորդող կոնկրետ հանցավոր գործունեության արդյունքում ստացված լինելը հիմնավորելու համար կիրառվող ապացուցման չափանիշը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված	Հնարավոր խոչընդոտների վերաբերյալ վերլուծություն է իրականացվել Դատախազության կոլեգիայի՝ 2009թ.-ի հոկտեմբերի 21-ի նիստում, երբ

առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	նախորդող հանցակազմը հաստատելու համար պահանջվող ապացույցների բարձր չափանիշի կիրառության նախկին փորձը համարվել է սխալ և ընդունվել է համապատասխան հրահանգ, որն ուղղված է վերոնշյալ խոչընդոտը վերացնելուն և ՓԼ՝ որպես առանձին հանցագործության գծով քննություն իրականացնելուն՝ անկախ նախորդող հանցագործության գծով կայացված դատավճռի առկայությունից:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկությունն	*(2) շարունակել բարձրացնել ՓԼ քրեականացնող օրենսդրական հիմքերի վերաբերյալ իրազեկության մակարդակը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Իրավապահ մարմինների՝ ՓԼ քրեականացնող օրենսդրական հիմքերի վերաբերյալ իրազեկության մակարդակը բարձրացվել է հետևյալ նախաձեռնությունների միջոցով. - Դատախազության կոլեգիայի՝ 2009թ.-ի հոկտեմբերի 21-ի նիստում կայացված վերոնշյալ որոշումն ու հրահանգը տրամադրվել է ֆինանսական հետախուզություն իրականացնող բոլոր ԻՊՄ-ներին, - Վերոնշյալ որոշման համաձայն՝ Գլխավոր դատախազության Ազգային մարմիններում քննվող գործերով վարչության կողմից ներկայումս կազմվում է ՓԼ/ԱՖ քննությանը վերաբերող թղթային և էլեկտրոնային նյութերի շտեմարան, ինչը հասանելի է լինելու ԻՊՄ-ներին, - Դատախազության դպրոցին հանձնարարվել է կազմել ՓԼ քննությունների ձեռնարկ, ինչը մի խումբ մասնագետների կողմից մշակվել է և ներկայումս գտնվում է հրապարակմանը նախորդող խմբագրման փուլում, - 2010թ.-ի սեպտեմբերին Դատախազության դպրոցում նախատեսվող վերապատրաստմանը մասնակցելու են համապատասխան ԻՊՄ-ների պատասխանատու աշխատակիցներ, դատավորներ: Վերապատրաստումն ուղղված է ԻՊՄ-ների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում մասնագիտական կարողությունների զարգացմանը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.5 (ՀՊՈՒ)
I. ՖՀ-ների մասով

Գնահատական՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Արգելել ըստ ներկայացնողի բանկային գրքույկները և ավանդային վկայագրերը, ինչպես նաև ըստ ներկայացնողի այլ արժեթղթերը՝ ուժը կորցրած ճանաչելով/ փոփոխելով համապատասխան հոդվածները քաղաքացիական օրենսգրքում և բոլոր այլ իրավական ակտերում, որոնցով նախատեսվում կամ կարգավորվում են ըստ ներկայացնողի (վճարային) գործիքները:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տրված առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (14-րդ հոդվածի 1-ին մաս): Ընդ որում, «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» (148-րդ հոդվածի 2-րդ մաս) համաձայն՝ կարող է բացառվել որոշակի տեսակի արժեթղթերի թողարկումը, ինչպիսիք են, օրինակ՝ ըստ ներկայացնողի (օրդերային), անվանական կամ համանման այլ արժեթղթերը (ինչն էլ սահմանվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերոնշյալ հոդվածով):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*ՖՀ-ների համար ներդնել լրացուցիչ ուղեցույցներ հաճախորդների վերաբերյալ տվյալների թարմացման համարժեք ժամկետների վերաբերյալ՝ ապահովելու համար հետևողական և արդյունավետ իրագործումը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տրված առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (16-րդ հոդվածի 2-րդ մաս): ՖԴԿ-ի կողմից հրապարակվել է նաև շրջաբերական գրություն (հրապարակված է ՖԴԿ-ի ինտերնետային կայքի «Հաճախ տրվող հարցեր» մասում), ինչը հանդիսանում է ուղեցույց՝ ՖՀ-ների կողմից հաճախորդների վերաբերյալ տվյալների թարմացման համարժեք ժամկետների վերաբերյալ: Շրջաբերական գրության համաձայն՝ ՀՊՈՒ-ի շրջանակներում հավաքագրված տեղեկությունները ենթակա են թարմացման առնվազն տարեկան կտրվածքով: Վերապատրաստումների ընթացքում (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին) շրջաբերական գրությունը տրամադրվել է հաշվետու անձանց: Բացի այդ, ՖՀ-ների ներքին իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տվել, որ հաճախորդների տվյալների թարմացման պարբերականությունը, որպես կանոն, առնվազն կազմում է տարին մեկ անգամ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Ներդնել լրացուցիչ ուղեցույցներ՝ մասնավորեցնելով այն ողջամիտ ժամկետը, որը ՖՀ-ները պետք է պահպանեն գործարար հարաբերությունը հաստատելու ընթացքում նույնականացման տեղեկություններ ձեռք բերելիս և այդ*

	տեղեկությունների իսկությունը ստուգելիս:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տրված առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-րդ հոդվածի 1-ին մաս): Շրջաբերական գրության (հրապարակված է ՖԴԿ-ի ինտերնետային կայքի «Հաճախ տրվող հարցեր» մասում) միջոցով ՖՀ-ների համար ՖԴԿ-ն ներմուծել է նաև «ողջամիտ ժամկետ» եզրույթի սահմանումը, որի համաձայն՝ հաճախորդի նույնականացման տեղեկությունների իսկությունը ստուգելու ժամկետ է սահմանվել յոթնօրյա ժամանակահատվածը՝ պայմանով, որ ՓԼ/ԱՖ ռիսկն արդյունավետորեն զսպված է:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	*ՖՀ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ ընդունելու ռիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր այն իրավիճակների վերաբերյալ, որոնցում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես վերը նշված առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	*ՖՀ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա իրականացնել ՀՊՈՒ միջոցառումներ, ներառյալ՝ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը համապատասխան պարբերականությամբ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տրված առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (17-րդ հոդվածի 9-րդ մաս): ՖԴԿ-ն ՖՀ-ների համար հրապարակել է նաև շրջաբերական գրություն (հրապարակված է ՖԴԿ-ի ինտերնետային կայքի «Հաճախ տրվող հարցեր» մասում), ինչը հանդիսանում է ուղեցույց՝ համարժեք պարբերականությամբ և անհրաժեշտության դեպքում առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա ՀՊՈՒ իրականացնելու պարտավորության վերաբերյալ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված	*Ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով և հարակից իրավական ակտերով ՀՊՈՒ միջոցառումների մասով նախատեսված պարտավորությունների առավել*

առաջարկություն	*արդյունավետ կատարումը ՖՀ-ների կողմից՝ վերապատրաստումների կամ իրազեկության բարձրացման այլ նախաձեռնությունների միջոցով:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործվել է ՖՀ-ների համար մի շարք վերապատրաստումների կազմակերպման միջոցով (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին), որոնց թեմաները ներառել են նաև ՀՊՈՒ-ի հետ կապված հարցերը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	
Հ.5 (ՀՊՈՒ) **II. ՆՈՖԳՏՄ-ների մասով**[4]	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Վերացնել այն նվազագույն շեմը, որով բաժնետոմսերի առուվաճառքի պարագայում սահմանափակվում է ՀՊՈՒ-ն նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տրված առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-րդ հոդվածի 3-րդ մաս, 5-րդ հոդվածի 4-րդ մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Ներդնել ուղեցույցներ խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց համար՝ ապահովելու ՀՊՈՒ պահանջների կիրառությունն այն գործարքների նկատմամբ, որոնց համախառն արժեքը հավասար է սահմանված նվազագույն շեմին կամ գերազանցում է այն:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությ	Առաջարկությունն իրագործելու նպատակով

[4] Հ.12-ի մի մասն է

ամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (համատեղությամբ՝ 15-րդ հոդվածի 3-րդ մաս և 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ պարբերություն), - Խաղային ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 25-րդ պարբերություն):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*ՆՈՖԳՏՄ-ների մասով սահմանել ուղղակի պահանջ՝ ստանալու տեղեկություններ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին՝ անկախ գործարքը բարձր ռիսկային համարելու կամ չհամարելու հանգամանքից:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-րդ հոդվածի 7-րդ մաս), - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ պարբերություն), - Խաղային ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ պարբերություն), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 29-րդ պարբերություն), - Ռիել տորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ պարբերություն):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*ՆՈՖԳՏՄ-ների մասով ներդնել ուղեցույցներ՝ ապահովելու ՀՊՈՒ անցկացման հետևողական համակարգի առկայությունը՝ հաշվի առնելով ՆՈՖԳՏՄ-ների բնույթով, շրջանակով և էությամբ պայմանավորված վտանգները և խոցելիությունը, ինչպես նաև սահմանել հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների թարմացման հաճախականությունը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-17-րդ հոդվածներ), - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ և 29-րդ պարբերություններ), - Խաղային ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ և 29-րդ պարբերություններ), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 29-րդ և 30-րդ պարբերություններ), - Ռիել տորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (10-րդ բաժնի 28-րդ և 29-րդ

	պարբերություններ):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	*Սահմանել բարձր ռիսկային հաճախորդների, գործարար հարաբերությունների կամ գործարքների հավելյալ ուսումնասիրության անցկացման, ինչպես նաև ցածր ռիսկային հաճախորդների, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ հաճախորդների նկատմամբ պարզեցված/նվազեցված ՀՊՈՒ միջոցառումների կիրառության պահանջներ և ուղենիշներ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկվածմիջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (17-րդ հոդվածի), - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 12-րդ գլուխներ), - Խաղային ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 12-րդ գլուխներ), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 12-րդ գլուխներ), - Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 12-րդ գլուխներ):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	*Ուղղակիորեն արգելել նվազեցված ՀՊՈՒ միջոցառումների կիրառությունը ՓԼ/ԱՖ կասկածի առկայության կամ բարձր ռիսկային սցենարների դեպքում:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկվածմիջոցառումներ	Տրված առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (17-րդ հոդվածի 8-րդ մաս):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	*Ներդնել ուղեցույցներ, որոնք ՆՈՖԳՏՄ-ների կօգնեն պարզել, թե գործարար հարաբերություն հաստատելու ժամանակ հաճախորդի ինքնությունը պարզելիս ինչ է համարվում «ողջամիտ ժամկետ»:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկվածմիջոցառումն	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-րդ հոդվածի 1-ին մաս), - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն),

եր	- Խաղայինոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 28-րդ պարբերություն), - Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն): Տես Հ.5-ի ներքո (ՖՀ-ների մասով) 3-րդ առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Սահմանել ուղղակի պահանջ՝ ընդունելու ռիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր այն իրավիճակների վերաբերյալ, որոնց առկայության դեպքում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (15-րդ հոդվածի 1-ին մաս), - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն), - Խաղայինոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 28-րդ պարբերություն), - Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 27-րդ պարբերություն):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Սահմանել ուղղակի պահանջ՝ առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա իրականացնել ՀՊՈՒ միջոցառումներ, ներառյալ՝ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը համապատասխան պարբերականությամբ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (17-րդ հոդվածի 9-ին մաս), - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 25-րդ պարբերություն), - Խաղայինոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 25-րդ պարբերություն), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 26-րդ պարբերություն), - Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (9-րդ բաժնի 25-րդ պարբերություն):

Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.10 (Տեղեկատվության պահպանում) **I. ՖՀ-ների մասով**	
Գնահատական՝ հիմնականում համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգում կամ պարտադիր կատարման ենթակա այլ ուղենիշներում հստակեցնել «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմաններ» (որոնց նկատմամբ տարածվում են տեղեկություններ պահպանելու պահանջները) հասկացությունն այն դեպքի համար, երբ գործարքը պայմանագիր չէ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տրված առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (21-րդ հոդվածի 1-ին մաս). նորով սահմանվել է պահպանման ենթական տեղեկատվության ծավալի խորությունը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	
Հ.10 (Տեղեկատվության պահպանում) **II. ՆՈՖԳՏՄ-ների մասով**[5]	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Կատարել ագործել տեղեկատվության պահպանման ոլորտում ՆՈՖԳՏՄ-ներին ներկայացվող պահանջները և նրանց պրակտիկան՝ արդյունավետությունը և հիմնավորվածությունն ապահովելու, ինչպես նաև կիրառության մեջ քննության շահերին չվնասելու նպատակով, քանի որ, հաշվի առնելով գործարար հարաբերությունների և գործարքների հետ կապված տեղեկատվության կարևորությունը, իշխանություններին անհրաժեշտ է տեղեկատվության պահպանման ստանդարտների և որակի հարցերին անդրադառնալ ռիսկերը նվազեցնելու տեսակետից՝ միաժամանակ փորձելով ԻՊՄ-ներին և վերահսկող մարմիններին բավարար չափով տրամադրել ՓԼ/ԱՖ*

[5] Հ.12-ի մի մասն է

	գործերի քննության մեջ օգտագործվող արժանահավատ տվյալներ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի մասին օրենքի նախագիծ (21-րդ հոդված), - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (12-րդ գլուխ), - Խաղայինոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ), - Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.13 (ԿԳՀ) **I. ՖՀ-ների մասով**	
Գնահատական՝ հիմնականում համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*Հաշվետվություն տրամադրող անձանց համար կազմակերպել լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ՝ ապահովելու նրանց աշխատակիցների տեղեկացվածություն օրենքով նախատեսվող պարտավորությունների մասին: Վերապատրաստումը պետք է, մասնավորապես, ներառի կասկածելի գործարքների հայտնաբերման և դրանց վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման թեմաները, անդրադառնա տիպաբանություններին և միտումներին (տարբերակված ըստ գործունեության տեսակի, հատկապես ՆՈՖԳՏՄ-ների համար):*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները	Առաջարկությունն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք վերապատրաստումների կազմակերպման միջոցով (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին), որոնց թեմաները ներառել են նաև ԿԳՀ-ների հետ կապված հարցերը:
Նախորդ գնահատումից հետո (այլ)	

փոփոխություններ	
Հ.13 (ԿԳՀ) **II. ՆՈՖԳՏՄ-ների մասով**[6]	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության ամբ տրված առաջարկություն	*Հստակեցնել գաղտնիության և պաշտպանության մասին նորմերի անհամապատասխանությունները նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և աուդիտորների, ինչպես նաև հաշվապահական և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց մասով՝ բացառելու սույն հաշվետվության այլ մասերում նշված կամայականության հնարավորությունը, մասնավորապես՝ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու պարտավորության մասով, ինչպես նաև՝ սահմանել համակարգված ստուգումների միջոցառումներ, որոնց միջոցով կփարատվեն համապատասխան օրենքների անորոշությունից բխող մտահոգությունները:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության ամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (4-րդ հոդվածի 2-րդ մաս), - «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ (2-րդ հոդված), - «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ նախագիծ (1-ին հոդված), - «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ (1-ին հոդված), - «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ (1-ին հոդված):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության ամբ տրված առաջարկություն	*Հաշվետու անձանց համար կազմակերպել լրացուցիչ վերապատրաստումներ՝ ապահովելու համար օրենսդրական պահանջների վերաբերյալ աշխատակիցների իրազեկության անհրաժեշտ մակարդակը: Վերապատրաստումների թեմաները պետք է ներառեն հատկապես կասկածելի գործարքների վերհանման և հաղորդման պահանջը և տիպաբանություններն ու միտումները (առանձնացված՝ ըստ գործունեության տեսակների, հատկապես՝ ՆՈՖԳՏՄ-ների մասով):*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության ամբ տրված առաջարկության	Առաջարկությունն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք վերապատրաստումների կազմակերպման միջոցով (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին):

[6] Հ.16-ի մի մասն է

իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Ներդնել աշխատակիցների նախնական ստուգման, այդ թվում՝ «պատշաճության և համապատասխանության» պահանջներ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Ներդրվել են աշխատակիցների նախնական ստուգման՝ «պատշաճության և համապատասխանության» պահանջներ. (ա) խաղատների, շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպվող անձանց ղեկավարների, օպերատորների, մասնակիցների և իրական շահառուների համար («Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ (2-րդ հոդված), Խաղային ոլորտի ՌՀՄՈՒ (21-րդ գլուխ)), (բ) հաշվետու այլ անձանց անձնակազմի համար՝ վերջիններիս ներքին իրավական ակտերի մակարդակով («ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի նախագիծ (22-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ պարբերություն)):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Հաստատել թանկարժեք քարերի կամ մետաղների դիլերների կողմից հաշվետվությունների տրամադրման կարգը և կասկածելի գործարքների համապատասխան տիպաբանությունները՝ ՆՈՖԳՏՄ-ների համար:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Կենտրոնական բանկի խորհրդի՝ 2010թ.-ի փետրվարի 16-ի որոշմամբ սահմանվել է թանկարժեք մետաղների և քարերի դիլերների կողմից հաշվետվությունների տրամադրման կարգը: ՓԳՀ-ի ընդունումից հետո ՖԴԿ-ն հրապարակել է ևս 4 տիպաբանություն, որոնք, մասնավորապես, վերաբերում են կեղծ վճարային քարտերի միջոցով ՓԼ սխեմային, անշարժ գույքի առքուվաճառքի գործարքներին, ապահովագրական գործարքներին և ապրանքների՝ անդրսահմանային շարժին (հրապարակված են ՖԴԿ-ի ինտերնետային կայքում): Հաշվետու այլ անձանց հետ մեկտեղ, նշված տիպաբանությունները նախատեսված են ՆՈՖԳՏՄ-ների համար, ինչպիսիք են փաստաբանները, իրավական ծառայություններ մատուցող ընկերությունները, անհատ ձեռնարկատեր հաշվապահները և աուդիտորները, հաշվապահական և աուդիտորական ընկերությունները, ռիելտորները, նոտարները և Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:
ՄԱՆԻՎԱԼ-ի	*Վերահսկողության, ուսուցման և այլ միջոցներով*

հաշվետվության տրված առաջարկության	*իրականացնել իրազեկության բարձրացման ծրագրեր՝ ապահովելու ԿԳՀ-ներ և ՆԾԳՀ-ներ տրամադրելու պարտավորությունների իստակ տարբերակումը, մասնավորապես՝ հասկանալի դարձնելով ԿԳՀ տրամադրելու պարտավորության կիրառելիությունն անկախ նվազագույն շեմից, գործարք կատարելու փորձի և հարկային խնդիրների առնչությամբ կասկածելի համարվող գործարքների վերաբերյալ նույնպես ԿԳՀ տրամադրելու պարտավորությունը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք վերապատրաստումների կազմակերպման միջոցով (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին): Տես նաև 2.1-րդ բաժնի «ՎՁԵԲ-ի տեխնիկական օժանդակության ծրագիր» ենթաբաժինը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության	*Նպաստել ՆՈՖԳՏՄ-ների, այդ թվում՝ համապատասխանության պատասխանատուների ուսուցմանը՝ կազմակերպելով ուղղակի կամ հավաստագրված դասընթացներ համապատասխան ծառայություններ մատուցողների, այդ թվում՝ ԻԿԿ-ների միջոցով, ինչպես նաև ապահովել ընթացիկ վերապատրաստման պահանջների արտացոլումն օրենքում, կանոններում կամ կանոնակարգերում*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության	Առաջարկությունն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք վերապատրաստումների կազմակերպման միջոցով (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին): Տես նաև 2.1-րդ բաժնի «ՎՁԵԲ-ի տեխնիկական օժանդակության ծրագիր» ենթաբաժինը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

ՀՀ.II (ԱՖ քրեականացում)
Գնահատական՝ մասամբ համապատասխանում է
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության	*Փոփոխել ՔՕ-ի 217-րդ հոդվածով նախատեսված՝ «ահաբեկչության» սահմանումը, որպեսզի այն (1) ներառի «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի հավելվածում*

ուն	*թվարկված ինը համաձայնագրերում և արձանագրություններով նախատեսված ահաբեկչության բոլոր հանցագործությունները,*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում (3-րդ հոդված) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*և (2) ներառի հղում «միջազգային կազմակերպություններ» հասկացությանը՝ ինչպես պահանջվում է «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածով:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում (3-րդ հոդված) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Փոփոխել ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը, որպեսզի դրա նորմը տարածվի բոլոր այն իրավիճակների նկատմամբ, որոնցում գույքը կամ ֆինանսական միջոցները տրամադրվում կամ հավաքագրվում են անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից օգտագործման համար ընդհանրապես, երբ բացակայում է ֆինանսական միջոցները կամ գույքն ահաբեկչության կոնկրետ գործողությունն կատարելու մեջ օգտագործելու մտադրությունը կամ իմացությունը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում (4-րդ հոդված) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված	*Ներդաշնակեցնել ՔՕ-ի 217.1-րդ հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասում օգտագործված եզրույթները («ֆինանսական միջոցներ» և «ահաբեկչության*

առաջարկություն	*ֆինանսավորման առարկա»), որպեսզի հստակեցվի, որ ՔՕ-ի 217.1-րդ հոդվածը տարածվում է «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայով նախատեսված բոլոր «միջոցների» նկատմամբ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում (1-ին հոդվածի 2-րդ մաս) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Կատարել օրենսդրական փոփոխություններ՝ նախատեսելու իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վերաբերյալ առաջարկությունը խորությամբ քննարկվել է Միջգերատեսչական հանձնաժողովի՝ մարտի 26-ին կայացած նիստի և Գլխավոր դատախազության հետ կազմակերպված լրացուցիչ քննարկումների ընթացքում (ԻՊՄ-ների և իրավաբանական ֆակուլտետների մասնագետների մասնակցությամբ): Արտահայտված կարծիքների բացարձակ համընկնմամբ՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը հակասում է ՀՀ սահմանադրությամբ ամրագրված անմեղության կանխավարկածին, որն իր հերթին պահանջում է «*mens rea*» սկզբունքի կիրառություն: Մասնավորապես, Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության մեջ մեղադրվող անձը համարվում է անմեղ մինչ օրենքով սահմանված կարգով օրինական ուժ ստացած դատավճռի համաձայն մեղավոր ճանաչվելը: Բացի այդ, ՔՕ-ի (23-րդ հոդված) համաձայն՝ քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ֆիզիկական անձինք (քրեական պատժի բնույթը ենթադրում է կիրառություն անհատի նկատմամբ՝ «*nullum crimen sine culpa*» սկզբունք (չկա հանցանք առանց մեղքի)): Պայմանավորված ՀՀ օրենսդրությամբ ամրագրված վերոնշյալ սկզբունքների առկայությամբ՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն ենթադրող փոփոխությունները մերժվել են, իսկ պաշտոնական շրջանառությունը՝կասեցվել: Փոխարենը, ինչպես գործող «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը (28-րդ հոդված. օրենքը ներկայացված է ՓԳՀ-ի հավելվածում), այնպես էլ դրա նախագիծը (30-րդ հոդված) իրավաբանական անձանց՝

	ՓԼ/ԱՖ ներգրավվածության դեպքում նախատեսում են վարչական պատասխանատվություն:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

ՀՀ.IV (ԿԳՀ) I. ՖՀ-ների մասով	
Գնահատական՝ հիմնականում համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*Իշխանությունները պետք է ընդունեն ուղեցույցներ սառեցման պարտավորությունների և ԱՖ հետ կապված տիպաբանությունների վերաբերյալ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի հիման վրա ՖԴԿ-ն մշակել է սառեցման պարտավորության վերաբերյալ պաշտոնական ուղեցույցի նախագիծ: Հաշվի առնելով այն փաստը, որ նոր օրենքի նախագծում սառեցման պարտավորությունը ենթարկվել է զգալի փոփոխության, ուղեցույցը նպատակահարմար է հրապարակել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից և օրինական ուժ ստանալուց հետո միայն: Բացի այդ, մշակվել և համապատասխան գերատեսչությունների կարծիքին է ուղարկվել ԱՖ վերաբերյալ տիպաբանության նախագիծ, ինչը նախատեսվում է հրապարակել առաջիկա 2-3 ամիսների ընթացքում:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	
ՀՀ.IV (ԿԳՀ) I. ՆՈՖԳՏՄ-ների մասով	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*Հաշվետու անձանց համար կազմակերպել լրացուցիչ վերապատրաստումներ՝ ապահովելու համար օրենսդրական պահանջների վերաբերյալ աշխատակիցների իրազեկության անհրաժեշտ մակարդակը: Վերապատրաստումների թեմաները պետք է ներառեն հատկապես կասկածելի գործարքների վերհանման և հաղորդման պահանջը և տիպաբանություններն ու միտումները (առանձնացված՝ ըստ գործունեության տեսակների,*

	հատկապես՝ ՆՈՖԳՏՄ-ների մասով):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության մեջ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Ինչպես նշվել է 2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժնում, ՆՈՖԳՏՄ-ների համար ՖԴԿ-ն կազմակերպել է մի շարք քննարկումներ և վերապատրաստումներ, որոնց թեմաները ներառել են առանձին ոլորտներին հատուկ կասկածելիության չափանիշները, կասկածելի գործարքների վերհանման մեթոդները և տիպաբանությունները:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

2.3. Այլ հանձնարարականներ

ՖԱԹՖ-ի հետևյալ հանձնարարականները նախորդ հաշվետվությամբ գնահատվել են որպես «մասամբ համապատասխանում է» (ՄՀ) կամ «չի համապատասխանում» (ՉՀ) (Հավելված 1): Յուրաքանչյուր հանձնարարականի գծով նշեք, թե առկայությամբ դեպքում՝ ինչ միջոցառումներ են ձեռնարկվել ներկայիս իրավիճակը բարելավելու և ՓԳՀ-ով տրված առաջարկություններն իրագործելու ուղղությամբ:

Հ.3 (Բռնագրավում և կանխարգելիչ միջոցներ)	
Գնահատական՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության մեջ տրված առաջարկություն	*ՔՕ-ի 55-րդ հոդվածի 3-րդ մասով չնախատեսված բոլոր նախորդող հանցագործությունների վերաբերյալ պետք է սահմանել համապատասխան նորմեր, որոնք հնարավորություն կընձեռեն բռնագրավել հանցագործության կատարման արդյունքում ստացված եկամուտները կամ հանցագործությունների կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, ինչպես նաև այդ գույքին համարժեք այլ՝ օրինական ծագում ունեցող գույքը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության մեջ տրված առաջարկության	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում (1-ին, 2-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներ) փոփոխության նախագիծ:

իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*ՔՕ-ի 55-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է փոփոխել՝ թույլատրելու գույքի բռնագրավումն անկախ դրա դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի մեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում (1-ին հոդվածի 1-ին մաս) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*Միջոցներ ձեռնարկել՝ նախատեսելու ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտներին կամ դրանց կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք օրինական ծագում ունեցող գույքի առգրավման հնարավորությունը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում (3-րդ հոդված) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը լրդաշնակեցնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՕՀԳՕ) 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի ԻՊՄ-ները հնարավորություն ունենան արդյունավետորեն հայտնաբերել և հետապնդել այն գույքը, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման կամ կասկածվում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ լինելու մեջ, այդ թվում՝ նաև այն դեպքերում, որոնցում դեռևս չկա կոնկրետ*

	«կասկածյալ»:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	*Իրավապահ մարմինները պետք է ՓԼ և ԱՖ հետաքննությունների/ նախաքննությունների համատեքստում ապահովեն կանխարգելիչ միջոցների արդյունավետ իրագործումն այն գույքի նկատմամբ, որը կարող է ենթակա դառնալ բռնագրավման:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում (3-րդ հոդված) փոփոխության նախագիծ: ՓԼ գծով իրականացված քննությունների արդյունքում կիրառված կանխարգելիչ միջոցների վերաբերյալ վիճակագրությունը ներկայացված է 2.1-րդ բաժնի «Առաջընթաց քննությունների, քրեական հետապնդման և դատավարության ոլորտում» ենթաբաժնում:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	*ՀՀ իշխանությունները պետք է վերանայեն բռնագրավման նկատմամբ իրենց մոտեցումը՝ նպատակ հետապնդելով ավելացնել բռնագրավման գործողությունների թիվը և խրախուսել բռնագրավման մասին դրույթների առավել հաճախակի կիրառությունը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	ՔՕ-ում փոփոխության նախագիծը (1-ին, 2-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներ) նախատեսում է բռնագրավման (որպես պատժամիջոց) պարտադիր կիրառություն ՓԼ/ԱՖ կամ նախորդող հանցագործությունների դեպքում: ՓԼ գծով կայացված մեղադրական դատավճիռների արդյունքում կիրառված բռնագրավումների վերաբերյալ վիճակագրությունը ներկայացված է 2.1-րդ բաժնի «Առաջընթաց քննությունների, քրեական հետապնդման և դատավարության ոլորտում» ենթաբաժնում:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	*Իշխանությունները պետք է դիտարկեն քրեաիրավական դաշտի գնահատման նպատակահարմարությունը՝ պարզելու համար, թե արդյոք ճիշտ կլինի ներդնել քաղաքացիական բռնագրավման ինստիտուտ կամ գույքի այնպիսի բռնագրավման ինստիտուտ, որի դեպքում իրավախախտն է պարտավոր ապացուցել գույքի օրինական ծագումը, կամ՝ քրեական կազմակերպությունների գույքի*

	բռնագրավման ինստիտուտը՝ չսահմանափակվելով միայն այն կազմակերպություններով, որոնք ուղղակիորեն կապված են մեղադրական դատավճռի հիմքում ընկած հանցագործությունների հետ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունը քննարկվել է Միջգերատեսչական հանձնաժողովի՝ 2009թ.-ի հոկտեմբերի 16-ին նիստում, որի ընթացքում արտահայտված կարծիքների համընկնմամբ՝ քաղաքացիական օրենսդրության ճանապարհով առգրավումը կամ ապացուցման պարտականության տեղափոխմամբ բռնագրավումը հակասում է ազգային օրենսդրության հիմնարար սկզբունքներին և սովորույթներին (առգրավումն իրականացվում է կատարված հանցագործության դեպքում, ինչը, իր հերթին, պահանջում է քրեական օրենսդրությամբ նախատեսված քայլեր): Այսպիսով՝ իշխանությունները ձեռնպահ մնացին այս ուղղությամբ որևէ նախաձեռնությունների առաջադրումից:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Ո.4 (Գաղտնիություն)	
Գնահատական՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	ԲԳՕ-ում փոփոխությունների նախագծի 3-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին հասանելիություն ապահովելու իմաստով ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը ներդաշնակեցվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին: Ինչ վերաբերում է ԲԳՕ-ի 10-րդ հոդվածի (ինչպես նաև ՔԴՕ-ի 172-րդ հոդվածի) և ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածի միջև առկա կապին, դրանց կիրառության պայմաններում որևէ իրավական հակասություն առկա չէ, քանի որ դրանք կարգավորում են բանկային գաղտնիքի հասանելիության երկու առանձին ճանապարհներ (մեխանիզմներ): Այսպես՝ ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը կարգավորում է բանկային գաղտնիքի հասանելիությունը <u>քրեական հետապնդում իրականացնող մարմիններին</u>, իսկ ՕՀԳՕ-ի 29-րդ

	հոդվածը կարգավորում է ֆինանսական տվյալների (ներառյալ՝ բանկային գաղտնիքը) հասանելիությունը <u>օպերատիվ հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմիններին:</u> Օրենսդրությամբ տրված սահմանմամբ՝ ԻՊՄ-ների վերոնշյալ երկու տեսակները տարանջատված են: Մասնավորապես, ՔԴՕ-ի 6-րդ հոդվածի 22-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդում իրականացնող մարմիններն են դատախազը, քննիչը և հետաքննության մարմինը (բայց, ոչ՝ օպերատիվ հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմինները): Այսպիսով, ՕՀԳՕ-ի ներքո օպերատիվ հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմինները սահմանափակված չեն միայն կասկածյալի կամ մեղադրյալի գծով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման հնարավորությամբ, քանի որ վերջիններիս կողմից հատուկ գործողությունները սովորաբար իրականացվում են մինչև քրեական գործի (քննության) հարուցումը և նպատակ ունեն ժամանակին բացահայտել հանցավոր արարքի (հանցագործների) վերաբերյալ մանրամասները և հնարավորության դեպքում՝ կանխել հանցագործությունը: Մյուս կողմից՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինները ղեկավարվում են ՔԴՕ-ով (172-րդ հոդված) և ԲԳՕ-ով (10-րդ հոդված), որոնց համաձայն՝ բանկային գաղտնիքը տրամադրվում է միայն կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ, քանի որ քրեական հետապնդում իրականացնող մարմիններն իրենց աշխատանքներն իրականացնում եմ հարուցված քրեական գործերի շրջանակներում (երբ ներգրավված անձը բացառապես համարվում է կամ կասկածյալ կամ մեղադրյալ) և քննության կամ դատավարության նպատակով հավաքագրում են օրինական ապացույցներ: Վերը շարադրված մեկնաբանությունն արդեն իսկ ունի գործնական կիրառություն. դատարանը երկու դեպքով բավարարել է օպերատիվ հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմնի (ԱԱԾ)՝ կասկածյալ կամ մեղադրյալ չհամարվող անձանց վերաբերյալ ՕՀԳՕ-ի ներքո բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ձեռք բերման միջնորդությունը: Այսպիսով, գոյություն ունեն քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման երկու տարբեր ճանապարհներ (մեխանիզմներ). առաջինը՝ ՔԴՕ-ով (172-րդ հոդված) և ԲԳՕ-ով (10-րդ հոդված) սահմանված հնարավորությունն է, իսկ երկրորդը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով (13-րդ հոդված) և ԲԳՕ-ով (13.1-րդ հոդված) սահմանված հնարավորությունն է՝ ՖԴԿ-ի միջնորդությամբ[7]:

[7] 2009թ.-ի հոկտեմբերից մինչ և 2010թ.-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում, իրապահ մարմինների հարցումների հիման վրա ՖԴԿ-ն թվով 132 անձանց (թվով 52 ֆիզիկական անձինք և 80 իրավաբանական անձինք) վերաբերյալ տրամադրել է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ:

ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության	*Ապահովել, որպեսզի ֆինանսական գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու՝ ԻՊՄ-ների (հատկապես՝ ԱԱԾ-ի) իրավասությունը պայմանավորված չլինի «կասկածյալի» կամ «մեղադրյալի» առկայությամբ, քանի որ այդ պայմանը վնասում է ԱԱԾ-ի՝ որպես ՓԼ/ԱՖ գործեր քննելու լիազորությամբ օժտված մարմնի կողմից իր գործառույթների պատշաճ կատարմանը, ինչպես նաև արգելակում նման տեղեկությունների ստացումն այն գործերով, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց, կամ երբ տեղեկությունները վերաբերում են «կասկածյալից» կամ «մեղադրյալից» գատյալ անձի:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես վերը նշված առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*Փոփոխել ԲԳՕ-ն՝ ՖՀ-ներին թույլատրելով ֆինանսական գաղտնիքի համարվող տեղեկություններ փոխանակել այն դեպքերում, երբ դա պահանջվում է Հ.7-ով, Հ.9-ով կամ ՀՀ.VII-ով:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ԲԳՕ-ում (4-րդ հոդված) փոփոխության նախագիծ:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.9 (Երրորդ անձինք և ներկայացված հատկություն)	
Գնահատական՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված	*Փոփոխել Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը՝ սահմանելով որոշակի պարտավորություններ միջնորդների կամ այլ*

առաջարկություն	*երրորդ անձանց ներգրավող ՖՀ-ների պարտավորությունը՝ երրորդ անձից անմիջապես ստանալու ՀՊՈՒ գործընթացի որոշ տարրերի առնչվող անհրաժեշտ տեղեկությունները (ձափորոշիչներ 5.3-5.6):*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (15-րդ հոդվածի 8-րդ մաս) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Փոփոխել Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը՝ սահմանելով որոշակի պարտավորություններ միջնորդների կամ այլ երրորդ անձանց ներգրավող ՖՀ-ների պարտավորությունը՝ համարժեք քայլեր ձեռնարկելու՝ համոզվելու համար, որ նույնականացման տվյալների և ՀՊՈՒ պահանջներին առնչվող այլ էական փաստաթղթերի կրկնօրինակները պահանջի դեպքում անհապաղ կտրամադրվեն երրորդ անձի կողմից:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (15-րդ հոդվածի 8-րդ մաս) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Փոփոխել Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը՝ սահմանելով որոշակի պարտավորություններ միջնորդների կամ այլ երրորդ անձանց ներգրավող ՖՀ-ների պարտավորությունը՝ հավաստիանալու, որ երրորդ անձի գործունեությունը կարգավորվում է և վերահսկվում (Հ.23-ին, Հ.24-ին և Հ.29-ին համապատասխան), և որ այն ունի Հ.5-ով և Հ.10-ով նախատեսված ՀՊՈՒ պահանջները կատարելու համար անհրաժեշտ մեխանիզմներ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (15-րդ հոդվածի 8-րդ մաս) փոփոխության նախագիծ:

ձեռնարկված միջոցառումներ	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Սահմանել «մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» հասկացությունն այնպես, որ դա համահունչ լինի ՖԱԹՖ-ի ստանդարտին, մասնավորապես՝ պահանջը սահմանափակելով միայն այն «երրորդ անձանցով», որոնք ՖՀ-ներ են կամ ՆՈՖԳՏՄ-ներ՝ սահմանման մեջ չներառելով նաև «երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց»:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ պարբերություն) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*ՀՊՈՒ գործընթացի իրականացման համար ներկայացվող պայմանները բավարարող երրորդ անձի գտնվելու վայրի երկրների թույլատրելի ցանկը պարզելիս իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն առկա տեղեկություններն այն մասին, թե արդյոք այդ երկրները համարժեքորեն կիրառում են ՖԱԹՖ-ի հանձնարարականները: Սահմանել պահանջ, որի համաձայն հաճախորդի նույնականացման և ստուգման վերջնական պատասխանատվությունը շարունակում է կրել երրորդ անձի միջոցով գործող ՖՀ-ները:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (15-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ պարբերություն) փոփոխության նախագիծ:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Ո.12 (ՆՈՖԳՏՄ-ներ՝ Ո.6, Ո.8-11)

Գնահատական՝ չի համապատասխանում	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Օրենքով, կանոններով կամ պարտադիր կատարման ենթակա այլ միջոցներով նախատեսել գործարար հարաբերություն հաստատելու ժամանակ և հարաբերության ողջ ընթացքում ՀՊՈՒ պահանջների կիրառությունը քաղաքական ազդեցություն ունեցող անձանց (այսուհետ՝ ՔԱՈՒԱ) նկատմամբ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ պարբերություն, 17-րդ հոդվածի 2-րդ մաս), - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (3-րդ և 11-րդ գլուխներ), - Խաղայինոլորտի ՌՎՀՄՈՒ (3-րդ և 11-րդ գլուխներ), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (3-րդ և 11-րդ գլուխներ), - Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (3-րդ և 11-րդ գլուխներ):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Սահմանել պահանջներ՝ ապահովելու բարդ կամ անսովոր մեծ գործարքների, ինչպես նաև ակնհայտ տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներ չհետապնդող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալների և նպատակի ուսումնասիրությունների բացահայտումների գրավոր մանրակրկիտ ձևակերպումը և տվյալ ոլորտի մասնակիցների իրազեկության բարձրացման արդյունավետ և պատշաճ միջոցառումների իրականացումը՝ ՓԼ և ԱՖ միտումների փոփոխությունների վերաբերյալ տիպաբանությունների հրապարակմամբ կամ այլ կերպ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերություն) փոփոխության նախագիծ: Առաջարկությունն իրագործելու նպատակով, ՖԴԿ-ն հաշվետու անձանց համար կազմակերպել է մի շարք վերապատրաստումներ (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին), որոնց ընթացքում, այլ թեմաներից զատ, ներկայացվել են նաև ՆՈՖԳՏՄ-ների ոլորտում առկա ՓԼ/ԱՖ ներկայիս և զարգացող միտումները:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Սահմանել կոնկրետ պայմաններ, որոնց պահպանմամբ ՆՈՖԳՏՄ-ներն իրավասու են ՀՊՈՒ միջոցառումները կատարել երրորդ անձանց կամ միջնորդների միջոցով:*

ուն	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (15-րդ հոդվածի 8-րդ մաս) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	*Իրականացնել ՓԼ/ԱՖ մասին օրենքի 21-րդ հոդվածը (ներքին իրավական ակտեր) և 23-րդ հոդվածի 2-րդ մասը (ՓԼ և ԱՖ դեմ պայքարի համակարգերի և հսկողության մեխանիզմների համապատասխանության արտաքին աուդիտ) 10-ից պակաս աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ չտարածել ու հետկապված ռիսկերի և հետևանքների վերլուծություն:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Նման վերլուծություն է իրականացվել ՌՌՎ-ի շրջանակներում (ՌՌՎ-ի 6-րդ բաժին), որի արդյունքում կատարված եզրակացության համաձայն՝ ՆՈՖԳՏՄ ոլորտը, ընդհանուր առմամբ, հակված է ՓԼ/ԱՖ ցածր ռիսկին, ինչը հատուկ է նաև վերոնշյալ պահանջի հնարավոր չեղարկման դեպքում: Հետևաբար, հաշվի առնելով Հ.15-ի նախաբանը, ՓԼ/ԱՖ ռիսկի և գործունեության ծավալների վրա հիմնված մոտեցման արդյունքում ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ ներքին իրավական ակտերի և աուդիտի գծով պահանջների կիրառման տարբերակված մոտեցումը համարվում է համարժեք և հիմնավոր:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	*Կատարել ագործել տեղեկատվության պահպանման ոլորտում ՆՈՖԳՏՄ-ներին ներկայացվող պահանջները և նրանց պրակտիկան՝ արդյունավետությունը և հիմնավորվածությունն ապահովելու, ինչպես նաև կիրառության մեջ քննության շահերին չվնասելու նպատակով, քանի որ, հաշվի առնելով գործարար հարաբերությունների և գործարքների հետ կապված տեղեկատվության կարևորությունը, իշխանություններին անհրաժեշտ է տեղեկատվության պահպանման ստանդարտների և որակի հարցերին անդրադառնալ ռիսկերը նվազեցնելու տեսակետից՝ միաժամանակ փորձելով ԻՊՄ-ներին և վերահսկող մարմիններին բավարար չափով տրամադրել ՓԼ/ԱՖ գործերի քննության մեջ օգտագործվող արժանահավատ տվյալներ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (21-րդ հոդված), - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՀՀՄՈՒ (13-րդ գլուխ),

Ձեռնարկված միջոցառումներ	- Խաղայինուլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ), - Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (13-րդ գլուխ):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.15 (Ներքին հսկողություն, համապատասխանություն, աուդիտ)	
Գնահատական՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*ՖՀ-ներից պահանջել՝ ապահովելու ՓԼ և ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին ընթացակարգերի, կանոնակարգերի և հսկողական մեխանիզմների սահմանումը և պահպանումը՝ հաշվի առնելով ՓԼ և ԱՖ ռիսկը, ինչպես նաև նրանց գործարար գործունեության չափերը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (22-րդ և 23-րդ հոդվածներ) փոփոխության նախագիծ, ինչպես նաև համապատասխան դրույթ է սահմանվել Կանոնակարգով (3-րդ և 4-րդ գլուխներ) (ՓԳՀ-ին կից հավելված): Հետևելով առաջարկությանը՝ մշակվել և հաստատվել են ՖՀ-ների՝ հեռակա վերահսկողության և տեղերում ստուգման ուղեցույցներ, որոնք ներառում են նաև ներքին ընթացակարգերի, կանոնակարգերի և հսկողական մեխանիզմների՝ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգումներ: ՖՀ-ների նկատմամբ կիրառված վերահսկողական միջոցառումները նկարագրված են նաև Հ.30-ի ներքո 1-ին առաջարկության վերաբերյալ ներկայացված պատասխանում:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Փոփոխել իրավական ակտերը՝ սահմանելու ուղղակի և կոնկրետ դրույթ, որով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության ստորաբաժանմանը/աշխատակցին հնարավորություն կընձեռվի ժամանակին ստանալու ՀՊՈՒ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, գործարքների մասին տվյալները և վերաբերելի այլ տեղեկություններ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության	Տրված առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (23-րդ հոդվածի 4-րդ մասը), ինչպես նաև համապատասխան դրույթ է սահմանվել

իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Կանոնակարգում (3-րդ գլուխ):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*Ներդնել ՖՀ-ների կողմից բոլոր աշխատակիցների նախնական ստուգման ֆորմալ ընթացակարգեր, հատկապես այն աշխատակիցների, որոնց գործունեության ոլորտն առնչվում է ՓԼ/ԱՖ կանխարգելմանը: Ֆորմալ այդ ընթացակարգերը պետք է ուղղված լինեն աշխատակիցների աշխատանքի ընդունել իս բարձր չափանիշների ապահովմանը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տրված առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (22-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ պարբերություն):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	*Ապահովել ՖՀ-ներում ներքին աուդիտի անկախ և համարժեք միջոցներով ապահովված գործառույթի պահպանումը, հատկապես երբ աուդիտի գործառույթը վերապահված/հանձնարարված է ներքին աուդիտից բացի այլ աշխատակիցներին:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	ՖԴԿ-ի կողմից իրականացված վերլուծություն համաձայն՝ միայն մեկ բանկ է վերապահել իր ներքին համապատասխանության գործառույթը ներքին աուդիտի ստորաբաժանմանը (համապատասխանության գործառույթը հետագայում վերապահվելու է այլ ստորաբաժանմանը): Նման դեպքերում, աուդիտի գործառույթը վերապահվում է ներքին անվտանգության ստորաբաժանմանը, ինչը, բոլոր դեպքերում, անկախ է և ապահովված է համարժեք միջոցներով: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծը (3-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ պարբերություն), սահմանելով համապատասխանության ստորաբաժանումը, ներառում է նաև բացառություն առ այն, որ այս միավորի գործառույթները չեն կարող վերապահվել լիազոր մարմնի կողմից մատնանշված ստորաբաժանումներին ու աշխատակիցներին: Այսպիսով, նման դրույթը հնարավորություն է ստեղծում արգելել համապատասխանության գործառույթի վերապահումը ներքին աուդիտի ստորաբաժանմանը այն դեպքերում, երբ արդյունքում կարող է վտանգվել ներքին աուդիտի գործառույթի պատշաճ իրականացումը:
ՄԱՆԻՎԱԼ-ի	*Աշխատակիցների լրացուցիչ ուսուցում*

հաշվետվության տրված առաջարկության	*իրականացնել ՓԼ/ԱՖ կանխարգելման բոլոր թեմաներով, մասնավորապես՝ Հ.11-ի պահանջների առնչությամբ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք վերապատրաստումների կազմակերպման միջոցով (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության	*Ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող իրավական այլ ակտերի պահանջների արդյունավետ կատարումը ՖՀ-ների կողմից:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք վերապատրաստումների կազմակերպման միջոցով (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին): Տես Հ.30-ի ներքո 1-ին առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.16 (ՆՈՖԳՏՄ՝ Հ.14-15, Հ.21)	
Գնահատական՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության	*Ներդնել ռիսկերի կառավարման հսկողական մեխանիզմներ՝ ապահովելու համապատասխանության գործառույթի կատարման բավարար չափով ապահովվածություն՝ աշխատակիցներով, և հաղթահարելու համապատասխանության պատասխանատուի մոտ համապատասխանության գործառույթի և ընթացիկ աշխատանքային այլ գործառույթների միջև ծագող հակասությունները:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված	Տես Հ.15-ի ներքո 4-րդ առաջարկության վերաբերյալ ներկայացված պատասխանը: «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի (23-

առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	րդ հոդված) համաձայն՝ ներքին դիտարկումների մարմինը պետք է օժտված լինի անկախության և հաշվետու անձի ավագ ղեկավարության կարգավիճակով (ինչը հատուկ չէ գործառնական աշխատանքներին): Բացի այդ, ՌՀՀՄՈՒ-ները (7-րդ գլուխ) թվարկում են ներքին դիտարկումների մարմնի իրավասությունները, որոնց միջոցով նույնպես տարանջատում են աշխատանքային այլ գործառույթները:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*Բարձրացնել ՆՈՖԳՏՄ-ների իրազեկությունն օֆշորային տարածքների հրապարակված գործող ցանկի վերաբերյալ, ինչպես նաև ներդնել միջոցառումներ, որոնցով ՆՈՖԳՏՄ-ները կտեղեկացվեն այլ պետություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի թերությունների շուրջ առկա մտահոգությունների մասին:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՀՀՄՈՒ (2-րդ գլուխ), - Խաղային ոլորտի ՌՀՀՄՈՒ (2-րդ գլուխ), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՀՀՄՈՒ (2-րդ գլուխ), - Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՀՀՄՈՒ (2-րդ գլուխ): Առաջարկությունն իրագործվել է հաշվետու անձանց համար մի շարք վերապատրաստումների կազմակերպման միջոցով (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին), որոնց թեմաները ներառել են օֆշորային տարածքներից և ՓԼ/ԱՖ միջազգային ստանդարտներին չհամապատասխանող երկրներից բխող ռիսկերի հետ կապված հարցերը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկություն	*Սահմանել պահանջներ ՆՈՖԳՏՄ-ների համար՝ ապահովելու նրանց ներքին իրավական ակտերի վերաբերելիությունը համապատասխանության համակարգերին և հսկողական մեխանիզմներին՝ պարզապես «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի դրույթներն արտատպելու փոխարեն:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	ՖԴԿ-ի կողմից իրականացվել է ՆՈՖԳՏՄ-ների ներքին իրավական ակտերի ուսումնասիրություն (մասնավորապես՝ թվով 5 խաղատներ, թվով 3 հաշվապահական ընկերություններ և թվով 6 աուդիտորական ընկերություններ), որի արդյունքում տրվել են համապատասխան դիտողություններ՝ ուղղված ՓԼ/ԱՖ ռիսկերի և ՆՈՖԳՏՄ-ների գործունեության ծավալների պայմաններում ներքին իրավական ակտերի արդյունավետ կիրառության ապահովմանը: Ներքին

	իրավական ակտերում հանդիպող ընդհանուր թերություններ գծով տրված դիտողությունները քննարկվել են նաև հաշվետու անձանց համար կազմակերպված մի շարք վերապատրաստումների ընթացքում (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին), որոնց թեմաները ներառել են նաև օֆշորային տարածքներից և ՓԼ/ԱՖ միջազգային ստանդարտներին չհամապատասխանող երկրներից բխող ռիսկերի հետ կապված հարցերը: Ցուգահեռաբար, ՖԴԿ-ի կողմից նախաձեռնվել են տարբեր ոլորտների ՆՈՖԳՏՄ-երի գործունեության ծավալներին համապատասխանող ներքին իրավական ակտերի տիպային օրինակների մշակման աշխատանքները, ինչը կարող է հանդիսանալ գործող համապատասխանության համակարգի և ներքին իրավական ակտերի ներդաշնակությունը ապահովող արդյունավետ գործիք: Ներքին իրավական ակտերի տիպային օրինակները մշակվելու և հրապարակվելու են առաջիկա 2-3 ամիսների ընթացքում:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկությունն	*ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, գրավոր փաստաթղթավորելու բացահայտումները և արդյունքները գրավոր տրամադրելու իրավասու մարմիններին և աուդիտորներին:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծ (17-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր), - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 13-րդ գլուխներ), - Խաղային ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 13-րդ գլուխներ), - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 13-րդ գլուխներ), - Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ (11-րդ և 13-րդ գլուխներ):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.20 (Այլ ՆՈՖԳՏՄ-ներ և անվտանգ գործարքների մեթոդներ)

Գնահատական՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Իրականացնել ռիսկերի գնահատում՝ պարզելու, թե արդյոք ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակների և մասնագիտությունների պարագայում առկա է ՓԼ կամ ԱՖ նպատակով դրանց չարաշահման ռիսկ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	ՓԼ/ԱՖ ռիսկերի տեսանկյունից հնարավոր խոցելիություն ունեցող այլ ՆՈՖԳՏՄ-ների գծով վերլուծությունն իրականացվել է ՌՌՎ-ի շրջանակներում, որի արդյունքում կատարված եզրակացության համաձայն (ՌՌՎ-ի 6-րդ բաժին)՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում նախատեսված ՆՈՖԳՏՄ-ներից բացի, ՓԼ/ԱՖ ներգրավվածության հնարավոր ռիսկին հակված այլ ՆՈՖԳՏՄ-ներ առկա չեն:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու կանխիկի գործածությունը տնտեսության մեջ և խրախուսելու ավելի մեծ ծավալով գործառնությունների իրականացումը տնտեսության ֆորմալ հատվածում:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծով (5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերություն) սահմանված է 5 մլն ՀՀ դրամը գերազանցող կանխիկ գործառնությունների պարտադիր հաղորդման պարտավորություն, որի նպատակն է՝ կանխիկ հոսքերի նկատմամբ հաստատել առավել մանրամասն հսկողություն և խրախուսել տնտեսության մեջ կանխիկ գործառնությունների աստիճանական նվազեցումը: Բացի այդ, անկանխիկ գործառնությունների և փոխանցումների խրախուսման քաղաքականությունը ներառված է ՀՀ ԿԲ-ի՝ 2009-2011թթ.ի տեսլականում (հրապարակված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում): Տեսլականի հիման վրա մշակվել է միջոցառումների ծրագիր, որը ներառում է անկանխիկ գործառնությունների խրախուսման միջոցառումներ, անկանխիկ փոխանցումների իրականացման նոր գործիքների ներդրմանն ու կարգավորմանն ուղղված քայլեր, ինչպես նաև փոխանցումների և հաշվարկային գործառնությունների իրականացման նոր ծառայությունների մատուցման հնարավորություններ:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.24 (ՆՈՖԳՏՄ՝ կարգավորում, վերահսկողություն և մոնիտորինգ)	
Գնահատական՝ չի համապատասխանում	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության մեջ տրված առաջարկության	*Արդյունավետ մոնիտորինգ և ռիսկերի նկատմամբ զգայունության վրա հիմնված համապատասխանություն ապահովելու նպատակով անկախ իրավաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների, անկախ հաշվապահների և հաշվապահական ընկերությունների, թանկարժեք մետաղների դիլերների և թանկարժեք քարերի դիլերների մասով իրավասու մարմիններին կամ ԻԿԿ-ներին լիազորել՝ իրականացնել մոնիտորինգ և ստուգել նրանց համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության մեջ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում (28-րդ հոդվածի 1-ին մաս) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության մեջ տրված առաջարկության	*Ներդնել փաստաբանների գործունեության նկատմամբ վերահսկողության ռեժիմ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության մեջ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում (1-ին և 3-րդ հոդվածներ) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության մեջ տրված առաջարկության	*Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց համար ներդնել դեկավարության, սեփականատերերի և իրական շահառուների «պատշաճության և համապատասխանության» ստուգումներ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության մեջ տրված առաջարկության	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - Փոփոխություններ «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքում, - Խաղային ոլորտի ՌՎՀՄՈՒ (7-րդ բաժնի 21-րդ

իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	պարբերություն):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Օրենքով, կանոններով կամ կանոնակարգերով սահմանել պահանջներ, որոնցով կկանխվի խաղատան կամ շահումով խաղ կազմակերպող անձի սեփականության մեջ հանցագործների կամ նրանց հանցակիցների նշանակալից մասնակցությունն ունենալը կամ իրական շահառու լինելը, կառավարչական գործառույթ կատարելը կամ խաղատան կամ շահումով խաղ կազմակերպող անձի օպերատոր լինելը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես վերը նշված առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Վերահսկողություն իրականացնող մարմիններում ապահովել ՓԼ և ԱՖ հարցերով զբաղվող բավարար կադրերի և տեխնիկական կարողությունների առկայությունը:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	«ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագծի (28-րդ հոդվածի 1-ին մաս) համաձայն՝ ՖԴԿ-ն վերահսկողություն է իրականացնել այն հաշվետու անձանց նկատմամբ, որոնց գծով առկա չէ օրենքով սահմանված որևէ վերահսկող մարմին կամ առկայության դեպքում՝ սահմանված չէ ՓԼ/ԱՖ ոլորտում վերահսկողության իրավասությունն իրագործելու համար անհրաժեշտ իրավական համակարգը: Այսպիսով, համալրվել է ՖԴԿ-ի անձնակազմը (թվով 9 նոր աշխատակից), որոնցից թվով 3-ը ներգրավվելու են վերահսկողական գործընթացներում: ՆՈՖԳՏՄ ոլորտի վերահսկողական մարմինների մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով՝ ԱՄՀ-ի մասնագետների կողմից այս ոլորտի վերահսկող մարմինների ներկայացուցիչների համար կազմակերպվել է քննարկում (2.1-րդ բաժնի «ԱՄՀ-ի տեխնիկական աջակցություն» ենթաբաժին): Բացի այդ, համապատասխան վերահսկող մարմինների աշխատակիցները մասնակցել են նաև հաշվետու անձանց համար կազմակերպված մի շարք վերապատրաստումներին (2.1-րդ բաժնի «4.

	Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին):
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.25 (Ուղեցույցներ և հետադարձ արձագանք)	
Գնահատական՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*ՆՈՖԳՏՄ-ների համար ընդունել ուղեցույցներ, որոնք կօգնեն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտավորությունների լիարժեք ներդրման և կատարման հարցում:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները. - Հաշվապահական և աուդիտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ, - Խաղային ոլորտի ՌՎՀՄՈՒ, - Իրավաբանական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ, - Ռիելտորական ծառայությունների ոլորտի ՌՎՀՄՈՒ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Մշակել հետադարձ արձագանքի պատշաճ գործընթացներ՝ հաշվի առնելով բացահայտումների թվաքանակը և արդյունքները, նորագույն հնարքները, մեթոդները և միտումները, ինչպես նաև ՆՈՖԳՏՄ-ների պարագայում հնարավոր ՓԼ գործերի առանձնահատկությունները:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Հաշվետու անձանց հետադարձ արձագանք է հաղորդվել ՖԴԿ-ի տարեկան հաշվետվություններով (հրապարակված է ՖԴԿ-ի ինտերնետային կայքում), որոնք ներառում են տեղեկատվություն հաղորդումների և դրանց արդյունքների վերաբերյալ: Համապատասխան քննարկումների (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողությունների զարգացում» ենթաբաժին), տիպաբանությունների և շրջաբերական գրությունների միջոցով (հրապարակված են ՖԴԿ-ի ինտերնետային կայքում) հաշվետու անձանց են ներկայացվել ներկայիս ՓԼ/ԱՖ սխեմաները, մեթոդները և միտումները:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված	*ՖՀ-ների համար ընդունել լրացուցիչ ուղեցույցներ/ չափանիշներ, մասնավորապես՝ հաճախորդների վերաբերյալ տեղեկատվության թարմացման համարժեք*

առաջարկության	*պարբերականության որոշման առումով:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես Հ.5-ի ներքո (ՖՀ-ների մասով) 2-րդ առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության	*ՖՀ-ների համար ընդունել լրացուցիչ ուղեցույցներ/չափանիշներ, մասնավորապես՝ առկա հաճախորդների հետ գործարար հարաբերության ամբողջ ընթացքում անընդհատ ՀՊՈՒ իրականացնելու և ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերության ընթացքում հավելյալ անընդհատ մոնիտորինգ իրականացնելու առումով:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործվել է ՖՀ-ների համար մի շարք վերապատրաստումների կազմակերպման միջոցով (2.1-րդ բաժնի «4. Վերապատրաստումներ և կարողություններ զարգացում» ենթաբաժին), այդ թվում՝ սովորական և բարձր ռիսկի հաճախորդների նկատմամբ ՀՊՈՒ-ի իրականացման թեմայով, ներառյալ՝ ՔԱՈՒԱ-ների նկատմամբ հավելյալ անընդհատ մոնիտորինգը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.28 (Իրավաուղ մարմինների իրավասությունները)	
Գնահատական՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության	*ՔԴՕ-ում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ նախատեսելու ՓԼ և ԱՖ գործերով փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացում պարտադրելու՝ ԻՊՄ-ների կամ դատարանների ընդհանուր իրավասությունը, այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ տեղեկություններ են պահանջվում ոչ թե տուժողից, հայցվորից, կասկածյալից կամ մեղադրյալից, այլ՝ վկայից կամ այլ անձանցից:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության	Առաջարկությունն իրագործվել է դատավարության գործընթացում յուրաքանչյուր կողմի կամ մասնակցի առումով ՔԴՕ-ում համապատասխան փոփոխություն կատարելու նախագծով:

ան իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Մասնավորապես, փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացում պարտադրելու՝ դատախազի, քննիչի և հետաքննություն իրականացնող մարմնի ընդհանուր իրավասությունները սահմանված են, համապատասխանաբար, ՔԴՕ-ի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությամբ, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ պարբերության և 57-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ պարբերությամբ: Միևնույն ժամանակ, ՔԴՕ-ի համաձայն՝ քրեական գործընթացի բոլոր կողմերն ու մասնակիցները պարտավոր են ներկայացնել փաստաթղթեր և առարկաներ (քաղաքացիական հայցով պատասխանող կողմը՝ 75-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերություն, վկաները՝ 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերություն, տուժողի, հայցվորի, կասկածյալի կամ մեղադրյալի իրավական ներկայացուցիչը՝ 77-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ պարբերություն, տուժողի, հայցվորի կամ պատասխանողի ներկայացուցիչը՝ 79-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերություն):
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, իսկ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման մասով դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի ԻՊՄ-ներին արդյունավետ հնարավորություն ընձեռվի՝ ստանալու և պարտադրելու ներկայացնել տեղեկություններ, գործարքների փաստաթղթեր, հաշիվների փաստաթղթեր և ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված այլ փաստաթղթեր և տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*ՓԼ/ԱՖ գործերի քննության արդյունավետության ապահովման նպատակով՝ ԱԱԾ-ի քննչական վարչության և մաքսային ծառայությունների հետաքննության և նախաքննության վարչությունների աշխատակիցներին հարկավոր է անցնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ վերապատրաստումներ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված	ԱԱԾ-ն ներկայացնող հատուկ գործերով մեկ քննիչ գործնական վերապատրաստման նպատակով մասնակցել է Բուլղարիայի ՖՀՄ կատարած այցին (2.1-րդ բաժնի

առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	«ԱՄՆ տեխնիկական օժանդակության ծրագիր» ենթաբաժին), որտեղ այլ թեմաների հետ մեկտեղ ներկայացվել և քննարկվել է ՓԼ/ԱՖ քննությունների գծով Բուլղարիայի փորձը: 2010թ.-ի հուլիսին ՊԵԿ-ի ներկայացուցիչների համար (մասնակցել են նաև մաքսային մարմինների նախաքննության և հետաքննության ստորաբաժանումները) կազմակերպվել է առանձին վերապատրաստում (2.1-րդ բաժնի «Վերապատրաստում և կարողությունների զարգացում» ենթաբաժին), որտեղ այլ թեմաների հետ մեկտեղ քննարկվել են մաքսային սահմանով իրականացվող ՓԼ/ԱՖ սխեմաները և հետախուզական մեթոդները: Ֆինանսական հետախուզության վերաբերյալ 2010թ.-ին Դատախազության դպրոցում անցկացվելիք վերապատրաստմանը մասնակցելու են նաև ԱԱԾ-ի և մաքսային մարմինների քննչական ստորաբաժանումների առաջատար աշխատակիցները:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.30 (Ռեսուրսներ, անաչառություն և վերապատրաստում)	
Գնահատականը՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկությունն	*Գտնել և ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ, որոնց միջոցով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակում կապահովվի թե տեղերում անցկացվող ստուգումների, թե փաստաթղթային վերահսկողության համարժեք մակարդակ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով վերահսկողություն իրականացնելիս (հեռակա վերահսկողություն և տեղերում ստուգումներ) ՖՎՎ-ն, որպես կանոն, ՖԴԿ-ի հետ կնքած ՓՀ-ի շրջանակներում օգտագործում է վերջինիս մարդկային ռեսուրսները և ՖԴԿ-ի վերլուծաբաններին ներգրավում հերթական և արտահերթ վերահսկողական աշխատանքներին: Այս նպատակով, ՖԴԿ-ի անձնակազմը համալրվել է ևս 3 վերլուծաբանով, որոնց հիմնական պարտականությունը ստուգումներին մասնակցելն է: Ինչ վերաբերում է ՖՎՎ-ին, երրորդ փուլի գնահատումից հետո վերջինիս անձնակազմի թվաքանակը 75-ից հասել է 83-ի: Տնտեսության մասշտաբով իրականացված ՌՌՎ-ի կիրառական հատկանիշներից մեկը վերջինիս հիմքում ընկած տվյալների վերլուծությունն է (այդ թվում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքը, գործարքների բնույթն ու ծավալը, ՓԼ/ԱՖ տիպաբանությունների հետ համընկնումները,

ներկայացված ԿԳՀ-ների քանակը, մասնակիցների և հաճախորդների ռեզիդենտությունը և այլն), որի համաձայն՝ ոչ բանկային ՖՀ-ներին բաժին է ընկնում ֆինանսական հատվածում առկա ՓԼ/ԱՖ համախառն ռիսկի 6%-ը, իսկ բանկերին՝ մնացած 94%-ը: Նշվածը վկայում է կիրառվող՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցման իրավացիության մասին, որի շրջանակներում վերահսկողական աշխատանքների և ջանքերի հիմնական մասն ուղղված է ֆինանսական համակարգի ամենախոցելի (բանկային) հատվածին:

Իրավամբ, հաշվի առնելով վերը նշված գնահատականները և ոչ բանկային ՖՀ-ների՝ համեմատաբար զգալի թվաքանակը, ՖՎՎ-ն բաշխել է իր մարդկային ռեսուրսները ոչ բանկային ՖՀ-ներին համապատասխան: Նշված բաշխվածությունը ֆինանսական համակարգի երկու հատվածներում էլ ապահովում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով վերահսկողական աշխատանքներին անհրաժեշտ մարդկային ռեսուրսների առկայություն:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բաղադրիչը ներառող ստուգումների քանակական աճը արտացոլելու նպատակով ստորև ներկայացվում է 2009թ.-ի ընթացքում և 2010թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ՖՀ-ներում (բանկերում և ոչ բանկային ՖՀ-ներում) իրականացված ստուգումների վիճակագրությունը:

Աղյուսակ 1. ՖՀ-ներում իրականացված ստուգումների (համալիր և նպատակային) ընդհանուր թվաքանակը.

Հաստատություն	Ստուգումների թվաքանակ	
	2009	2010թ.-ի 1-ին կիսամյակ
Բանկեր	24	27
Վարկային կազմակերպություններ	6	6
Ապահովագրական ընկերություններ	7	4
Գրավատներ	39	41
Արտարժույթի փոխանակման կետեր	444	205
Ներդրումային ընկերություններ	5	3
Դրամական փոխանցումների համակարգեր	1	2

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բաղադրիչը ներառող ստուգումների խորության առաջընթացը արտացոլելու նպատակով ստորև ներկայացվում է 2009թ.-ի ընթացքում և 2010թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում հեռակա և տեղերում ստուգումների,

	ինչպես նաև ՖԴԿ-ի տեղեկացումների արդյունքում բացահայտված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների խախտման համար կիրառված պատժամիջոցների վիճակագրությունը: **Հաստատություն** / **Տեղեկացում, ծանուցում** (2009, 2010թ.-ի 1-ին կիսամյակ) / **Տուգանք** (2009, 2010թ.-ի 1-ին կիսամյակ) / **Լիցենզիայի ժամանակավոր կասեցում** (2009, 2010թ.-ի 1-ին կիսամյակ) Բանկեր: 10, 3, 2, 10[8], 0, 0 Վարկային կազմակերպություններ: 6, 0, 1, 0, 0, 0 Ապահովագրական ընկերություններ: 3, 4, 1, 0, 0, 0 Գրավատներ: 0, 0, 0, 0, 2, 0 Ներդրումային ընկերություններ: 3, 0, 0, 1, 0, 0 Արտարժույթի փոխանակման կետեր: 1, 4, 1, 0, 0, 0 Նշենք նաև, որ ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ստուգումներ իրականացնելու բաղադրիչը ներառվել է բանկերում ստուգումների իրականացման ձեռնարկում (վարկային կազմակերպություններում ստուգումներ իրականացնելու համար կիրառվում է միևնույն ձեռնարկը), ինչպես նաև հաստատվել են ապահովագրական և ներդրումային ընկերություններում տեղերում ստուգումների իրականացման ձեռնարկները (ներառյալ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ստուգումներ իրականացնելու բաղադրիչը): Նշվածը կբարձրացնի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով ստուգումների արդյունավետության մակարդակը և նվազագույնի կհասցնի մարդկային գործոնի ազդեցությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված	*Դիտարկել ՖԴԿ-ին լրացուցիչ ռեսուրսներ տրամադրելու նպատակահարմարությունը:*

[8] 2010թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում առևտրային բանկերի նկատմամբ ՀՊՈՒ-ի պահանջների խախտման գծով նշանակված տուգանքների ընդհանուր գումարը կազմել է 2 մլն ՀՀ դրամ՝ ի հակադրություն 2009թ.-ի և 2008թ.-ի ընթացքում նշանակված, համապատասխանաբար, 200 հազ. և 300 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով տուգանքների:

առաջարկություն	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվության տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	<u>Մարդկային ռեսուրսներ</u> ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2010թ.-ի մարտի 16-ի թիվ 45Ա որոշմամբ վերանայվել է ՖԴԿ-ի կանոնադրությունը՝ ՖԴԿ-ի կառուցվածքի փոփոխությամբ պարտավորությունների արդյունավետ տարանջատում ապահովելու և առավել ճկուն գործելաոճ որդեգրելու նպատակով: Այսպիսով, ՓԳՀ-ի ընդունումից հետո տարանջատվել են ՖԴԿ-ի Իրավական ապահովման և Միջազգային հարաբերությունների բաժինները, և ՖԴԿ-ի աշխատակիցների թվաքանակը հասել է 24-ի: Այժմ ՖԴԿ-ի կառուցվածքը ներառում է ՖԴԿ-ի ղեկավարին, ղեկավարի տեղակալին, գործավարին, Իրավական ապահովման բաժինը (թվով 5 աշխատակից), Միջազգային հարաբերությունների բաժինը (թվով 1 աշխատակից և 2 թափուր աշխատատեղ), Տեղեկատվական համակարգերի մշակման և զարգացման բաժինը (թվով 5 աշխատակից և 1 թափուր աշխատատեղ), Վերլուծությունների բաժինը (թվով 5 աշխատակից և 3 թափուր աշխատատեղ), ինչպես նաև տարբեր բաժիններին կցված թվով 5 պայմանագրային աշխատակիցներ: <u>Ֆինանսական ռեսուրսներ</u> Լրացուցիչ մարդային ռեսուրսների ներգրավման և ՖԴԿ աշխատակիցների վերապատրաստման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են 2010թ.-ի և 2011թ.-ի բյուջեների կանխատեսումներով: Մասնավորապես, աշխատավարձերի և պարգևավճարների ֆոնդերի կանխատեսումները կազմում են տարեկան 80 և 90 մլն ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 2010թ.-ի և 2011թ.-ի համար: 2009թ.-ի համեմատ բյուջետային ծախսերի աճը հիմնավորված է արդեն իսկ ներգրավված լրացուցիչ աշխատակիցներով և 2010-2011թթ.-ի ընթացքում համալրման ենթակա թափուր աշխատատեղերի առկայությամբ: Ինչ վերաբերում է վարչական ծախսերին (սեմինարներ, վերապատրաստումներ, գործնական այցեր, գրականություն և այլն), բյուջետային կանխատեսումները կազմում են տարեկան 25 և 26 մլն ՀՀ դրամ, համապատասխանաբար՝ 2010թ.-ի և 2011թ.-ի համար: Նշված կանխատեսումները զգալիորեն գերազանցում են նախորդ տարիների վարչական ծախսերի միջին ծավալը և արտացոլում են անձնակազմի մասնագիտական ունակությունների անընդհատ զարգացմանն ուղղված ՖԴԿ-ի մտադրությունը: <u>Գործառնական ռեսուրսներ</u> ՖԴԿ-ի նախաձեռնությամբ՝ մշակվել և ներդրվել է բարդ ծրագրային փաթեթ, որն ուղղված է գործերի կառավարման համակարգի բարելավմանը, ինչպես նաև մուտքագրվող և հավաքագրվող տեղեկատվությունից գործնական արդյունքների ստացմանը: Գործերի կառավարման ծրագրային փաթեթը նախատեսված է

	Վերլուծությունների բաժնի կողմից օգտագործման համար և կոչված է բարձր մակարդակի վրա հասցնել ՖԴԿ-ի վերլուծական և մոնիտորինգի կարողությունները:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկությունն	*ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ ուսուցում իրականացնել ԱԱԾ-ի քննչական վարչության պաշտոնատար անձանց, ինչպես նաև մաքսային մարմնի հետաքննության և նախաքննության վարչությունների աշխատակիցների համար:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկությանն իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես Հ.28-ի ներքո 3-րդ առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.32 (Վիճակագրություն)	
Գնահատական՝ չի համապատասխանում	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկությունն	*Վարել ճշգրիտ վիճակագրություն (ՓԳՀ-ի 1055-1057-րդ պարբերություններ):*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկությանն իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Հետևելով առաջարկությանը՝ ՖՎՎ-ն վարում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացված ստուգումների և դրանց արդյունքների վերաբերյալ պարբերաբար թարմացվող վիճակագրություն (տես նաև Հ.30-ի ներքո ներկայացված պատասխանը) և ՖԴԿ-ի հետ համագործակցության ՓՀ-ի 5-րդ հոդվածի ներքո պարբերաբար տրամադրում ՖԴԿ-ին: ՓԼ գործերի հարուցման և քննության արդյունքների վերաբերյալ վիճակագրությունը պահվում է Ոստիկանության տեղեկատվական կենտրոնի տվյալների շտեմարանում: Այլ ԻՊՄ-ների կողմից հարուցված ՓԼ գործերը կարող են հանձնվել ԱԱԾ-ին միայն վերահսկող դատախազի հանձնարարականի կամ համաձայնության հիմքով (ՓԼ դեպքում՝ Գլխավոր

	դատախազության Ազգային մարմիններում քննվող գործերով վարչության կողմից): Այսպիսով, նշված գործերի վերաբերյալ Դատախազությունը վարում է ընթացիկ վիճակագրություն: ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ վերահսկող մարմինները պարտավոր են վերահսկողական աշխատանքների վերաբերյալ վարել համապատասխան վիճակագրություն, ինչը, «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի գործող (13-րդ հոդվածի 7-րդ մաս) և նախագծային (12-րդ հոդվածի 7-րդ մաս) տարբերակների համաձայն, պետք է տրամադրվի ՖԴԿ-ին:
Նախորդ գնահատումից հետո (այլ) փոփոխություններ	

Հ.35 (Կոնվենցիաներ)	
Գնահատական՝ մասամբ համապատասխանում է	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկությունն	*Նախատեսել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես ՀՀ.II-ի ներքո 5-րդ առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկությունն	*Բռնագրավման իրավասությունը սահմանել Պալերմոյի կոնվենցիայով սահմանված բոլոր հանցագործությունների համար:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումն	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում (8-րդ և 9-րդ հոդվածներ) փոփոխության նախագիծ:

եր	
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Նախատեսել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ միախառնված օրինական գույքի, ինչպես նաև հանցագործության կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների առգրավման հնարավորությունը՝ ինչպես սահմանված է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն ի իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Առաջարկությունն իրագործելու նպատակով մշակվել է ՔՕ-ում (3-րդ հոդված) փոփոխության նախագիծ:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Իրավապահ մարմիններին կամ դատարաններին վերապահել ընդհանուր իրավասություն՝ պարտադրել ներկայացնելու ֆինանսական փաստաթղթեր, այդ թվում՝ այն գործերով, որոնց համար տեղեկատվություն է պահանջվում վկայից կամ այլ՝ տուժող, հայցվոր, կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանցից:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն ի իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես Հ.28-ի ներքո 1-ին առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի ԻՊՄ-ները հնարավորություն ունենան արդյունավետորեն ստանալ և պարտադրել՝ ներկայացնելու ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ, գործարքի փաստաթղթեր, հաշիվների կամ այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի:*

ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես Հ.4-ի ներքո 1-ին առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*Արժույթի և ըստ ներկայացնողի գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման հայտարարագրման համակարգի գործողությունը տարածել նաև փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա տեղափոխման նկատմամբ:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես ՀՀ.IX-ի ներքո 1-ին առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկություն	*ԱԱԾ-ի քննչական վարչության աշխատակիցների համար առկա է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով լրացուցիչ վերապատրաստումների անհրաժեշտություն:*
ՄԱՆԻՎԱԼ-ի հաշվետվությամբ տրված առաջարկության իրագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներ	Տես Հ.28-ի ներքո 3-րդ առաջարկության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
	մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, ինչպես նաև այդ գույքին համարժեք այլ՝ օրինական ծագում ունեցող գույքը, - ՔՕ-ի 55-րդ հոդվածի 3-րդ մասը պետք է փոփոխել՝ թույլատրելու գույքի բռնագրավումն անկախ դրա՝ դատապարտյալի կամ որևէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, - Միջոցներ ձեռնարկել՝ նախատեսելու ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտներին կամ դրանց կատարման մեջ օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք օրինական ծագում ունեցող գույքի առգրավման հնարավորությունը, - ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի ԻՊՄ-ները հնարավորություն ունենան արդյունավետորեն հայտնաբերել և հետապնդել այն գույքը, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման կամ կասկածվում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ լինելու մեջ, այդ թվում՝ նաև այն դեպքերում, որոնցում դեռևս չկա կոնկրետ «կասկածյալ», - Իրավապահ մարմինները պետք է ՓԼ և ԱՖ հետաքննությունների/ նախաքննությունների համատեքստում ապահովեն կանխարգելիչ միջոցների արդյունավետ իրագործումն այն գույքի նկատմամբ, որը կարող է ենթակա դառնալ բռնագրավման, - ՀՀ իշխանությունները պետք է վերանայեն բռնագրավման նկատմամբ իրենց մոտեցումը՝ նպատակ հետապնդելով ավելացնել բռնագրավման գործողությունների

	թիվը և խրախուսել բռնագրավման մասին դրույթների առավել հաճախակի կիրառությունը, - Իշխանությունները պետք է դիտարկեն քրեաիրավական դաշտի գնահատման նպատակահարմարությունը՝ պարզելու համար, թե արդյոք ճիշտ կլինի ներդնել քաղաքացիական բռնագրավման ինստիտուտ կամ գույքի այնպիսի բռնագրավման ինստիտուտ, որի դեպքում իրավախախտն է պարտավոր ապացուցել գույքի օրինական ծագումը, կամ՝ քրեական կազմակերպությունների գույքի բռնագրավման ինստիտուտը՝ չսահմանափակվելով միայն այն կազմակերպություններով, որոնք ուղղակիորեն կապված են մեղադրական դատավճռի հիմքում ընկած հանցագործությունների հետ:
2.4. ԱՖ նպատակով օգտագործվող միջոցների սառեցում (ՀՀ.III)	- ՀՀ-ն պետք է վերանայի «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված սառեցման մեխանիզմները, որոնք նպատակաուղղված են ՄԱԿԱԽ-ի թիվ 1267 և 1373 բանաձևերի, ինչպես նաև ՀՀ.III-ի պահանջների կատարմանը: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ պետք է նախատեսել ՄԱԿԱԽ-ի բանաձևերով սահմանված՝ նախատեսման և սառեցման պարտավորությունների կատարումը բոլոր դեպքերում՝ անկախ այն հանգամանքից, թե հնարավոր է արդյոք քրեական գործ կամ քրեական հետապնդում հարուցել ահաբեկչական հանցագործության հատկանիշներով: Պետք է նախատեսել անժամկետ սառեցման մեխանիզմ, որը հնարավոր կլինի կիրառել՝ անկախ ներպետական մակարդակով քրեական գործի հարուցումից կամ դրա արդյունքից, միաժամանակ նաև բացառելով սառեցման հարցում հայեցողությունը ՄԱԿԱԽ-ի ցանկերի հետ համընկնող անունների հայտնաբերման դեպքում, - Ներդնել մեխանիզմ, որով այլ պետությունների սառեցման մեխանիզմների շրջանակում նախաձեռնված սառեցման գործողությունները ՀՀ-ում կգործեն ներկայումս օրենքով սահմանված 10-օրյա ժամկետի

	ավարտից հետո: Սառեցման մեխանիզմները պետք է բոլոր փուլերում կիրառելի լինեն նախատեսված անձի կամ կազմակերպության համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի, ինչպես նաև այն միջոցների նկատմամբ, որոնք նախատեսված անձին կամ կազմակերպությանը չեն պատկանում սեփականության իրավունքով, սակայն վերահսկվում են նրանց կողմից, - Սառեցման մեխանիզմները պետք է տարածվեն ոչ միայն ֆինանսական միջոցների, այլ նաև՝ ֆինանսական գույքի և ցանկացած տեսակի գույքի նկատմամբ, ինչպես նախատեսված է ՖԱԹՖ-ի ստանդարտով և III հատուկ հանձնարարականի Բացատրական մեկնաբանությամբ, - ՖԴԿ-ն պետք է ընդունի ֆորմալ ուղեցույցներ հաշվետվություն տրամադրող անձանց և այլ անհատների կամ կազմակերպությունների համար, որոնք կարող են ՄԱԿԱԽ-ի թիվ 1373 բանաձևի և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն սառեցման գործողություններ ձեռնարկելու պարտավորություններ առաջացնող միջոցներ կամ այլ գույք ունենալ, - ՖԴԿ-ն պետք է ընդունի ուղեցույց կամ ընթացակարգ, որով կնախատեսվի, թե ինչպես կարող են ՀՀ ԿԲ-ի կողմից «ահաբեկչության հետ կապված անձանց» ցանկում ներառված անձինք կամ կազմակերպությունները բողոքարկել համապատասխան որոշումը և դիմել ցանկից իրենց հանելու համար, եթե առաջանա նման իրավիճակ, - «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 25-րդ հոդվածով պետք է նախատեսել սառեցման սկզբնական գործընթացի մեջ հայտնված բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դրույթներ:
2.5. Ֆինանսական հետախուզության մարմինը, դրա գործառույթները (Ո.26)	- Փոփոխել ՖԴԿ-ի կանոնադրությունը՝ արտացոլելու «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր օրենքով նախատեսված՝ ՖԴԿ-ի նոր լիազորությունները, - Ավելացնել հաստիքների թիվը, հատկապես վերլուծության

	բաժնում, - Դիտարկել ՆԾԳՀ-ների վերլուծությամբ զբաղվող հատուկ ստորաբաժանում (կամ վերլուծության բաժնի կազմում ենթաբաժին) ստեղծելու նպատակահարմարությունը, - Բարձրացնել մասնագիտական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված ՆՈՖԳՏՄ-ների (հատկապես իրավաբանների, հաշվապահների և աուդիտորների) իրազեկությունը՝ նրանց պարզաբանելով «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության շրջանակը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում փոփոխել օրենքի տեքստը՝ երաշխավորելու, որպեսզի մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը չնսեմացնեն լրացուցիչ տեղեկություններ պահանջելու՝ ՖԴԿ-ի կարողությունը, - Թանկարժեք մետաղների և քարերի դիլերների (ինչպես նաև արվեստի գործերի դիլերների և սակարկությունների կազմակերպիչների) համար տրամադրել ուղեցույցներ և հաշվետվությունների ձևեր:
2.6. Իրավապահ, քրեական հետապնդման և իրավասու այլ մարմիններ (Ռ.27 և 28)	- ՔԴՕ-ում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ նախատեսելու ՓԼ և ԱՖ գործերով փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացում պարտադրելու՝ ԻՊՄ-ների կամ դատարանների ընդհանուր իրավասությունը, այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ տեղեկություններ են պահանջվում ոչ թե տուժողից, հայցվորից, կասկածյալից կամ մեղադրյալից, այլ՝ վկայից կամ այլ անձանցից, - ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, իսկ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկությունների ստացման մասով դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի ԻՊՄ-ներին արդյունավետ հնարավորություն ընձեռվի՝ ստանալու և պարտադրելու

	ներկայացնել տեղեկություններ, գործարքների փաստաթղթեր, հաշիվների փաստաթղթեր և ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված այլ փաստաթղթեր և տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի, - ԱԱԾ-ի քննչական վարչության, ինչպես նաև մաքսային ծառայության հետաքննության և նախաքննության վարչությունների աշխատակիցները պետք է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմայով կոնկրետ վերապատրաստում անցնեն, որպեսզի ապահովվի ՓԼ/ԱՖ գործերի քննության արդյունավետությունը:
2.7. Անդրսահմանային հայտարարագրում և բացահայտում (ՀՀ.IX)	- Հայտարարագրման պահանջները տարածել փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա փոխադրումների նկատմամբ, - Մաքսային մարմիններին իրավասություն վերապահել՝ կասեցնելու կամ սահմանափակելու արժույթի շարժը ՓԼ/ԱՖ կասկածի առկայության դեպքում, - Խստացնել պատժամիջոցները, - Ներդնել ՀՀ.III-ով և ՄԱԿԱԽ-ի բանաձևերով նախատեսված սառեցման պահանջներն այն անձանց դեպքում, որոնք իրականացնում են ԱՖ-ին առնչվող արժույթի կամ ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխում, - Բարձրացնել հանրության իրազեկությունը սահմանված շեմը գերազանցող գումարով կանխիկի և վճարային արժեթղթերի ներմուծումը և արտահանումը հայտարարագրելու անհրաժեշտության մասին, - Ճշգրտել օգտագործվող հայտարարագրերում ներմուծման և արտահանման հայտարարագրման պահանջների բացատրությունները, որպեսզի դրանք միանշանակորեն տարածվեն նաև վճարային արժեթղթերի նկատմամբ, - Հայտարարագրումը խրախուսելու

	նպատակով բարձրացնել գործող պատժամիջոցների արդյունավետությունը և նախատեսել կոնկրետ պատժամիջոցներ ՓԼ և ԱՖ համար, - Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսել մաքսային մարմնի իրավասությունը՝ պահանջելու տեղեկություններ արժույթի կամ վճարային արժեթղթերի ծագման և օգտագործման մտադրության մասին, - Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսել ոսկու, թանկարժեք մետաղների կամ թանկարժեք քարերի անսովոր անդրսահմանային շարժի մասին այլ երկրների իրավասու մարմինների ծանուցումը, - Հայտարարագրման պահանջների հիման վրա հավաքագրված տեղեկությունները վերլուծելու միջոցով ձևավորել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օպերատիվ տվյալներ:
3. Կանխարգելիչ միջոցներ. ՖՀ-ներ	
3.1. ՓԼ/ԱՖ ռիսկը	-
3.2. ՀՊՈՒ, ներառյալ հավելյալ և նվազեցված միջոցառումներ (Հ.5–8)	- Արգելել ըստ ներկայացնողի բանկային գրքույկները և անանդային սերտիֆիկատները, ինչպես նաև ըստ ներկայացնողի այլ արժեթղթերը՝ ուժը կորցրած ճանաչելով/ փոփոխելով համապատասխան հոդվածները քաղաքացիական օրենսգրքում և բոլոր այլ իրավական ակտերում, որոնցով նախատեսվում կամ կարգավորվում են ըստ ներկայացնողի (վճարային) գործիքները, - ՖՀ-ների համար ներդնել լրացուցիչ ուղեցույցներ հաճախորդների վերաբերյալ տվյալների թարմացման համարժեք ժամկետների մասով՝ ապահովելու հետևողական և արդյունավետ իրագործումը, - Ներդնել լրացուցիչ ուղեցույցներ՝ մասնավորեցնելով այն ողջամիտ ժամկետը, որը ՖՀ-ները պետք է պահպանեն գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում նույնականացման տեղեկություններ ձեռք բերելիս և այդ տեղեկությունների

	իսկությունը ստուգելիս, - ՖՀ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ ընդունելու ռիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր այն իրավիճակների վերաբերյալ, որոնցում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը, - ՖՀ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա իրականացնելու ՀՊՈՒ միջոցառումներ, ներառյալ՝ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը համապատասխան պարբերականությամբ, - Ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով և հարակից իրավական ակտերով ՀՊՈՒ միջոցառումների մասով նախատեսված պարտավորությունների առավել արդյունավետ կատարումը ՖՀ-ների կողմից՝ վերապատրաստումների կամ իրազեկության բարձրացման այլ նախաձեռնությունների միջոցով, - ՖՀ-ների համար ներդնել լրացուցիչ ուղեցույցներ/ իրականացնել լրացուցիչ վերապատրաստումներ ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերություն հաստատելիս օրենքով պահանջվող՝ հավելյալ անընդհատ մոնիտորինգի ընթացակարգերի վերաբերյալ, - Իրավական ակտերով կամ ուղեցույցներով նախատեսել գործարար հարաբերություն հաստատելիս անձի ֆիզիկապես ներկա լինելու պահանջը: Բացի այդ, ի հավելումն ներկայումս սահմանված երկու լրացուցիչ միջոցառումների, ուսումնասիրել ՀՊՈՒ-ի մասին Բազելյան կոմիտեի փաստաթղթի 2.2.6 բաժինը՝ նվիրված «Առանց առերես շփման հաճախորդներին», որով նախատեսվում են ռիսկը մեղմելու լրացուցիչ միջոցառումներ, որոնք ՖՀ-ները կարող են դիտարկել առանց առերես շփման հաճախորդների հետ գործարար հարաբերություններ հաստատելիս:
3.3. Երրորդ անձինք և	- Փոփոխել Կանոնակարգը՝ սահմանելով

ներկայացված հարաբերություններ (Ռ.9)	որոշակի պարտավորություններ միջնորդների կամ այլ երրորդ անձանց ներգրավող ՖՌ-ների պարտավորությունը՝ - Երրորդ անձից անմիջապես ստանալու ՌՊՈՒ գործընթացի որոշ տարրերի առնչվող անհրաժեշտ տեղեկությունները (չափորոշիչներ 5.3-5.6), - Համարժեք քայլեր ձեռնարկելու՝ համոզվելու համար, որ նույնականացման տվյալների և ՌՊՈՒ պահանջներին առնչվող այլ էական փաստաթղթերի կրկնօրինակները պահանջի դեպքում անհապաղ կտրամադրվեն երրորդ անձի կողմից, և - Հավաստիանալու, որ երրորդ անձի գործունեությունը կարգավորվում է և վերահսկվում (Ռ.23-ին, Ռ.24-ին և Ռ.29-ին համապատասխան), և որ այն ունի Ռ.5-ով և Ռ.10-ով նախատեսված ՌՊՈՒ պահանջները կատարելու համար անհրաժեշտ մեխանիզմներ: - Սահմանել «մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց» հասկացությունն այնպես, որ դա համահունչ լինի ՖԱԹՖ-ի ստանդարտին, մասնավորապես՝ պահանջը սահմանափակելով միայն այն «երրորդ անձանցով», որոնք ՖՌ-ներ են կամ ՆՈՖԳՏՄ-ներ՝ սահմանման մեջ չներառելով նաև «երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց»: - ՌՊՈՒ գործընթացի իրականացման համար ներկայացվող պայմանները բավարարող երրորդ անձի գտնվելու վայրի երկրների թույլատրելի ցանկը պարզելիս իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն առկա տեղեկություններն այն մասին, թե արդյոք այդ երկրները համարժեքորեն կիրառում են ՖԱԹՖ-ի հանձնարարականները, և սահմանել պահանջ, որի համաձայն հաճախորդի նույնականացման և ստուգման վերջնական պատասխանատվությունը շարունակում է կրել երրորդ անձի միջոցով գործող ՖՌ-ները:
3.4. Գաղտնիություն (Ռ.4)	- ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՌԳՕ-ի 29-րդ

	հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, - Ապահովել, որպեսզի ֆինանսական գաղտնիք համարվող տեղեկություններ ստանալու՝ ԻՊՄ-ների (հատկապես ԱԱԾ-ի) իրավասությունը պայմանավորված չլինի «կասկածյալի» կամ «մեղադրյալի» առկայությամբ, քանի որ այդ պայմանը վնասում է ԱԱԾ-ի՝ որպես ՓԼ/ԱՖ գործեր քննելու լիազորությամբ օժտված մարմնի կողմից իր գործառույթների պատշաճ կատարմանը, ինչպես նաև արգելակում նման տեղեկությունների ստացումն այն գործերով, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց, կամ երբ տեղեկությունները վերաբերում են «կասկածյալից» կամ «մեղադրյալից» զատ այլ անձի, - Փոփոխել ԲԳՕ-ն՝ ՖՀ-ներին թույլատրելով ֆինանսական գաղտնիքի համարվող տեղեկություններ փոխանակել այն դեպքերում, երբ դա պահանջվում է Հ.7-ով, Հ.9-ով կամ ՀՀ.VII-ով:
3.5. Տեղեկատվության պահպանում և դրամական փոխանցումների վերաբերյալ կանոններ (Հ.10 և ՀՀ.VII)	- Նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգում կամ պարտադիր կատարման ենթակա այլ ուղեցույցերում հստակեցնել «գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմաններ» (որոնց նկատմամբ տարածվում են տեղեկություններ պահպանելու պահանջները) հասկացությունն այն դեպքի համար, երբ գործարքը պայմանագիր չէ, - Օրենքով կամ այլ իրավական ակտերով պահանջել, որպեսզի հաճախորդի նույնականացման համար սահմանվող՝ դրամական փոխանցման նվազագույն շեմի գումարը համարժեք լինի 1,000 եվրոյի/ԱՄՆ դոլարի: Այդկերպ, հաշվի առնելով փոխարժեքի լողացող բնույթը, հաշվետվություն տրամադրող անձինք կարող են ապահովել նվազագույն շեմի համապատասխանությունը

	ստանդարտին:
3.6. Գործարքների և հարաբերությունների մոնիտորինգը (Հ.11 և 21)	- ՖՀ-ների համար սահմանել հստակ և ուղղակի պահանջ՝ հնարավորինս ուսումնասիրելու բարդ, անսովոր մեծ գործարքների և տնտեսական կամ այլ իրավաչափ ակնհայտ նպատակ չունեցող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալները և նպատակը՝ ինչպես պահանջվում է սույն հանձնարարականով, - Սահմանել պահանջ, որի համաձայն բարդ և անսովոր մեծ գործարքների ուսումնասիրությունների բացահայտումները կպահպանվեն առնվազն հինգ տարի՝ անհրաժեշտության դեպքում նաև աուդիտորներին տրամադրելու համար, - Իրականացնել լրացուցիչ վերապատրաստում, հատկապես ոչ բանկային ՖՀ-ների համար, որպեսզի առանձնակի ուշադրություն դարձվի անսովոր, մեծ և բարդ համարվող բոլոր գործարքներին՝ անկախ օֆշորային ցանկերից և ՄԱԿ-ի հրապարակած ցանկերից, - ՖՀ-ների համար սահմանել հետևյալ պահանջը. i) հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրել ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, ii) փաստաթղթավորել բացահայտումները, և iii) արդյունքները գրավոր տրամադրել իրավասու մարմիններին և աուդիտորներին:
3.7. ԿԳՀ-ներ և այլ հաշվետվություններ (Հ.13, Հ.14, Հ.19, Հ.25 և ՀՀ.IV)	- Հաշվետվություն տրամադրող անձանց համար կազմակերպել լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ՝ ապահովելու նրանց աշխատակիցների տեղեկացվածությունն օրենքով նախատեսվող պարտավորությունների մասին: Վերապատրաստումը պետք է, մասնավորապես, ներառի կասկածելի գործարքների հայտնաբերման և դրանց վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման թեմաները, անդրադառնա

	տիպաբանություններին և միտումներին (տարբերակված ըստ գործունեության տեսակի, հատկապես ՆՈՖԳՏՄ-ների համար), - Իշխանությունները պետք է ընդունեն ուղեցույցներ սառեցման պարտավորությունների և ԱՖ հետ կապված տիպաբանությունների վերաբերյալ:
3.8. Ներքին հսկողության մեխանիզմներ, համապատասխանություն, աուդիտև օտարերկրյա մասնաճյուղեր (Հ.15 և Հ.22)	- ՖՀ-ներից պահանջել՝ ապահովելու ՓԼ և ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին ընթացակարգերի, կանոնակարգերի և հսկողական մեխանիզմների սահմանումը և պահպանումը՝ հաշվի առնելով ՓԼ և ԱՖ ռիսկը, ինչպես նաև նրանց գործարար գործունեության չափերը, - Փոփոխել իրավական ակտերը՝ սահմանելու ուղղակի և կոնկրետ դրույթ, որով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին համապատասխանության ստորաբաժանմանը/աշխատակցին հնարավորություն կընձեռվի ժամանակին ստանալու ՀՊՈՒ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, գործարքների մասին տվյալները և վերաբերելի այլ տեղեկություններ, - Ներդնել ՖՀ-ների կողմից բոլոր աշխատակիցների նախնական ստուգման ֆորմալ ընթացակարգեր, հատկապես այն աշխատակիցների, որոնց գործունեության ոլորտն առնչվում է ՓԼ/ԱՖ կանխարգելմանը: Ֆորմալ այդ ընթացակարգերը պետք է ուղղված լինեն աշխատակիցների աշխատանքի ընդունելիս բարձր չափանիշների ապահովմանը, - Ապահովել ՖՀ-ներում ներքին աուդիտի անկախ և համարժեք ռեսուրսներով ապահովված գործառույթի պահպանումը, հատկապես երբ աուդիտի գործառույթը վերապահված/հանձնարարված է ներքին աուդիտորից բացի այլ աշխատակիցների, - Աշխատակիցների լրացուցիչ ուսուցում իրականացնել ՓԼ/ԱՖ կանխարգելման բոլոր թեմաներով, մասնավորապես՝ Հ.11-ի պահանջների առնչությամբ, - Ապահովել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի և դրանից բխող

	իրավական այլ ակտերի պահանջների արդյունավետ կատարումը ՖՀ-ների կողմից:
3.9. Կեղծ բանկեր (Հ.18)	- Հստակեցնել «կեղծ բանկի» սահմանումն այնպես, որ համապատասխանի ՖԱԹՖ-ի ստանդարտին:
3.10.Վերահսկողության և հսկողության համակարգ. իրավասու մարմիններ և ԻԿԿ-ներ: Դերը, գործառույթները, պարտականությունները և իրավասությունները (ներառյալ՝ պատժամիջոցները) (Հ.23, Հ.29, Հ.17 և Հ.25)	- Կատարելագործել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերահսկողությունը՝ վերահսկողության ընդհանուր շրջափուլի մեջ ներառելով ռիսկայնության վրա հիմնված բաղկացուցիչներ, ինչպես նաև, մասնավորապես, թարմացնել վերահսկողական ստուգումների ընթացակարգերը՝ դրանցում արտացոլելու ռիսկայնության վրա հիմնված վերահսկողության մոտեցումը և «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թ.) օրենքի պահանջները, - Ապահովել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջների համարժեք բավարարումը ՖՀ-ների, մասնավորապես՝ վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի և դրամական փոխանցումներ իրականացնողների կողմից, - Իրականացնել բանկերի, վարկային կազմակերպությունների, դրամական փոխանցումներ իրականացնողների և արժեթղթերի/ներդրումային ընկերությունների կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների բավարարման հաճախակի և անընդհատ ստուգումներ, - Թարմացնել բոլոր ոլորտների ՓԼ/ԱՖ կանխարգելման վերստուգման ընթացակարգերը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» նոր (2008 թ.) օրենքի պահանջներին համահունչ, - Լրացուցիչ ուղեցույցներ/ուղղորդում տրամադրել ՖՀ-ների, մասնավորապես՝ հետևյալ ոլորտներում. - Հաճախորդների տվյալների կամ տեղեկատվության թարմացման պատշաճ ժամկետների սահմանում, և

	- Սովորական հաճախորդների հետ գործարար հարաբերությունների ընթացքում անընդհատ պատշաճ ուսումնասիրության իրականացում և ՔԱՈՒԱ-ների հետ գործարար հարաբերությունների հավելյալ անընդհատ դիտազննում:
3.11. Փողի կամ արժեքների փոխանցման ծառայություններ (ՀՀ.VI)	- Հետամուտ լինել դրամական փոխանցումներ իրականացնող այն անձի գործունեությանը, որն ըստ երևույթին ոչ ֆորմալ կարգով գործում է ֆինանսական համակարգում՝ առանց ՀՀ ԿԲ-ի գրանցման և հաստատման:
4. Կանխարգելիչ միջոցներ. ՆՈՖԳՏՄ-ներ	
4.1. ՀՊՈՒ և տեղեկատվության պահպանում (Հ.12)	- Վերացնել այն նվազագույն շեմը, որով բաժնետոմսերի առուվաճառքի պարագայում սահմանափակվում է ՀՊՈՒ-ն նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ, - Ներդնել ուղեցույցներ խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց համար՝ ապահովելու ՀՊՈՒ պահանջների կիրառությունն այն գործարքների նկատմամբ, որոնց համախառն արժեքը հավասար է սահմանված նվազագույն շեմին կամ գերազանցում է այն, - ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ ստանալու տեղեկություններ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի մասին՝ անկախ գործարքը բարձր ռիսկային համարելու կամ չհամարելու հանգամանքից, - ՆՈՖԳՏՄ-ների համար ներդնել ուղեցույցներ՝ ապահովելու ՀՊՈՒ անցկացման հետևողական համակարգի առկայությունը՝ հաշվի առնելով ՆՈՖԳՏՄ-ների գործունեության բնույթով, շրջանակով և էությամբ պայմանավորված վտանգները և

	խոցելիությունը, ինչպես նաև սահմանել հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների թարմացման հաճախականությունը, - Սահմանել բարձր ռիսկային հաճախորդների, գործարար հարաբերությունների կամ գործարքների հավելյալ ուսումնասիրության անցկացման, ինչպես նաև ցածր ռիսկային հաճախորդների, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ հաճախորդների նկատմամբ պարզեցված/ նվազեցված ՀՊՈՒ միջոցառումների կիրառության պահանջներ և ուղենիշներ, - Ուղղակիորեն արգելել նվազեցված ՀՊՈՒ միջոցառումների կիրառությունը ՓԼ/ԱՖ կասկածի առկայության կամ բարձր ռիսկային սցենարների դեպքում, - Ներդնել ուղեցույցներ, որոնք ՆՈՖԳՏՄ-ներին կօգնել պարզել, թե գործարար հարաբերություն հաստատելու ժամանակ հաճախորդի ինքնությունը պարզելիս ինչ է համարվում «ողջամիտ ժամկետ», - Սահմանել ուղղակի պահանջ՝ ընդունելու ռիսկերի կառավարման արդյունավետ ընթացակարգեր այն իրավիճակների վերաբերյալ, որոնց առկայության դեպքում հաճախորդին թույլատրվում է գործարար հարաբերությունից օգտվել նախքան ՀՊՈՒ ստուգումն ավարտելը, - Սահմանել ուղղակի պահանջ՝ առկա հաճախորդների նկատմամբ էականության և ռիսկայնության հիման վրա իրականացնելու ՀՊՈՒ միջոցառումներ, ներառյալ՝ առկա հարաբերությունների պատշաճ ուսումնասիրությունների իրականացումը համապատասխան պարբերականությամբ, - Օրենքով, կանոններով կամ պարտադիր կատարման ենթակա այլ միջոցներով նախատեսել գործարար հարաբերություն հաստատելու ժամանակ և հարաբերության ողջ ընթացքում ՀՊՈՒ պահանջների կիրառությունը ՔԱՈՒԱ-ների նկատմամբ, - Սահմանել պահանջներ՝ ապահովելու բարդ կամ անսովոր մեծ գործարքների, ինչպես նաև ակնհայտ

	տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներ չհետապնդող՝ անսովոր պայմաններով գործարքների նախադրյալների և նպատակի ուսումնասիրությունների բացահայտումների գրավոր մանրակրկիտ ձևակերպումը և տվյալ ոլորտի մասնակիցների իրազեկության բարձրացման արդյունավետ և պատշաճ միջոցառումների իրականացումը՝ ՓԼ և ԱՖ միտումների փոփոխությունների վերաբերյալ տիպաբանությունների հրապարակմամբ կամ այլ կերպ, - Սահմանել կոնկրետ պայմաններ, որոնց պահպանմամբ ՆՈՖԳՏՄ-ներն իրավասու են ՀՊՈՒ միջոցառումները կատարել երրորդ անձանց կամ միջնորդների միջոցով, - Իրականացնել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 21-րդ հոդվածը (ներքին իրավական ակտեր) և 23-րդ հոդվածի 2-րդ մասը (ՓԼ և ԱՖ դեմ պայքարի համակարգերի և հսկողության մեխանիզմների համապատասխանության արտաքին աուդիտ) 10-ից պակաս աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-ների նկատմամբ չտարածելու հետ կապված ռիսկերի և հետևանքների վերլուծություն, - Կատարել ագործել տեղեկատվության պահպանման ոլորտում ՆՈՖԳՏՄ-ներին ներկայացվող պահանջները և նրանց պրակտիկան՝ արդյունավետությունը և հիմնավորվածությունն ապահովելու, ինչպես նաև կիրառության մեջ քննության շահերին չվնասելու նպատակով, քանի որ, հաշվի առնելով գործարար հարաբերությունների և գործարքների հետ կապված տեղեկատվության կարևորությունը, իշխանություններին անհրաժեշտ է տեղեկատվության պահպանման ստանդարտների և որակի հարցերին անդրադառնալ ռիսկերը նվազեցնելու տեսակետից՝ միաժամանակ փորձելով ԻՊՄ-ներին և վերահսկող մարմիններին բավարար չափով տրամադրել ՓԼ/ԱՖ գործերի քննության մեջ օգտագործվող արժանահավատ տվյալներ:
4.2. ԿԳՀ (Հ.16)	- Հաստատեցնել գաղտնիության և

	պաշտպանության մասին նորմերի անհամապատասխանությունները նոտարների, փաստաբանների, իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և աուդիտորների, ինչպես նաև հաշվապահական և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց մասով՝ բացառելու սույն հաշվետվության այլ մասերում նշված կամայականության հնարավորությունը, մասնավորապես՝ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու պարտավորության մասով, ինչպես նաև՝ սահմանել համակարգված ստուգումների միջոցառումներ, որոնց միջոցով կփարատվեն համապատասխան օրենքների անորոշությունից բխող մտահոգությունները, - Ներդնել աշխատակիցների նախնական ստուգման, այդ թվում՝ «պատշաճության» և համապատասխանության» պահանջներ, - Հաստատել թանկարժեք քարերի կամ մետաղների դիլերների կողմից հաշվետվությունների տրամադրման կարգը և կասկածելի գործարքների համապատասխան տիպաբանությունները ՆՈՖԳՏՄ-ների համար, - Վերահսկողության, ուսուցման և այլ միջոցներով իրականացնել իրազեկության բարձրացման ծրագրեր՝ ապահովելու ԿԳՀ-ներ և ՆՇԳՀ-ներ տրամադրելու պարտավորությունների հստակ տարբերակումը, մասնավորապես՝ հասկանալի դարձնելով ԿԳՀ տրամադրելու պարտավորության կիրառելիությունն անկախ նվազագույն շեմից, գործարք կատարելու փորձի և հարկային խնդիրների առնչությամբ կասկածելի համարվող գործարքների վերաբերյալ նույնպես ԿԳՀ տրամադրելու պարտավորությունը, - Նպաստել ՆՈՖԳՏՄ-ների, այդ թվում՝ համապատասխանության պատասխանատուների ուսուցմանը՝ կազմակերպելով ուղղակի կամ հավաստագրված դասընթացներ համապատասխան ծառայություններ

	մատուցողների, այդ թվում՝ ԻԿԿ-ների միջոցով, ինչպես նաև ապահովել ընթացիկ վերապատրաստման պահանջների արտացոլումն օրենքում, կանոններում կամ կանոնակարգերում, - Ներդնել ռիսկերի կառավարման իսկողական մեխանիզմներ՝ ապահովելու համապատասխանության գործառույթի կատարման բավարար չափով ապահովվածությունն աշխատակիցներով, և հաղթահարելու համապատասխանության պատասխանատուի մոտ համապատասխանության գործառույթի և ընթացիկ աշխատանքային այլ գործառույթների միջև ծագող հակասությունները, - Բարձրացնել ՆՈՖԳՏՄ-ների իրազեկությունն օֆշորային տարածքների հրապարակված գործող ցանկի վերաբերյալ, ինչպես նաև ներդնել միջոցառումներ, որոնցով ՆՈՖԳՏՄ-ները կտեղեկացվեն այլ պետություններում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի թերությունների շուրջ առկա մտահոգությունների մասին, - Սահմանել պահանջներ ՆՈՖԳՏՄ-ների համար՝ ապահովելու նրանց ներքին իրավական ակտերի վերաբերելիությունը համապատասխանության համակարգերին և իսկողական մեխանիզմներին՝ պարզապես «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի դրույթներն արտատպելու փոխարեն, - ՆՈՖԳՏՄ-ների համար սահմանել ուղղակի պահանջ՝ հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելու ՖԱԹՖ-ի հանձնարարականները չկիրառող կամ բավարար չափով չկիրառող պետություններից գործող կամ նման պետություններում գտնվող անձանց հետ գործարքների նախադրյալները և նպատակը, գրավոր փաստաթղթավորելու բացահայտումները և արդյունքները գրավոր տրամադրելու իրավասու մարմիններին և աուդիտորներին:
4.3. Կարգավորում, վերահսկողություն, մոնիտորինգ և	- Արդյունավետ մոնիտորինգ և ռիսկերի նկատմամբ զգայունության վրա հիմնված

պատժամիջոցներ (Հ.17, Հ.24, և Հ.25)	համապատասխանություն ապահովելու նպատակով անկախ իրավաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունների, անկախ հաշվապահների և հաշվապահական ընկերությունների, թանկարժեք մետաղների դիլերների և թանկարժեք քարերի դիլերների մասով իրավասու մարմիններին կամ ԻԿԿ-ներին լիազորել՝ իրականացնելու մոնիտորինգ և ստուգելու նրանց համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին, - Ներդնել փաստաբանների գործունեության նկատմամբ վերահսկողության ռեժիմ, - Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց համար ներդնել ղեկավարության, սեփականատերերի և իրական շահառուների «պատշաճության և համապատասխանության» ստուգումներ: Ավելին, օրենքով, կանոններով կամ կանոնակարգերով սահմանել պահանջներ, որոնցով կկանխվի խաղատան կամ շահումով խաղ կազմակերպող անձի սեփականության մեջ հանցագործների կամ նրանց հանցակիցների նշանակալից մասնակցություն ունենալը կամ իրական շահառու լինելը, կառավարչական գործառույթ կատարելը կամ խաղատան կամ շահումով խաղ կազմակերպող անձի օպերատոր լինելը, - Վերահսկողություն իրականացնող մարմիններում ապահովել ՓԼ և ԱՖ հարցերով զբաղվող բավարար կադրերի և տեխնիկական կարողությունների առկայությունը, - ՆՈՖԳՏՄ-ների համար ընդունել ուղեցույցներ, որոնք կօգնեն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պարտավորությունների լիարժեք ներդրման և կատարման հարցում, - Մշակել հետադարձ արձագանքի պատշաճ գործընթացներ՝ հաշվի առնելով բացահայտումների թվաքանակը և արդյունքները, նորագույն հնարքները, մեթոդները և միտումները, ինչպես նաև ՆՈՖԳՏՄ-ների պարագայում հնարավոր ՓԼ

	գործերի առանձնահատկությունները:
4.4. Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակներ և մասնագիտություններ (Հ.20)	- Իրականացնել ռիսկերի գնահատում՝ պարզելու, թե արդյոք ոչ ֆինանսական գործունեության այլ տեսակների և մասնագիտությունների պարագայում առկա է ՓԼ կամ ԱՖ նպատակով դրանց չարաշահման ռիսկ, - Միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու կանխիկի գործածությունը տնտեսության մեջ և խրախուսելու ավելի մեծ ծավալով գործառնությունների իրականացումը տնտեսության ֆորմալ հատվածում:
5. Իրավաբանական անձինք և կազմավորումներ, ՇՆՉԿ-ներ	
5.1. Իրավաբանական անձինք. իրական շահառուների և հսկողություն իրականացնող անձանց մասին տվյալների հասանելիություն (Հ.33)	- Ապահովել «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքի 23.1-րդ հոդվածի արդյունավետ իրագործումը, - Փոփոխություններ կատարել քաղաքացիական օրենսգրքի 157-րդ հոդվածում՝ վերացնելով «ըստ ներկայացնողի» բաժնետոմսերի վերաբերյալ նշումը, - Իշխանությունները պետք է դիտարկեն Պետական ռեգիստրի բոլոր տարածքային ստորաբաժանումները կապակցող, «ուղիղ ժամանակի» ռեժիմով աշխատող էլեկտրոնային շտեմարանի ստեղծման նպատակահարմարությունը, որը հանրությունը, ինչպես նաև ՖՀ-ներին և ԻՊՄ-ներին հնարավորություն կընձեռի արագորեն ստանալ ռեգիստրում պահպանվող բոլոր տեղեկությունները:
5.2. Իրավաբանական կազմավորումներ. իրական շահառուների և հսկողություն իրականացնող անձանց մասին տվյալների հասանելիությունը (Հ.34)	Ո/Կ
5.3. ՇՆՉԿ-ներ (ՀՀ.VIII)	- Ապահովել պարբերական գնահատումների անցկացումը՝

	ուսումնասիրելով ահաբեկչական գործունեության նկատմամբ ոլորտի հնարավոր խոցելի կետերի մասին ի հայտեկող նոր տեղեկությունները, - Ներդնել ԱՖ նպատակով ԾՆՉԿ-ների չարաշահման ռիսկերի և դրանցից պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ ԾՆՉԿ-ների իրազեկության բարձրացման ծրագրեր, - Պատշաճ ռեսուրսներ և տեխնիկական կարողություններ ուղղորդել դեպի ԾՆՉ հատված՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ԱՖ ռիսկերին:
6. Ներպետական և միջազգային համագործակցություն	
6.1. Ներպետական համագործակցություն և համակարգում (Ռ.31)	- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ռազմավարության հստակեցման նպատակով իրականացնել ՓԼ/ԱՖ ռիսկերի ընթացիկ վերլուծություն, - Կարգավորվող հաստատությունների հետ խորհրդակցությունների և իրազեկության բարձրացման լրացուցիչ կամ այլընտրանքային մեխանիզմներ՝ կամ ներկայումս գոյություն ունեցող, կամ այլ միջոցներով, - Կայացված որոշումների արդյունավետության և դրանցից բխող քաղաքականության լիարժեք իրագործման վերահսկում:
6.2 Կոնվենցիաներ և ՄԱԿ-ի հատուկ բանաձևեր (Ռ.35 և ՀՌ.I)	- Նախատեսել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն, - Բռնագրավման իրավասությունը սահմանել Պալերմոյի կոնվենցիայով սահմանված բոլոր հանցագործությունների համար, - Նախատեսել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ միախառնված օրինական գույքի, ինչպես նաև հանցագործության կատարման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների առգրավման հնարավորությունը՝ ինչպես սահմանված է Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով, - Իրավապահ մարմիններին կամ դատարաններին վերապահել

	ընդհանուր իրավասություն՝ պարտադրել ներկայացնելու ֆինանսական փաստաթղթեր, այդ թվում՝ այն գործերով, որոնց համար տեղեկատվություն է պահանջվում վկայից կամ այլ՝ տուժող, հայցվոր, կասկածյալ կամ մեղադրյալ չհանդիսացող անձանցից, - ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի ԻՊՄ-ները հնարավորություն ունենան արդյունավետորեն ստանալ և պարտադրել՝ ներկայացնելու ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ, գործարքի փաստաթղթեր, հաշիվների կամ այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի, - Արժույթի և ըստ ներկայացնողի (վճարային) գործիքների անդրսահմանային ֆիզիկական տեղափոխման հայտարարագրման համակարգի գործողությունը տարածել նաև փոստով կամ բեռնափոխադրման եղանակով իրականացվող արտագնա տեղափոխման նկատմամբ, - ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով լրացուցիչ կոնկրետ ուսուցում կազմակերպել ԱԱԾ-ի քննչական վարչության աշխատակիցների համար, - ԱՖ հանցակազմը սահմանել «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայով նախատեսված սահմանմանը համահունչ, - Ներդնել համարժեք մեխանիզմներ, որոնց միջոցով կապահովվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1267 և 1373 բանաձևերի պահանջների բավարարումը:

6.3. ՓԻՕ (Հ.36, Հ.37, Հ.38 և ՀՀ.V)	- Կանխարգելիչ և բռնագրավման միջոցների կապակցությամբ ՀՀ օրենսդրության մեջ հայտնաբերված թերությունները պետք է վերացվեն, քանի որ դրանք կարող են սահմանափակել օտարերկրյա պետությունների հարցումների հիման վրա նման միջոցներ ձեռնարկելու՝ ՀՀ-ի կարողությունը: Օրինակ, իշխանությունները պետք է հնարավորություն ունենան բռնագրավել ցանկացած նախորդող հանցագործության կատարման արդյունքում ձեռք բերված գույքը, կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, ինչպես նաև՝ առգրավել ՓԼ, ԱՖ կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ձեռք բերված գույքին կամ կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքներին համարժեք այլ գույք, - ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, ինչպես նաև՝ ապահովելու նման տվյալներ ստանալու վերաբերյալ ՓԻՕ հարցումների լիարժեք կատարման հնարավորությունը, - Հստակեցնել, թե արդյոք ՓԻՕ տրամադրելու համար պահանջվում է «կրկնակի քրեականացում»՝ պարզելու համար, թե արդյոք ՓԼ և ԱՖ հանցագործությունների կապակցությամբ Հ.1-ի և Հ.2-ի, ինչպես նաև ՀՀ.II-ի վերլուծությունների մեջ նշված թերությունները կարող են սահմանափակել որոշակի իրավիճակներում օգնություն տրամադրելու՝ ՀՀ-ի կարողությունը, ներառյալ, մասնավորապես, իրավաբանական անձանց դեմ իրականացվող վարույթներում ՓԻՕ տրամադրելու կարողությունը:
6.4. Անձի հանձնում (Հ.39, Հ.37	- Վերացնել ԱՖ

և ՀՀ.V)	հանցագործությունների սահմանումների թերությունները, որպեսզի «կրկնակի քրեականացման» պահանջը չսահմանափակի ԱՖ գործերով անձանց հանձնելու՝ ՀՀ-ի կարողությունը:
6.5. Համագործակցության այլ ձևեր (Ո.40 և ՀՀ.V)	- Հստակեցնել մասնագիտական գաղտնիքի մասին նորմերը, որոնք կարող են սահմանափակել տեղեկություններ ստանալու կամ տեղեկությունների տրամադրում պարտադրելու՝ ՖԴԿ-ի կարողությունը, - ԲԳՕ-ի 10-րդ հոդվածը ներդաշնակեցնել ՕՀԳՕ-ի 29-րդ հոդվածին, ինչպես նաև՝ ԲԳՕ-ի 13.1-րդ հոդվածը՝ «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» օրենքի 13-րդ հոդվածին, որպեսզի ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության վերաբերյալ դրանք նախատեսեն միևնույն պայմանները, և որպեսզի ԻՊՄ-ները հնարավորություն ունենան արդյունավետորեն ստանալ և պարտադրել՝ ներկայացնելու ֆինանսական գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տեղեկություններ, գործարքի փաստաթղթեր, հաշիվների կամ այլ փաստաթղթեր կամ տեղեկություններ, հատկապես այն դեպքերում, երբ դեռևս ի հայտ չի բերվել կոնկրետ կասկածյալ, կամ երբ պահանջվող տեղեկությունները վերաբերում են կասկածյալից բացի որևէ այլ անձի:
7. Այլ խնդիրներ	
7.1. Ռեսուրսներ և վիճակագրություն (Ո.30 և Ո.32)	- Գտնել և ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ, որոնց միջոցով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակում կապահովվի թե տեղերում անցկացվող ստուգումների, թե փաստաթղթային վերահսկողության համարժեք մակարդակ, - Դիտարկել ՖԴԿ-ին լրացուցիչ ռեսուրսներ տրամադրելու նպատակահարմարությունը, - ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով կոնկրետ ուսուցում իրականացնել ԱԱԾ-ի քննչական վարչության պաշտոնատար անձանց, ինչպես նաև մաքսային մարմնի հետաքննության և

	նախաքննության վարչությունների աշխատակիցների համար, - Վարել ճշգրիտ վիճակագրություն:
7.2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի այլ կարևոր միջոցառումներ կամ խնդիրներ	-
7.3. Ընդհանուր համակարգ. կառուցվածքային խնդիրներ	-

3.2. Հավելված 2. ԵՄ համապատասխան իրավական դրույթներ

Քաղվածք Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2005/60/EC դիրեկտիվից, որը պաշտոնապես ընդունվել է 2005թ.-ի սեպտեմբերի 20-ին և վերաբերում է ՓԼ/ԱՖ նպատակով ֆինանսական համակարգի չարաշահման կանխարգելմանը:

ԵՄ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2005/60/EC դիրեկտիվի (Երրորդ դիրեկտիվ) 3(6) հոդված.

6) «իրական շահառու» այն ֆիզիկական անձն է (անձինք), ով վերջին հաշվով հանդիսանում է հաճախորդի և/կամ այն ֆիզիկական անձի սեփականատերը կամ նրանկատմամբ վերահսկողություն իրականացնողը, ում անունից իրականացվում է գործարք կամ գործունեություն: Իրական շահառուն ներառում է առնվազն հետևյալ անձանց.

(ա) Իրավաբանական անձանց պարագայում.

(i) ֆիզիկական անձը, ով իրավաբանական անձի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի սեփականության իրավունքների կամ իրավաբանական անձի բաժնետոմսերի կամ քվեարկելու իրավունքների, ներառյալ՝ տվյալ իրավաբանական անձի «ըստ ներկայացնողի» բաժնետոմսերի սեփականության իրավունքների կամ քվեարկության իրավունքների բավականաչափ մեծ տոկոսաբաժնի վերահսկողության

միջոցով վերջին հաշվով հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի սեփականատերը կամ նրանկատմամբ վերահսկողություն իրականացնողը, բացառությամբ կարգավորվող շուկայում ցուցակված ընկերությունների, որոնց նկատմամբ ԵՄ օրենսդրության համաձայն տարածվում են բացահայտման պահանջները կամ համարժեք միջազգային

ստանդարտներ. այս չափորոշիչը կատարված համարելու համար բավարար է 25% գումարած մեկ բաժնետոմսը,

(ii) ֆիզիկական անձ, ով այլ կերպ վերահսկողություն է իրականացնում իրավաբանական անձի ղեկավարության նկատմամբ:

(բ) Իրավաբանական անձանց պարագայում, ինչպիսիք են հիմնադրամները և իրավաբանական կազմավորումները, ներառյալ՝ տրաստերը, որոնք կառավարում և տեղաբաշխում են միջոցներ.

(i) այն դեպքում, երբ ապագա շահառուներն արդեն որոշվել են, այն ֆիզիկական անձը, ով հանդիսանում է իրավաբանական կազմավորման կամ իրավաբանական անձի գույքի 25 կամ ավելի տոկոսի շահառուն,

(ii) այն դեպքում, երբ դեռ չեն որոշվել իրավաբանական կազմավորումից կամ իրավաբանական անձից շահ ստացող ֆիզիկական անձինք, այն անձանց դասը, ում հիմնական շահն իրավաբանական կազմավորման կամ իրավաբանական անձի ստեղծումը կամ գործունեության ծավալումն է,

(iii) ֆիզիկական անձը, ով վերահսկողություն է իրականացնում իրավաբանական կազմավորման կամ իրավաբանական անձի գույքի 25 կամ ավելի տոկոսի նկատմամբ:

ԵՄ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2005/60/EC դիրեկտիվի (Երրորդ դիրեկտիվ) 3(8) հոդված.

(8) «Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք» այն անձինք են, ում ներկայումս կամ անցյալում վերապահվել են կարևոր հանրային գործառույթներ, ինչպես նաև նրանց անմիջական ընտանիքի անդամները կամ այլ անձինք, ովքեր հայտնի են որպես նման անձանց հետ սերտորեն փոխկապակցված անձինք:

Քաղվածք Հանձնաժողովի 2006 թ. օգոստոսի 1-ի 2006/70/EC դիրեկտիվից, որով ամրագրվում են Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2005/60/EC դիրեկտիվի իրագործումն ապահովող միջոցառումները «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» եզրույթի սահմանման, հաճախորդի պատշաճ ուսումնասիրության պարզեցված ընթացակարգի կիրառության տեխնիկական չափորոշիչների, ինչպես նաև հազվադեպ կամ շատ սահմանափակ չափով իրականացվող ֆինանսական գործունեության նկատմամբ որոշակի պահանջներ չկիրառելու տեխնիկական չափորոշիչների մասով:

Հանձնաժողովի 2006/70/EC դիրեկտիվի (Իրականացման դիրեկտիվ) 2-րդ հոդված.

Հոդված 2

Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք

1. 2005/60/EC դիրեկտիվի 3(8) հոդվածի իմաստով, «ֆիզիկական անձինք, ում ներկայումս կամ անցյալում վերապահվել են կարևոր հանրային գործառույթներ» ներառում են.

(ա) պետությունների, կառավարությունների ղեկավարներին, նախարարներին, նրանց տեղակալներին, փոխնախարարներին,

(բ) խորհրդարանի անդամներին,

(գ) գերագույն դատարանների, սահմանադրական դատարանների կամ այլ այնպիսի բարձր դատական ատյանների անդամներին, որոնց որոշումները հետագա բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ սահմանված բացառիկ դեպքերի,

(դ) վերահսկիչ պալատների կան կենտրոնական բանկի խորհրդի անդամներին,

(ե) դեսպաններին, գործերի հավատարմատարներին և զինված ուժերի բարձրաստիճան սպայական անձնակազմին,

(զ) պետությանը պատկանող ձեռնարկությունների կառավարման, ղեկավարման կամ վերահսկողության մարմինների անդամներին:

Առաջին պարբերության (ա)-(զ) կետերում թվարկված խմբերից ոչ մեկը չի ներառում միջին դասի կամ ավելի կրտսեր պաշտոնյաներին:

Առաջին պարբերության (ա)-(ե) կետերում թվարկված խմբերը համապատասխան դեպքերում ներառում են Եվրոպական Ընկերակցության և միջազգային մակարդակով զբաղեցված պաշտոնները:

2. 2005/60/EC դիրեկտիվի 3(8) հոդվածի իմաստով, «ընտանիքի անմիջական անդամները» ներառում են.

(ա) կնոջը/ամուսնուն,

(բ) ցանկացած զուգընկերոջ, ով ազգային օրենսդրությամբ համարվում է կնոջը/ամուսնուն համարժեք,

(գ) երեխաներին, նրանց կանանց/ամուսիններին և զուգընկերներին,

(դ) ծնողներին:

3. 2005/60/EC դիրեկտիվի 3(8) հոդվածի իմաստով, «անձինք, ովքեր հայտնի են որպես սերտորեն փոխկապակցված անձինք» ներառում են.

(ա) ցանկացած ֆիզիկական անձի, ով հայտնի է որպես իրավաբանական անձանց կամ իրավաբանական կազմավորումների կամ այլ սերտ գործարար հարաբերությունների՝ առաջին պարբերության մեջ թվարկված անձանցից որևէ մեկի հետ միասին համատեղ իրական շահառու,

(բ) ցանկացած ֆիզիկական անձի, ով հանդիսանում է այնպիսի իրավաբանական անձի կամ իրավաբանական կազմավորման իրական շահառուն, որի վերաբերյալ հայտնի է, որ այն ստեղծվել է փաստացի ի շահ 1-ին պարբերության մեջ նշված անձի:

4. Չսահմանափակելով ռիսկի նկատմամբ զգայունության հիման վրա հաճախորդի հավելյալ պատշաճ ուսումնասիրության միջոցառումների իրականացումն այն դեպքերում, երբ սույն հոդվածի առաջին պարբերության իմաստով անձին վերապահված կարևոր հանրային գործառույթի գործողությունը դադարել է առնվազն մեկ տարի առաջ, այնուհանդերձ, 2005/60/EC դիրեկտիվի 2(1) հոդվածում նշված

հաստատությունները և անձինք պարտավոր չեն այդ անձին համարել քաղաքական ազդեցություն ունեցող անձ:

3.3. Հավելված 3. Հապավումներ

ԱԱԾ	Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ՀՀ ԱՆ	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
ԱՖ	Ահաբեկչության ֆինանսավորում
ԲԳՕ	«Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
ԵԱԽ	Եվրասիական խումբ
ԻԿԿ	Ինքնակարգավորվող կազմակերպություն
ԻՊՄ	Իրավապահ մարմիններ
Կանոնակարգ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ՖՀ-ների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը և գործարքում իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին
ԿԳՀ	Կասկածելի գործարքի մասին հաշվետվություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՊՈՒ	Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿԱԽ	Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ
ՆԾԳՀ	Նվազագույն շեմը գերազանցող գործարքի մասին հաշվետվություն
ՆՈՖԳՏՄ	Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակներ և մասնագիտություններ
ԾՆՉԿ	Ծահություն ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն
ՊԵԿ	Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե
ՌՌՎ	Ռիսկերի ռազմավարական վերլուծություն
ՌՎՀՄՈՒ	Ռիսկերի վրահիմնված մոտեցման ուղեցույց
ՓԻՕ	Փոխադարձ իրավական օգնություն

ՓԳՀ	Հայաստանի Հանրապետության փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի երրորդ փուլի փոխադարձ գնահատման հաշվետվություն
ՓԼ	Փողերի լվացում
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ՓԼ/ԱՖ	Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում
ՔԱՈՒԱ	Քաղաքական ազդեցություն ունեցող անձ
ՔԴՕ	Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք
ՔՕ	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք
ՕՀԳՕ	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
ՖԱԹՖ	Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ
ՖԴԿ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն
ՖՎՎ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչություն
ՖՀ	Ֆինանսական հաստատություն
ՖՀՄ	Ֆինանսական հետախուզության մարմին
ՀՀ ՖՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն